Էջմիածին



ՌՆԸ

ԺԵ ՏԱՐԻ

Սեպտեմբեր

ԷՋՄԻԱԾԻՆ

998

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Թ

1958



ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԱՑ ԱՒԱԶՆԻՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԸ

Սեպտեմբեր ամսի առաջին օրերին, Մայր Արոռ Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանը նորից իր դռները բացեց մեր ժողովրդի հոգևոր ծառայության նվիրված ուսումնատենչ և եկեղեցանվեր հոգիների առաջ՝ նրանց բաշխելու համար հավատ, գիտություն և հայոց պատմության շունչն ու ոգին:

Հոգևոր ճեմարանի 1958—1959 ուսումնական տարին բացվեց աղոթքով ու խնկով, հայրապետական օրհնությամբ և մաղթանքներով, որպեսզի Տերը Իր աստվածային շնորհներով աճեցնի և պտղաբեր դարձնի ճեմարանի հոգևոր-իմացական հունը, «ընդ միոյ երեսուն, ընդ միոյ վաթսուն և ընդ միոյ հարիւր»:

Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ և Հոգևոր ճեմարանի վերատեսչության ջանքերով ճեմարանը 1958—1959 ուսումնական տարին դիմավորում է նախորդ տարիներից ավելի կազմակերպված և նախապատրաստված:

Հոգևոր ճեմարանի ուսումնական պլանում, Վեհափառ Հայրապետի ցուցումներով և բեղադրությամբ, շատ լայն տեղ է հատկացված կրոնական, եկեղեցագիտական, աստվածաբանական և հայագիտական առարկաներին:

Մասնագիտական առարկաներին զուգընթաց մեծ ուշադրություն է դարձվել նաև հանրակրթական առարկաների վրա, հատկապես լեզուների՝ գրաբարի, աշխարհաբարի, ռուսերենի, ֆրանսերենի և անգլերենի:

Կազմված և վերանայված ուսումնական պլանի համաձայն, Հոգևոր ճեմարանը տարեցտարի մոտենում է իր անվան արժանի հոգևոր-իմացական, ուսումնական բարձրության, իր պատվավոր դերը կատարելով Մայր Արոռի կյանքում, ու կոչման և պարտականության գիտակից, բազմակողմանիորեն զարգացած, հավատավոր և հայրենասեր հոգևորականություն պատրաստելու գործում:

Հոգևոր ճեմարանը Վեհափառ Հայրապետի սրտին ամենամոտ և հայրական զուրգուրանքի արժանի հաստատությունն է, որի գոյության և նպատակների հետ՝ Հայ եկեղեցու վերականգնման, զորացման և կազմակերպման աշխատանքներում, վարդագույն հույսեր է կապել Նա, մանավանդ այսօր, երբ մեր եկեղեցին անցկացնում է իր տագնապալի շրջաններից մեկը:

Վեհափառ Հայրապետը Հոգևոր ճեմարանի առաջ դրել է նոր խնդիրներ, որոնց կատարումը պահանջում է սիստեմատիկ աշխատանք, եռանդ և նվիրում:

«ՄԱՅՐ ԱՌՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆԸ ԳԼՈՒԽՆ է ՄԵՐ Ս. ԵԿԵՂԵՑԻՆ, ԵՎ ԱՆ ԻՐ ՁԻՆՎՈՐՅԱԼ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ ԵՎ ԻՐ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՎ ՊԵՏՔ է ԴԱՌՆԱ ԿԵՆՍԱՏՈՒ ՓԱՐՈՍ, ՕՐԻՆԱԿ. ԱՌԱՋՆՈՐԴ ԵՎ ՆԵՐՇՆՉԱՐԱՆ ՀԱՄԱՅՆ ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ»:

Վեհափառ Հայրապետը հանդիսավոր առիթներով և ընդհանրապես Հոգևոր ճեմարանի ուսանողության ուղղած հայրական Իր խոսքերի մեջ շեշտը դրել է մանավանդ ուսանողության բարոյական նկարագրի կազմության և հոգևոր դաստիարակության կարևորության վրա:

«ՄԵՐ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐՈՒ ՏԱԳՆԱՊԸ ԱՄԵՆ ԲԱՆԵ ԱՌԱՋ ՏԱԳ-

ՆԱՊՆ Է ՄԵՐ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ-ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ. ԵՎ ՀԵՏԵՎԱՆԲԸ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԸ ՊԱԿԱՍԻՆ»: Եվ Վեհափառ Հայրապետի ցանկությունն այն է, որ այսօր Հոգևոր Ճեմարանում, իր նայվածքի տակ և առաջնորդության ներքև, հասակ առնի, աճի և կազմակերպվի մի նոր միաբանություն. Հոգևոր Ճեմարանի գրասեղաններից սկսած, «ըստ իրում պատկերի և նմանութեան», որպեսզի նրանք վաղը, որպես հարազատ որդիներ, Մայր Արոռի միաբաններ և հայ ժողովրդի սպասավորներ, շարունակեն Իր մեծ գործը:

Հոգևոր Ճեմարանի նկատմամբ Վեհափառ Հայրապետի ցուցաբերած այս ջերմ հոգատարությունը պարտավորեցնում է ուսանողներին՝ համառ աշխատանքով, ջանասիրությամբ և օրինակելի վարքով արդարացնել Վեհափառ Հայրապետի բարձր վստահությունը, տիրապետել խոր գիտելիքների, սիրել մանավանդ ԱՅՆ ՍՈՒՐԲ ԴՈՐՄԸ, որի համար նրանք եկել են Մայր Արոռ, դառնալու Հայ Եկեղեցու զինվորներ, զրահված հավատով, գիտությամբ և հայ ժողովրդին ծառայելու ազնիվ գիտակցությամբ:

Հոգևոր Ճեմարանում անցնող ուսումնական տարում ձեռք է բերվել որոշակի նվաճում ուսման որակի բարձրացման, ուսանողության գիտակցական կարգապահության ամրապնդման, կրոնական դաստիարակության խորացման և բարոյական նկարագրի կերտման աշխատանքներում:

Այդ զեղեցիկ և խոստումնալից արդյունքների մեջ Վեհափառ Հայրապետի կենդանի օրինակից և զեկավարությունից հետո, իր արժանի բաժինն ունի նաև վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն Եպիսկոպոս Աբրահամյանը, որը, ինչպես հայտնի է, մի տարի առաջ, Վեհափառ Հայրապետի հրավերը սիրով ընդունած, եկավ Մայր Արոռ որպես վերատեսուչ Հոգևոր Ճեմարանի, և այնքան ձեռնհասորեն և իրեն հատուկ անձնվիրությամբ ղեկավարեց Հոգևոր Ճեմարանը, եղբայրական գործակցությամբ Մայր Արոռի երիտասարդ միաբան, վոխ-տեսուչ հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթաբյանի, որը նույնպես իր խանդավառ սիրտն է դրել Հոգևոր Ճեմարանի աշխատանքների մեջ, դասախոսական ամբողջ կազմի անձնվեր աշխատանքի կողքին:

Սեպտեմբերի 1-ին Հոգևոր Ճեմարանում սկսվեցին 1958—1959 ուսումնական տարվա ընդունելության քննությունները: Այդ օրը նաև Ճեմարանի բակը լիքն էր նորեկ աշակերտներով: Վերատեսչության սեղանի վրա կար ավելի քան 36 դիմում: Այս տարի Ճեմարան ընդունվեցին 20 նոր ուսանողներ, որոնք ընդունելության քննությունները հայոց լեզվից, հայ ժողովրդի պատմությունից, ռուսաց լեզվից և երաժշտությունից հաջող հանձնելուց հետո, վերատեսչի և փոխ-տեսչի առաջնորդությամբ անմիջապես ներկայացվեցին Վեհափառ Հայրապետին՝ Նրա հայրական օրհնությունը ստանալու համար ուսումնական նոր տարվա սեմին:

Այս տարի Հոգևոր Ճեմարանի ուսանողության ընդհանուր թիվն է 65, բաժանված 3 դասարանական (միջնակարգ) և երեք լսարանական (բարձրագույն) բաժինների:

Սեպտեմբերի 8-ին Հոգևոր Ճեմարանում նորից հնչեց դասավանդությունների առաջին զվարթ զանգը և «ի կողմանց և ի գաւառաց Հայաստան աշխարհի» եկած հին և նոր ուսանողությունը գլուխ խոնարհեց «Ի ԲԱՑԵԱԼ ԱՂԲԻՒՐՆ ԳԻՏՈՒԻԹԵԱՆ ԱՍՏՈՒԾՈՅ», քանզի, ինչպես Ե դարում Ս. Սահակ-Մեսրոպյան շրջանին, նույնպես նաև այսօր Ս. Էջմիածնի հովանու տակ, «ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱԱՌՈՅ ԲԸՂԽԵՑԻՆ ՀԱՅՈՑ ՇՆՈՐՀՔ ՊԱՏՈՒԻՐԱՆԱՑՆ ԱՍՏՈՒԾՈՅ», ինչպես գրում է սահանչելին Կորյուն:

Ս. Լուսավորչի ու Ս. Սահակի լույս հավատը, Ս. Մեսրոպի անմահ տառերը, Նարեկացու կենդանի ոգին, Շնորհալու բաղդրախտը Ներսես և Տաթևացու նախանձաճաճուզությունը կշարունակեն իրենց հոգևոր ազդումները ու պայծառացումը՝ Հոգևոր Ճեմարանի ուսանողներին այսօր էլ հոգեզարդելու և պսակելու համար Աստուծո շնորհներով և գիտությամբ, և մեր Եկեղեցուն և ժողովրդին ծառայելու անձնուրաց առաքինությամբ:

Մեծ է եղել և շարունակում է մեծ մնալ նաև այսօր մեր ազգային-եկեղեցական տարեգրության, մշակույթի պատմության մեջ հոգևոր ճեմարանների, բնծայարանների, ժառանգավորաց վարժարանների, դպրեվանքների դերը առհասարակ: Անցյալում հոգևոր հիմարանները կատարել են հայ կյանքում մշակութային-լուսավորական խոշոր աշխատանք: Հոգևոր այդ կենտրոններում սովորել և պատրաստվել են մեր Եկեղեցու պատմության լուսավոր դեմքեր և հայ մշակույթի անմոռաց երախտավորներ: Էջմիածին, Դվին, Տարև, Սանահին և Հաղբատ, Նարեկ և Գլաձոր, Կարմիր վանք և Սիս, Աղթամար, Երուսաղեմ և Արմաշ և այլ հոգևոր կենտրոնների անմոռաց անունները վաղուց անցել են արդեն մեր մշակույթի պատմության մեջ որպես հոգևոր-իմացական լուսավորության կենտրոններ:

Այսօր Երևանի այդ լույսի և հավատի բազմաթիվ կենտրոններից մնացել են միայն չորսը՝ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը, Կիլիկիո Կաթողիկոսության Դպրեվանքը, Երուսաղեմի Հայոց Պատրիարքության Ժառանգավորաց վարժարանը և Թուրքիո հայոց Պատրիարքության Դպրեվանքը Կոստանդնուպոլ-

սում, ուր դաստիարակվում և պատրաստվում են մեր այսօրվա կարիքների համար Հայաստանյայց Եկեղեցու հոգևոր սպասավորները:

Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը գոյություն է ունեցել Լուսավորչի օրերից: Ս. Էջմիածինը, հին Վաղարշապատը, շատ հնուց եղել է հայ ժողովրդի կրոնական կենտրոնը: Վաղարշապատ մայրաքաղաքումն էր նստում Կարողիկոսը: Այնտեղ էր նաև առաջին քրիստոնյաների հոգևոր դպրոցը աշակերտների մեծ խմբերով:

Մեր այսօրվա Հոգևոր Ճեմարանը սակայն ուղղակի շարունակությունն է ԺԹ դարի 90-ական թվականներին Ս. Էջմիածնում հիմնված Գևորգյան Եմարանի, որը շատ կարևոր դեր է կատարել հայ ժողովրդի պատմության վերջին հիսնամյակում: Գևորգյան Եմարանը տվել է Եկեղեցուն ոչ միայն բարձր և հայրենասեր հոգևորականության հրաշալի մի սերունդ, այլ նաև տվել է Ազգին բազմարդյուն գիտնականների, բանաստեղծների ու հասարակական գործիչների մի սերունդ:

Մեր օրերում ևս, Վեհափառ Հայրապետի ցանկությունն է եղել՝ որ և ցանկությունն է ողջ հավատացյալ ժողովրդի՝ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի միջոցով, հավատավոր և նվիրված եկեղեցականների պատրաստությամբ, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և Հայ Եկեղեցին դարձնել շնչող, կենդանի մի հոգևոր մշակութային հաստատություն:

Հոգևոր Ճեմարանը արդեն բեակոխել է իր գոյության 14-րդ տարին և պատվով է կատարել իր պարտքը Մայր Աթոռի նկատմամբ և արդարացրել է Վեհափառ Հայրապետի և հայ հավատացյալ ժողովրդի ակնկալությունները, ժողովուրդ՝ որը երբեք չի խնայել իր լուման՝ վառ պահելու համար մեր հավատի և լույսի օջախ Ս. Էջմիածինը և նրա Հոգևոր Ճեմարանը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԲԱՐԵԲԱՍՏԻԿ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ, ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԱՌԱՋ ԲԱՑՎԵԼ Է ՀՈԳԵՎՈՐ ԶԱՐԹՈՆՔԻ. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԵՐԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՆՈՐ ՈՒ ԼՈՒՍԱՎՈՐ ՇՐՋԱՆ:

ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ԳՈՅՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՐԱՏԵՎՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆԱՎԱՆԴ, ՇԱՏ ՄԵԾ ԵՐԱՇԽԻՔ Է ԱՅԴ ԶԱՐԹՈՆՔԸ ԱՎԵԼԻ ԱՄՈՒՐ ՀԻՄՔԵՐԻ ՎՐԱ ԴՆԵԼՈՒ ԵՎ Է՛Լ ԱՎԵԼԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԴԱՐՁՆԵԼՈՒ ՏԵՍԱԿԵՏԻՑ:

1955 թվականի սեպտեմբերին Ս. Էջմիածնում գումարված Ազգային-եկեղեցական ժողովում Հոգևոր Ճեմարանի նյութական ապահովության համար եղած խանդավառ ու հանդիսավոր խոստումները, ի մեծ ուրախություն Վեհափառ Հայրապետի, հետգհետե վերածվում են կենդանի գործի, կատարվում են ստանձնված պարտավորությունները, լինում են նոր նվիրատվություններ, որոնք լավագույն գրավականն են դեպի Ամենայն Հայոց շինարար և գործունյա Հայրապետը ունեցած հայ ժողովրդի սիրո, հավատարմության և նվիրվածության:

Այսօր Ս. Էջմիածինը ունի բոլոր հնարավորությունները իսկապես դառնալու համազգային, հոգևոր կենտրոնը հայության, իր զինվորյալ միաբանությամբ, Հոգևոր Ճեմարանով, մամուլով և տպարանով, հայ հավատացյալ ժողովրդի անբեկանելի հավատով, Հայրենի երկրի ազատ պայմաններում:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, ԵՐԵԿՈՅԱՆ ԺԱՄԸ 6-ԻՆ, ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ԳՈՒՄԱՐՎԵՑ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՈՐ ԽՈՐՀՐԴԻ և ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՆԴՅԱՆ ՀԻՍՆԱՄՅԱԿԻ և ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ 3-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՄԱՏԵՂ ՆԻՍՏԸ, ՈՐՏԵՂ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌՆՎԵՑԻՆ ՀՈԲԵԼՅԱՆԸ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԾՈՒՔՈՎ և ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ և ԿԱԶՄՎԵՑ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՏԵՎԵՆ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-ԻՑ ՄԻՆՉԵՎ 23-Ը: ԱՅԴ ՕՐԵՐԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ԿՄԱՏՈՒՑՎԵՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳՆԵՐ, ԿԿԱԶՄԱԿԵՐՊՎԵՆ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԸ ԿԼԻՆԵՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՏԵՄԱՐԺԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ և ԿԱՅՑԵԼԵՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ,
ՀԻԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

12 սեպտեմբերի 1958 թ.
Ս. Էջմիածին



ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱՄԱԿԻՆ

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՎԱՐԺԱՆ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ, ԵՎ, ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

ԹԱՎՐԻԶ

Մեծարգո տիա՛ր.

Ստացանք բեմական խորհրդիդ սույն թվականի հուլիս 24-ի գրությունը ուղղված Նորին Ս. Օծություն Վազգեն Ա Սրբազնագույն Կաթողիկոսին, ինչպես և Անթիլիասի աթոռակալ Տ. Զարեհ եպիսկոպոս Փայասլյանին ուղղված դիմումնագրի պատճենը: Դրում եք, թե բեմական պատգամավորական ժողովը իր հուլիս 12-ի նիստում որոշել է «դադարեցնել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ ունեցած իր ձևական կապը և թեմը դնել Մեծի Տանն Կիլիկիո Ս. Աթոռի հովանու ներքո»:

Մայր Աթոռի համար որքան ծանր էր ու վշտալի Թեհրանի թեմի նույնանման փորձը, իբրև եկեղեցական ծրագրի իրագործման առաջին քայլ, նույնքան անհիմն ու ցավալի է Ատրպատականի պարագան:

Նորին Վեհափառություն Վազգեն Ա Սրբազնագույն Կաթողիկոսի և Ս. Էջմիածնի Դերագույն Հոգևոր Խորհրդի անունից, այսու լիազորված ենք Ձեր համակի առթիվ հայտարարելու ի գիտություն բեմական խորհրդիդ, բեմական պատգամավորական ժողովիդ և Ատրպատականի համայն հայ հավատացյալ ժողովրդին հետևյալը.

1) Միանգամայն անհիմն ու ոչ հշմարիտ է այն հայտարարությունը, թե Ատրպատականի բեմի և Մայր Աթոռի միջև սոսկ ձևական կապ է եղել: Վերջին երեք տարում մեր և Ատրպատականի թեմի միջև կապը եղել է սերտ և բնականոն: Այդ մասին կարող է վկայել առաջնորդական փոխանորդ արժանապատիվ Տ. Կարապետ ավագ քահանա Մանուկյանը, որի հետ Մայր Աթոռս միշտ էլ պահպանել է կանոնավոր հարաբերություն: Ատրպատականի բեմի և Մայր Աթոռի փոխհարաբերություններն ներկայիս գրեթե նույնն են, ինչ որ անցյալ որևէ ժամանակաշրջանում: Եվ նույնքան և նույնպիսի փաստական ապացույցներ կարող ենք բերել այդ ուղղությամբ, ինչպիսի հիմնավորված փաստական ապացույցներ նշեցինք Թեհրանի բեմի պարագային մեր սույն թվականի մայիս 2 թվակիր պաշտոնագրով:

2) Իբրև հիմնական միջոց բեմի եկեղեցական գործերի վճռական բարելավման, Մայր Աթոռը բազմիցս առաջարկել է Ատրպատականի բեմական խորհրդին՝ լուծել բեմական առաջնորդի հարցը՝ Իրանի կառավարության 1949 թվականի որոշման ոգով, իր կողմից խոստանալով ամեն աջակցություն այդ հարցում, սակայն բեմական խորհուրդը միշտ անտարբեր է մնացել:

3) Մայր Աթոռը հակականոնական և չեղյալ է համարում Ատրպատականի բեմական պատգամավորական ժողովի հուլիս 12-ի որոշումը, որը հակառակ

է Ատրպատականի հավատացյալ ժողովրդի և հոգևորականության կամքին ու հոգևոր-ազգային շահերին:

4) Իրանի հայրապետական երեք բեմերն էլ, այդ թվում նաև Ատրպատականի բեմը, իր եկեղեցիներով ու հավատացյալ ժողովրդով եղել են, կան և եմնան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր իշխանության ներքո և կանոնական-իրավական, մեր ազգային ավանդությունների ու պատմական իրավասության տեսակետից ոչ մի մարմին իրավունք չունի Հայաստանյայց եկեղեցիներն ու հավատացյալները բաժանելու իրենց դարավոր Մայր կենտրոն Ս. Էջմիածնից:

Ելնելով այս ամենից և բելադրված Ազգի ու մեր Ս. եկեղեցու շահերից, այսու վեհափառ Հայրապետի և Դերազույն Հոգևոր Խորհրդի անունից դիմում ենք պատվարժան բեմական խորհրդին և Ձեր միջոցով բեմի պատգամավորական ժողովին՝ հետ առնել Մայր Աթոռից բաժանվելու հակաօրինական, անբնական և անտեղի որոշումը և շարունակել ավանդական հարաբերությունները, որոնք մինչև այժմ գոյություն են ունեցել Մայր Աթոռի և Ատրպատականի բեմական իշխանությունների ու եկեղեցիների միջև դարեր շարունակ. Իրանական պետության բարյացակամ հովանու ներքև:

Հանձնեք ընդունել Նորին Վեհափառության հայրապետական օրհնությունը և լավագույն բարեմաղթությունները Ձեր բոլորիդ հաջողության և բեմական գործոց հաջողության համար:

ՍԱՀԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Ատենապետ ԴԻՊԼԱԴՈՍՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ

Ս. Էջմիածին, 1 սեպտեմբերի 1958 թ.

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա.

Ի Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Վեհափառ Տե՛ր.

Այսու պարտք ենք համարում խոնարհաբար հաղորդելու Ձերդ Վեհափառության, որ բեմիս պատգամավորական ժողովը և բեմական խորհուրդը իրենց սույն թվի հուլիս 12-ի միացյալ լիագումար նիստում, հոգևոր դասի զգալի պակասը և այդ լրացնելու ուղղությամբ բեմական խորհրդի Ս. Էջմիածնի միջոցով Ս. Երուսաղեմում տարած աշխատանքների ապարդյուն մնալու դրությունը ու ստեղծված բացառիկ պայմանները, որով բեմիս եկեղեցիներ անշքանում են և ժողովրդի կրոնական ու հոգևոր կարիքները չեն բավարարվում ուստի ելնելով այս կացությունից ժողովը միաձայնությամբ որոշեց դադարեցնել Ս. Էջմիածնի Մայր Աթոռի հետ իր ձևական կապը և բեմը դնել Մեծի Տանն Կիլիկիո Ս. Աթոռի հովանու ներքո, որով ներկա ստեղծված բացառիկ պայմաններում հնարավոր կլինի վերակազմել և բարելավել ստեղծված անմխիթար վիճակը:

Ներփակ ուղարկում ենք Ձերդ Վեհափառության Մեծի Տանն Կիլիկիո նորին Ս. Օծություն Տ. Տ. Զարեհ Ա կաթողիկոսին ուղղված մեր դիմումնագրի պատճենը:

Որդիական խոնարհությամբ մատչիմ ի համբույր Ձերդ Վեհափառության Ս. Աջույն:

Հարգանքներով՝

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ատենապետ՝ ՀԱՅԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Քարտուղար՝ ՎԱՐԴԳԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Թավրիզ, 24 հուլիսի 1958 թ., N 268



ԻՍԱՀԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՂԱԶԱՐՅԱՆ

ԽԱՉԻՆ ԿԱՄ ՎԻՇՏԻՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

Քրիստոնեության մեջ եկեղեցվո հանդիսաղրած ամենեն գեղեցիկ տոներեն մին՝ խաչին տոնադարձն է։

Խաչվերացի տոնը գեղեցիկ ալ է։ Խաչը՝ վիշտն իսկ է կյանքին հողեն մշտապես ծաղկող։ Ու չէ՞ որ գեղեցիկն ալ վիշտեն ծաղկող՝ ներդաշնությունն է։

Գեղեցիկ բան է ցավին մասին խորհիլ ու մանավանդ՝ ապրված ցավին։ Ցավը՝ որ բացված ու բարձրացած է պատմության մեջ ու կբացվի կբարձրանա ալ դիմացը աշքերուդ ամեն օր, քարին, երգին, գույնին ու խոսքին երկունքեն։ Քո՛ւ ցավին։ Ընկերության ցավին։ Մարդկության՛ ցավին։

Քու ցաւին որ կպեղես միտքդ, կշրջիս հոգիդ աշխարհին մեջ ու իդձն ունիս իդձերուդ մարմին առնելը տեսնելու. որ գաղափարաց բախումեն, բառերու մեջեն կուգես տալ լեզերուն հոգի և միտք՝ նորաստեղծյալ ձևի մը մեջ. որ քարերուն, ձայնին ու գույնին կուգես լեղու տալ։ Որ անհուն տենչն ունիս կյանքիդ տգեղ գիծերուն հագվեցնելու աստվածային շնորհաց պատմուճանը աղվոր։ Որ վիշտն ունիս ցավիդ մեջ՝ շուրջդ երկինք մը ստեղծելու, սեր, բարիք, քաղցր նայվածք, հոգի ու շնորհ, հույս ու հավատք սփռելու, ու գտնելու, քո՛ւ իսկ սրտին մեկ անկյունեն ու ընկերության՛ն եղբայրացած սրտեն՝ անհամ երգին երջանկության։

Քո՛ւ ցավիդ որ կուգա մենությանդ խորունկ անձավներեն։ Ցավ որ տարորեն կսեղմե սիրտդ ու կրարձրանա ուղեղդ ի վեր ու կղնե լռության ու խոհական իմաստության կնիքը շրթներուդ։

Ընկերության՛ ցավին որ չունի պատառ մը հաց։ Որ չունի երազ։ Ընկերությունն՝ որ կերթա ու չի գիտեր իր ճամբան։

Մարդկության՛ ցավին որ վիշտն ունի համայնական խաղաղության արդարության սիրո ու բարության մշտնջենական երկինքը բանալու. որ վիշտն ունի իր մեջն անթեղված աստվածային հունտերուն ծաղկումը տեսնելու. երկիրը՝ երկինք, ու երկինքը՝ երկիր իջեցնելու։

Ու կխորհիս։ Ինչո՞ւ և ի՞նչպես և ո՞ւրկե այս ցավն։ Խաչը՝ մարդուն. խաչը՝ ընկերության ու խաչը մարդկության։ Դիմակալել զայն ինչո՞ւ։ Ու թե իսկ շրթներդ մնան փակ, կըսես յուրովի, տոկալ ի՞նչպես ցավին երբ ամեն բոպե աչքդ կտեսնե կեղծին ու սուտին հաղթական ժպիտը. տկարին իյնալն՝ զորավորի բիրտ բազուկին ներքև։ Դրամն ու սարսափը կշրջին կյանքի լայն ճեպուլիներու վրայեն հաղթանակի դրոշն իրենց ձեռքին։

Խաչվերա՞ց։ Տոնադարձն է խաչին բարձրացման վշտին ու ցավին վերացման։ Ու սեղանին՝ կպատարագվի Ան՝ խաչին ներքև։ Ու դողանքը գանգերուն՝ վիշտը ոսկեզոծ։

Բայց պատմությունը Խաչվերացին։

Պատմական խորքի մը վրա բանված գաղափարի մը պանծացումն է ան՝ ինքնին։ Դեղեցկական տարեգրությանց մեջ պատմական ավանդության մը համաձայն, խաչ ե երեք առիթներու մեջ հանդիսավորապես բարձրացուցված է ի աչս հավատացելոց՝ փառավորվելով անոնցմե։ Նախ, Երուսաղեմի առաջին եպիսկոպոս Հակոբոս Տյառնեղբայր առաքյալին միջոցով որ Քրիստոսի խաչին նմանությունը ցուցադրած ատեն երգած ըլլալ կավանդվի առաջին անգամ «Խաչի քո Քրիստոս երկիրպագանեմք... սրտառուչ տաղը։ Կրսենք նմանությունը, վասնզի այդ միջոցին երբ հրեից կողմե քրիստոնեից դեմ մղված բուռն հալածանքներուն պատճառով Խաչյալին անունն իսկ զգուշությամբ և երկյուղիվ կարտասանեին իրենները, հնար չէր բուն խաչափայտը հանել Գողգոթայի աղբյուներեն, ուր առաջին օրեն թաղվեցավ ան, և հրապարակային պատիվներու առարկա դարձնել։

Այս ավանդությունը ան առավելն կցուցնե թե խաչին գաղափարը և խորհուրդը առաջին իսկ օրեն որքան մեծարելի էր դարձած քրիստոնեական զգացման։ Խաչին հանդիսավոր բարձրացման և հրապարակային փառավորության պատեհություն ընծայեց անոր գլուտը Կոստանդիանոս Կայսեր մոր Հեղինեի ձեռամբ 327 թվին։

Խաչին փառավորյալ բարձրացուցման երրորդ և մեծագույն առիթն է եղած անոր գերեդարձը։ Խոսրով պարսից թագավորը՝ հոնաց դեմ իր պատերազմին մեջ 610-ին, հաղթելով Հերակլի, Երուսաղեմն ալ գրավելով գերի տարավ խաչափայտը։ Հերակլ զորաժողով ըրավ և մեծ բանակով քալեց պարսից վրա. հայկական զունդի զորավարն էր Սմբատ Գնունի, որուն միացան պարսից հպատակ հայերն ևս։ Խոսրով չարաչար հաղթվեցավ և սպանվեցավ իր Կավատ Սիրո որդեն, որ նույնպես հաջորդ տարին մեռնելով, իրեն հաջորդեց իր փեսան Խոռյամ՝ Հերակլի օգնությամբ, որ պայման դրած էր խաչափայտին ազատումը։ Այդ պայմանը ընդունված լինելով, 628-ին խաչը վերադարձվեցավ քրիստոնեից. Պարսկաստանեն Կարին Կարինեն Կոստանդնուպոլիս և հետո մինչև Երուսաղեմ աննկարագրելի ողջունության պատճառ եղավ անոր հանդիսական անցքը. ամեն տեղ բարձրացվեցավ անիկա հավատացյալներու ի մխիթարություն, առարկա դառնալով ամենուն երկրպագության։ Կարելի է թերևս ըսել թե վերացումի այս պարագան էր նույնիսկ որ պատճառ տվավ Խաչվերացի տոնին։

Խաչվերացի տոնը ամենամեծ հանդիսավորությամբ կկատարվի մեր եկեղեցվո կողմե. մասնավորապես ուշագրավ է կիրակի երեկոյի Խաչվերացի բափոր–անդասաանը. որ տեղի կունենա մեծ շուքով։ Հավանական է որ այս հանդիսավորությունը չափով մը գեթ արդյունքը լինի այն տպավորության՝ զոր խաչափայտին գերադարձը գործեց հայության սրտին վրա. Հայաստանեն անցած միջոցին։

Կարո՞ղ դաշտին հարավ-արևելյան կողմը բարձրացող լեռներուն մեծ գագաթը Խաչափայտ կկոչվեր մինչև վերջերը։ Այդ լեռան սարահարթին վրա որ ինը հազար ոտք բարձրություն ունի, կբխի սառնորակ ջուր մը որ նույն ատեն ուխտավայր է։

Տեղական ավանդություն մը կպատմե թե պարսիկները խաչը հանձնելե վերջ, զղջալով, նորեն հարձակիլ փորձած են ետ առնելու համար զայն. հայերը, խաչափայտը այնտեղ թողլով, իրենց ամրոցը ուժով վանած են հարձակումը ու վերադարձին տեսած են որ խաչին հանգչեցված տեղեն բխած է այդ վճիտ ջուրը։ Նույն լեռներուն ստորոտը կար Խաչկա վանք մը ուր Խաչվերացի ատեն մեծ ուխտավորություն կկատարվեր։

Խաչը՝ մարդուն. խաչը՝ ընկերության ու խաչը՝ մարդկության։ Խաչվերացի պատմական հանդիսության այս տոնադարձին՝ խաչին կամ վշտին բարոյական արժեքը կկայանա անոր մեջ որ մարդը, ընկերությունը և մարդկությունը առաքյալին հետ միասին խոնարհին մինչև հողը՝ իրենց խաչին, իրենց վշտին։ Կյանքի սրտին մեջ բացված բազում հոգեկան ու իմացական երևույթներեն ամենեն անավորը ու էն աղվորը՝ ծաղիկն է վշտին։ Մոտ է ան այնքան մեղի, որ զրեթե կզգանք ամեն բոպե մեր բովիկը ու բրոնած անոր ձեռքեն, զգվակը ըլլար կարծես մեզի. կրալենք հաճույքի մերթ ալ ուրախության բարեկամներուն մեջեն։ Գույնե հակասական թվի երկու իրերամերժ զգացումներուն մեկտեղված տեսնելը. բայց հոն է հրաշքը՝ իրողության։ Լույս և ստվեր քով-քովի։ Ճակատագիրն այս է եղած մերին։ Ի՞նչ բավունք ուներ Սոկրատ երբ հաճույքին մոտ ցավին ներկայությունը կտեսներ. շղթաները՝ որոնք իր ծունկերուն ցավ կպատճառեին ու արձակումը՝ հաճույք, ինչպես կրսեր ինքը։ Հետո բաժակը մոլեխինդին զոր պարտ էր խմել. ցավ ու ի՞նչ ցավ... բայց ողջունելու համար իր իսկ բառերով «իր Դեմոնին հասնելու ու անոր հետն ըլլալու երանական առավոտը»։

Վիշտը անխուսափելի մեր ճակատագիրն է դարերու մեջեն մեղի հասնող ու մեզ դեռաղանցող։ Վասնզի անհատական, ընկերային ու քաղաքական կյանքին մեջ երբ տրված է հարաբերությունը մարդ էակներու մի

չև, պատմության առաջին իսկ վայրկյանեն, պատմության հետ ծներ է նաև վիշտը։ Տկարը զորավորեն պարտվելու վիշտն է ունեցեր։ Բռնի ուժը՝ դուպարի մը ընթացքին, հաղթության դրոշն է բարձրացուցեր։ Հարուստը՝ իր եսասիրության, ագահության ու հպարտանքի գերին է գարձուցեր աղքատը։ Գաղափարախոսը նույնիսկ իր բիրտ ուժին է դիմեր իր խոսքը հավերժացնելու համառությամբ։ Ու կրոնական պատերազմներու անընմբռնելի շղթան...։ Դրամ, հաց ու սուր տարած են հաղթանակներ ընդդեմ արդարության, ընդդեմ ճշմարտության։ Մենք այնպես կհավատանք ու համոզված ենք ալ որ միայն, ճշմարիտ քրիստոնեական լույսին տակ ու Ավետարանին ջահին ներքև կրնա վիշտը լուսավորվիլ։ Ու խաչին, խաչեցյալին պատմական իրականությունը կրնա մեր մտքի և հոգիի աչքերուն դիմաց դնել վշտին արժեքը, ցավին գեղեցկությունը, անիմաստության՝ իմաստ տալու հրաշքը։ Ու որքան ալ Իսրայելի որդիները գայթակղին ու անհավատները հիմարություն հռչակեն, «մեք քարոզեսցուք զխաչելեալն Քրիստոս՝ հրէից գայթակղութիւն և հեթանոսաց յիմարութիւն»։ Վասնզի «յիմարն Աստուծոյ իմաստնագոյն է քան զմարդիկ և տկարն Աստուծոյ զօրագոյն է քան զմարդիկ»։ Վասնզի Ան է որ «Եղև մեզ իմաստութիւն Աստուծոյ, արդարութիւն և սրբութիւն և փրկութիւն»։ Ու մենք կմերժենք բիբա ուժը, կհավատանք սիրո ուժին որուն լույսին մեջ կպայծառանա ու իմաստ կհագնի վշտին ծաղիկը. ու հոն է վշտին բարոյական արժեքը. ու եթե սերը կլեցնե մեր կուրծքը հպարտությամբ մենք կպարծինք «միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» որով մեզ համար «աշխարհ ի խաչ ելեալ է» ու մենք՝ աշխարհի։

Իր առարկայական իմաստով խաչը այն գործիքն էր, որուն վրա մահապարտները կգատապարտվեին մեռնելու։ Կարկեդոնի, Պարսկաստանի, Հունաստանի, ու ապա հռոմեական կայսրության մեջ, այդ էր օրենքը։ Բայց հռոմեացիներուն մոտ, խաչը նույնացած էր առհասարակ որևէ նեղության, ցավի, տառապանքի ու վշտի գաղափարին հետ։ Ահա թե ինչո՛ւ Հիսուս ալ իր աշակերտներուն կթելադրեր որ անոնք առնեն իրենց խաչը ու երթան իր ետևեն։

Միտքս կերթա այն քրիստոնյաներուն որոնց մարմինը առյուծներու հոշոտման ենթակա էր, բայց միտքը և հոգին կխոնարհեին հրաշալիորեն իրենց խաչին, իրենց վշտին՝ զԱստված տեսնելու և Քրիստոսի հետ ապրելու տա՜րորեն երջանիկ, հավատքի ու հույսի երգին մեջեն։ Վիշտը զավակն է երջանկության, որ կշրջի մեր հոգիի և մտքի բուրաստանին մեջ։ Վիշտ՝ երբ չարեն կպարտվինք։ Վիշտ՝ երբ բարին չկարենալ իրագործելու հուսախայթությունը կելլե մեր դիմաց։ Վիշտ՝ երբ քեզ վեր ի վայր կհասկընան։ Վիշտ՝ երբ սիրույդ փոխարեն, ատելություն կուգա քեզի։ Երբ բարիք կսերմանես ու չարիք կքաղես։ Ու վիշտ՝ երբ կստեղծես. քարին կուտաս շնորհ. ձայնին կուտաս խանդ, գույնին կուտաս կյանք ու խոսքին կուտաս շունչ։ Վիշտ՝ երբ հավերժության մեջ բազմած ՀՈԳԻՆ՝ հոգիներուն և քու հոգվույդ՝ կուզես ապրիլ քու մեջ։ Վիշտ՝ երբ պարտության անհոգ վիհ մը կտեսնես բացված հոգվույդ խորերուն։ Երբ զայն լեցնելու, լիացնելու անհոգ տենչովն ես լեցված։

Իր երկփեղկյան ծալքերովը, բացասական ու դրական, վիշտը՝ կհոսի կամ իր ծնունդը կառնե երեք ավազաններե. մարգեն, մարգերեն ու Աստուծմե։ Մարգեն՝ երբ ինք է որ, այսպես կամ այնպես, չէ կրցած իրագործել այն ինչ որ բարի է, գեղեցիկ է ու ճշմարիտ։ Մարդերեն՝ երբ արգելք հանդիսացած են տեսիլքին իրագործման, ծաղրանքին, ատելության, արհամարհանքին, դրամին ու զենքին միջոցավ։ Աստուծմե՝ երբ հոգին չէ հաջողած զԱյն իր մեջն զգալու ու Անոր ներկայությունը ապրելու։

Գիտակից վիշտը արժեք է. ու այդ արժեքը՝ զորություն է. ու այդ զորությունը՝ անպարտելի է։

Անհատական, ընկերային ու քաղաքական տանար-կյանքին մեջ երբ կա հարաբերությունը մարդե մարդ ու ժողովուրդե ժողովուրդ, կա նաև վիշտը որպես անխուսափելի հետևանք տրված հարաբերության։ Եվ միշտ ալ բիրտ ուժը, նյութական զորությունը, ոսկին ու սուրը գրաված են արդարության, ճշմարտության, սրբության, իմաստության, փրկության ու նույնիսկ՝ Աստուծո տեղը։ Ահա թե ինչո՛ւ անխուսափելի հետևանք է որ դրամին դեմ՝ դրամ՝ սուրին դեմ՝ սուր բարձրանա, եթե չկա կատարված իրականության ընդառաջում կամ եթե չկա հպատակություն զորավորին։ Եվ ինչո՞ւ մարդիկ ճարահատ կդիմեն նյութական ուժին... Պարզ և միմիայն այն պատճառով որ անոնք սնանկ են մտքով և հոգիով։ Զունին մտքին ու խոսքին զորությունը։ «Զեմ ապտակեր քեզի, որովհետև ոմիմ այդ զորությունը»,— ըսեր է զորավար մը իր զինվորին։ «Եթե չարիք քարոզեցի, ցույց տուր ինձի զայն. իսկ եթե բարիք՝ ինչո՞ւ կապտակես». այս խոսքին զորությունը շառաչուն ապտակե մը ավելի էր Քահանայապետին, որ շշմած մնաց իր տեղը և ձեռքը՝ օդին մեջ։ «Սուրդ պատյանը դիր. սուրը վերցնողը՝ սուրով կմեռնի» հառաչեց Աստվածորդին, մարդոց տակավին անծա-

նոթ Իր անավոր վշտին բարձրութենեն, երբ կմոտենար վայրկյանը մահվան։ Ա՜խ՝ յր. թո՛ղ դոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն.-ը Իր աստվածային սիրտը պոկեց ու թռավ Իր օծյալ ռեղնորակ շրթներու վանդակեն դեպի երկինքը պատմության։ Ներողամտության վշտին այդ թռչունը բնակեցավ ու կբնակի ամեն մեկ սառուգապես հավատացյալին սրտին մեջ ու կընե զայն զորավոր. հերոս ու երջանիկ։ Խաչն է մեր հույսը, խաչն է մեր սերը, խաչն է մեր հավատքը, մեր իմաստությունը, մեր Հշմարտությունը, մեր արդարությունը. մեր սրբությունը և մեր փրկությունը։

Ու ի՞նչ ողբերգություն ու հեգնանք որ պատմական իրադրությանց մեջ բիրտ ուժը չատ հաճախ գրված լինի արդարության, Հշմարտության բարոյական անխորտակելի արժեքներուն տեղը, առանց իրավունքի։ «Ոչ-բանական» և «ոչ-հոգեկան» աշխարհներո՛ւ մեջ միայն արդարանալի է որ տկարը ոչնչանա զորավորեն։ Վագրի՛ն տրված է միայն ու վայրի գազաններուն որ իրենցմե տկարներուն վերջ մը տան։ Այդ, եթե կարելի է ըսել, իրենց իրավունքն ու բնազդն է։ Քանի որ ոչ-բանական ու ոչ-հոգեկան աշխարհի մեջ, զոյություն իսկ չունի ու չի կարող ունենալ Բարիին, Գեղեցիկին, Հշմարիտին բարոյական արժեքները ու անոնց ըմբռնումը, ու մանավանդ զանոնք արժանիքներու վերստեղծելու շունչն ու զորությունը։ Ու եթե կան մարդիկ որոնք չեն դադրիր բանական ու logեկան իրենց աշխարհին մեջ վագր ու վայրի գազաններ ըլլալե, պիտի դադրին անոնք՝ պատմութա՛ն ուժով, վշտին ու խաչին բարոյական արժեքին զորությունը իրենց մեջ ունեցող փորձառականներո՛ւն ուժովը. պիտի դադրին Աստուծո ուժովը։ Վասնզի ինչ որ նյութին հետ առնչված է, նյութին կերթա. ինչ որ առարկայական ժամանակին է, այդ իսկ պատճառով պարտի ու կմեկնի ալ ժամանակին հետ։ Բիրտ ուժին հաղթանակը միշտ ժամանակին ու նյութին հետ եղած է ու պիտի չդադրի նյութին և ժամանակին հետ ըլլալե. վասզի նման է անոր և երբեմն նույնն է անոր հետ։ Ոչ մեկ բարոյական արժեք որքան ալ գամվի խաչին, չի կորսվիր. անպայման ան կողջունե իր հարությունը։ Արդարության նյութական մահը՝ կմեռնի նյութին հետ. արդարության բարոյական կյանքը կհառնե «ժամանակավորը»-ի ու «ֆիզիկան»-ի գերեզմանեն։ Վասնզի՝ բարոյական արժեքները, իրենց էաբանական իմաստով իրենց մեջն ունին հավիտենականությունը։ Միակ ապացույցն է պատմությունը։ Պատմությունը բարոյական զորություն է, որուն տերն ու կառավարիչն է Աստված։ Դեմքերն ու դեպքերը, պատմությունը կշինեն, պատկանելով պատմության «պարունակյալ»-ին որ ժամանակին ու նյութին հետ զուգընթաց է ու այդ իսկ պատճառով կունենա անցյալ, բայց դեմքերուն ու դեպքերուն շարժիչ ուժը, մղիչ ստեղծագործական զորությունը. պատմության «պարունակյալը» կկառուցանե որ բարոյական և որակավոր արժեք է ե զուգընթաց այդ իսկ պատճառով հավիտենականության ու հակառակ՝ ժամանակին։

Ու ստույգ բարոյական հաղթանակը. ինչպես միշտ նույն և հավիտյան Աստուծո կպատկանի։ Այսպես եղած է, այսպես է, ու այսպես պարտի լինել իրողությունը՝ պատմության դատումով։

Ամբողջ պատմությունը վշտին կամ խաչին տարած հաղթանակներուն տաճարներովն է լեցուն։ Կամար առ կամար, գմբեթ առ գմբեթ՝ ԽԱՉԸ՝ հավերժորեն կուզա պատմութենեն ու կանցնի մեղմն ու կերթա հավերժության։

ԵՐԱՆԻ՞ ԱՆՈՆՑ՝ ՈՐՈՆՔ ՎԻՇՏՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՎԻՇՏՆ ՈՒՆԻՆ։ ՎԻ՛ՇՏԸ ՄԱՐԴՈՒՆ, ՎԻՇՏԸ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԻՇՏԸ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ. ԲԱՑՑ ՎԱ՜Ղ ԱՆՈՆՑ՝ ՈՐՈՆՔ ՎԻՇՏՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՎԻՇՏԸ ՉՈՒՆԻՆ։

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՕԳՈՍՏՈՍԻ 3-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ քահանա Մկրտչյանը և քարոզեց դերապշնորհ Տ. Հայկազուն սրբազանը հավուր պատշաճի։

***

ՕԳՈՍՏՈՍԻ 10-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «Բարեկենդան Ս. Աստուածածնի պահոց»։ Մայր Տաճարում պաաարագեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Բելամյանը և քարոզեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը «Հաւատամք և ի մի միայն ընդհանրական և Առաքելական Սուրբ Եկեղեցի» բնարանով։

***

ՕԳՈՍՏՈՍԻ 14-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Հունաստանի թեմի առաջնորդ և Կաթողիկոսական պատվիրակ հոգեշնորհ Տ. Իսահակ վարդապետ Ղազարյանը։

***

ՕԳՈՍՏՈՍԻ 16-ԻՆ, ՇԱԲԱԹ, «տօն Շողակաթի Սրբոյ Էջմիածնի ըստ տեսլեան Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի»։ Օրվա տոնի առթիվ Մայր Տաճարում Իշման Ս. Սեղանի վրա պատարագեց ուխտավորարար Մայր Աթոռում գտնվող հոգեշնորհ Տ. Իսահակ վարդապետ Ղազարյանը։

***

ՕԳՈՍՏՈՍԻ 17-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «Վերափոխումն Ս. Աստուածածնի»։

Ս. Կույսի Վերափոխման մեծ տոնի կապակցությամբ շաբաթ օրվանից Մայր Աթոռ ուխտի էր եկել հավատացյալների ծովածավալ բազմություն Հայաստանի բոլոր շրջաններից, քաղաքներից, գյուղերից։

Համաժողովրդական մեծ տոնի առթիվ մորթվեցին բազմաթիվ մատաղներ, կատարվեցին մոտ 500 մկրտություններ։ Վանքը ամբողջ շրջափակը լեցված էին ուխտավորների բազմությամբ։

Մայր Տաճարում եպիսկոպոսական դանդիսավոր պատարագ մատուցեց և քարոզեց դերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը և քարոզեց մայրության գաղափարի շուրջ։ Հավարտ սուրբ պատարագի կատարվեց ավանդական «օրհնութիւն խաղողոյ»։

***

ՕԳՈՍՏՈՍԻ 18-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, «Յիշատակ մեռելոց»։ Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մաշտոց աբեղա Թաջիրյանը։ Հավարտ սուրբ պատարագի կատարվեց «հոգեհանդիստ վասն համօրէն ննջեցելոց»։

***

ՕԳՈՍՏՈՍԻ 22-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, Կիլավոդսկից, Իր ամառային կարճատև արձակուրդից Մայր Աթոռ վերադարձավ Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ գավազանակիր հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետի։

Երևանի օդանավակայանում Վեհափառ Հայրապետը դիմավորվեց Մայր Աթոռի ամբողջ միաբանության և վանքի պաշտոնեության կողմից։

Վեհափառ Հայրապետին դիմավորողների թվումն էր նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ պր Ռ. Հովհաննիսյանը։

ՕԳՈՍՏՈՍԻ 24-ԻՆ ԿԻՐԱԿԻ. Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ քահանա Մկրտչյանը և քարոզեց գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

ՕԳՈՍՏՈՍԻ 25-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ. Վեհափառ Հայրապետի մոտ տեղի ունեցավ մանկավարժական խորհրդակցություն Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի 1958—1959 ուսումնական նոր տարվա վերաբացման առթիվ, որին մասնակցում էին վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը և փոխտեսուչ հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետը։

Խորհրդակցությունում վերանայվեց Հոգևոր Ճեմարանի ուսումնական պլանը և հաստատվեց դասախոսական կազմը։ Վեհափառ Հայրապետը արեց շատ օգտակար թելագրություններ ուսումնական պլանի առնչությամբ։

ՕԳՈՍՏՈՍԻ 26-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, երեկոյան ժամը 4-ին Վեհափառ Հայրապետին այցելեց Զեստրրի աստղադիտարանի դիրեկտոր պրոֆ. Լոյբլը իր տիկնոջ և հայազգի տիկին Քիշմիշյանի հետ (Մեքսիկայից)։ Հարգելի պրոֆեսորը Հայաստանում հյուրն էր Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի։

Վեհափառ Հայրապետը ջերմ զրույց ունեցավ հարգելի գիտնականի հետ։



ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ

Սեպտեմբերի 8-ին, երկուշաբթի օրը, Ս. Կույսի ծննդյան տոնի օրը, հանդիսավոր իրադրության մեջ կատարվեց Հոգևոր Ճեմարանի 1958—1959 ուսումնական տարվա պաշտոնական բացումը։

Օրվա տոնի առիթով Մայր Տաճարում հանդիսավոր սուրբ պատարագ է մատուցում Հոգևոր Ճեմարանի փոխ-տեսուչ հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթարյանը։ Ճեմարանի երգչախումբը, դաշն ու վեհ, երգում է սուրբ պատարագը, և բոլոր ճեմարանականները խոստովանվելուց հետո երկյուղածությամբ մոտենում են Ս. Հաղորդության, հոգեպես մաքրվելու, վերանորոգվելու և աստվածային շնորհներով ապրված, նոր եռանդով սկսելու համար ուսումնական նոր տարին։

Հավարտ սուրբ պատարագի Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով և շրջապատված Գերագույն Հոգևոր Խորհրդի և միաբանության անդամներով, ժամը 11-ին ժամանում է Վեհարանից Հոգևոր Ճեմարան, որտեղ դասախոսական կազմը, ուսանողությունը սպասում են։ Վեհափառ Հայրապետը Ճեմարանի բակում դիմավորվում է խանդավառ ծափահարություններով և «Աշակերտը Քրիստոսի» շարականի երգակցությամբ առաջնորդվում Ճեմարանի հանդիսասրահը։

Ավետարանից կարդացվում է Սերմնացանի առակը (Մատթ. ԺԳ 4—9)։ Գ դասարանի ուսանող Խաչիկ Աբրահամյանը կարդում է Նարեկացու «Աղօթք առ Ս. Հոգին» (Բան ԼԴ)։ «Որք զարդարեցին» շարականից հետո, Ա լսարանի ուսանող Կարապետ Սուքիասյանը, հանուն Ճեմարանի ուսանողության, ուսումնական նոր տարվա սեմին Վեհափառ Հայրապետին ուղղված երախտագիտության ջերմ խոսք է ասում.

«Վեհափառ Տե՛ր.

Հոգևոր Ճեմարանի ուսումնական նոր տարվա վերաբացման այս պահին, ի դեմս իմ ճեմարանական եղբայրների, որդիական խոնարհությամբ, ուսանողության զգացմունքների թարգմանը հանդիսանալով, հարգանքի և շնորհակալության խոսք եմ բերում Ձերդ Ս. Օծության։ Այս առթիվ մեր ամենուն սրտագին մաղթանքն է առ Աստված, որ Դուք ապրիք երկա՜ր, շա՜տ երկար, այս սուրբ հարկի տակ, և մենք, Ձեր սիրասուն զավակները, միշտ վայելենք Ձեր օրհնությունը և ներկայությունը այստեղ։

Դուք, Վեհափառ Հայրի՛կ, Ձեր սրբ, Ձեր կյանքը անցկացնում եք մեր ժողովրդի ուրախություններով և մտահոգություններով. և նույն ժամանակ չեք անտեսում նաև մեզ՝ Հոգևոր Ճեմարանի Ձեր սիրելի սաներին։ Ձերդ Սրբության հոգատարությունը մեր վրա պարտավորություն է դնում է՛լ ավելի լրջությամբ և արդյունավորությամբ սովորել և արժեցնել այն բարձր վստահությունը, որ տածում եք դեպի Հոգևոր Ճեմարանը։

Ձերդ Վեհափառության ջանքերի շնորհիվ, նախկին Գևորգյան Ճեմարանի շարունակությունը կազմող այսօրվա Հոգևոր Ճեմարանը քուրա դարձրած, թրծում եք մեր հոգիները Հայ Եկեղեցու պաշտամունքով և մեր ժողովրդի սիրով։ Դուք, որ հիացում ունեք դեպի Խրիմյան Հայրիկի դաստիարակչական վաս-

տակը, այսօր մեզ այստեղ դաստիարակում եք նրա ոգով և շնչով, հետագայում բարձրացնելու համար մեզ դեպի ծառայության սուրբ սեղանը։

Շնորհազարդ Ս. Հայրապետ, որդիական սեր և նվիրում Ձեզ՝ մեր բոլորի կողմից։ Դուք մեր կյանքի տիպարն եք, որին ձգտում ենք նմանվել։ Խոստանում ենք Ձեզ, Վեհափառ Հայրիկ, երիտասարդական մեր խանդավառությամբ և որդիական ակնածանքով միշտ լսել Ձեր բարի թելադրությունները և աշխատել մեղվի ժրաջանությամբ, լցնելու համար մեր մտքի փեթակները հավատով և գիտության լույսով։

Շնորհակալություն խոսք ունենք նաև մեր վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազան հորը, որը անձնդիր հոգատարությամբ աշխատում է այս հարկի տակ, Տիրոջ Այգու համար նոր մշակներ պատրաստելու աստվածահաճո գործին։ Նա սովորեցնում է մեզ սիրել Աստն ու Եկեղեցին առաջնորդվել Աստուծո պատգամով։

Շնորհակալություն նաև մեր փոխ-տեսուչ բոլորից սիրված հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետին, որ Ճեմարանի ուսանողության կյանքի բարելավման և կենցաղային անհրաժեշտ կարիքների կարգավորման և մատակարարման գործում չի խնայում ոչ մի ջանք։

Շնորհակալություն նաև Հոգևոր ճեմարանի մեր հարգարժան դասախոսներին, որոնք Ձեզ ունենալով իրենց գլուխը որպես մեծ դաստիարակ և Հայր, ամեն ջանք ու ճիգ թափում են, մեզ դիմելու համար մեր հոգևոր ասպարեզին հատուկ ոգով և դաստիարակությամբ։

Երախտագիտության խոսք ունենք նաև գերաշնորհ լուսարարապետին. Մայր Աթոռի միաբանության պատվարժան անդամներին և բոլոր այն ակտիվ հոգիներին, որոնք իրենց օրինակելի կյանքով, վարքով և խրատով ատարում են մեր հոգևոր-բարոյական և իմացական առաջադիմությանն։

Թույլ տվեք, Վեհափառ Տե՛ր, ի դիմաց իմ ճեմարանական եղբայրների, մատչիլ ի համբույր Ձեր Ս. Աջույն և հայցել մեզ բոլորիս վրա Ձեր հայրապետական օրհնությունը Հոգևոր Ճեմարանի նոր ուսումնական տարվա սեմին»։

Գերապատիվ Տ. Հայկազուն եպիսկոպոս Արրահամյանը ևս ողջույնի սրտագին խոսք ասաց՝ ուղղված Վեհափառ Հայրապետին.

Վեհափառ Տեր.

Մեր ազգային պատմության ավանդական շրջաններին նոր տարվան կամ Նավասարդյան տոներու իդձը այսպես հասցուցած են մեկ մեր դուսաններն ու պատմիչները

Ո՞ տայր ինձ զծուխն ծխանի
Եւ զառաւօտն Նաւասարդի.
Զվազելն եղանց և զվարգելն եղջերուաց
Մեք փող հարուաք և թմբկի հարկանէաք։

Այս պատմական դաշտավայրին, այս լեռներուն վրա էր, որ դարեր առաջ արտահայտվեցավ այս իղձը։ Որքա՞ն քաղցր էին Նավասարդյան առավոտները, եղնիկներու և եղջերուներու վազքին տակ։ Իսկ ի՞նչպես պիտի երգեին նույն գուսանները մեր օրերուն, երբ նույն Հայաստան աշխարհի մեջ տեսնեին փոխան սիրուն կենդանիներու, իմացական մատաղ եղնիկներու՝ մեր բազմահազար սովորողներու վազքը՝ սեպտեմբերյան այս առաջին օրերուն, դեպի իրենց մտավոր անդաստանները, դեպի մանկապարտեզներ, դպրոցներ, տեխնիկումներ, ինստիտուտներ և համալսարան։

Սեպտեմբերյան այս առավոտները համայնական տոնի օրեր են ամբողջ Հայաստանի ուսանողության համար, ինչպես և Հոգևոր Ճեմարանի համար։ Հավաքված են այստեղ «աշակերտք Քրիստոսի», և բանավոր մշակները մեր անդաստանին, կռելու և դարբնելու ու դարձնելու այս նվիրական հարկը իրական ձուլարան մը, ուր կապարը ոսկիի կփոխվի և միտքն ալ հոգի կդառնա։

Վեհափառ Տե՛ր.

Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը այսօր կմտնե իր մեկ նոր հունին մեջ, ընդ հովանյավ Ձերդ Ս. Օծության։ Այս նվիրական ժամին, վերատեսուչ, դասախոսական կազմ և ուսանողություն եկած են կնքելու ուխտ մը, աշխատանքի ուխտ, որպեսզի այս տարի ալ չժանգոտի միտքը և չտկարանա հոգին այս նվիրական հաստատության մեջ։

Անցնող տարիներու զգալի արդյունքներեն հետո այսօր կվերարանանք Հոգևոր Ճեմարանի դոները ավելի ստվար աշակերտության մը առաջ, որակավոր ուսուցչական կազմի մը ընտրությամբ։ Արդարև, Ձերդ Ս. Օծության և Գերագույն Հոգևոր Խորհրդի ղեկավարությամբ և աշխատանքով ձեռք են բերված արդյունքներ, որոնք օր-ավուր կաճեցնեն մեր Հոգևոր Ճեմարանի հմայքն ու գեղեցկությունը։ Պայծառ է մեր ուղին ու լուսավոր մեր ապագան, նաև շնորհիվ մեր Հայրենի կառավարության, որուն հոգատարության խաղաղ բարիքը կվայելենք։ Վստահ եմ, թե միշտ դեպի առաջ, միշտ դեպի վեր պիտի ընթանա մեր գործը, Տիրոջ օգնականությամբ և Ձեր ղեկավարությամբ.

«Բազումք են կոչեցեալ և սակաւք ընտրեալք»,— կըսե Ս. Ավետարանը։ Մենք այս տարի ալ այդ սակաւներեն է, որ ընտրեցինք մեր Ճեմարանի համար կոչեցյալ աշակերտներ։ Անոնք միանալով մյուսներուն, Ձեր հայրապետական օրհնությամբ և մեր սիրելի միաբանության, ուսուցչական կազմի աշխատանքով, այս սուրբ հաստատության արժանի զավակներ պիտի դառնան։

Այս պահուն, դեռ մեր ականջներուն մեջ թարմ կհնչեն Ավետարանի պատգամները սերմնացանի առակով։ Հոգևոր Ճեմարանի դասախոսները պիտի սերմանեն առատորեն մեր տղոց հոգիներուն մեջ՝ հավատքի և գիտության հատիկները, ու երանի՜, հազա՞ր երանի անոնց, որոնց միտքն ու հոգին արևոտ ու բերրի հողին նման են, ուր այդ ինկած ցորենահատիկները պիտի աճին, ուռճանան ու պտղաբերին «ընդ միոյ երեսուն, ընդ միոյ վաթսուն և ընդ միոյ հարիւր»։

Այս առավոտ, մեր սաները երկյուղով մոտեցան Տիրոջ Ս. Սեղանին և հաղորդվեցան Անոր մարմնովը և արյամբը, զորացան հոգվով, զորացան մարմնով, «զբարւոք պատերազմն» մղելու ընդդեմ խավարի և տգիտության։

Վեհափա՛ռ Տեր.

Հանդիսավոր այս պահուն կհայտնեմ իմ սրտագին շնորհակալություններս, ամենեն առաջ Ձերդ Ս. Օծությանը և Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամոց, որ ոչինչ կխնայեր Հոգևոր Ճեմարանին, տալով անոր Ձեր միտքն ու հոգին, ժամանակն ու եռանդը։

Շնորհակալություններս իմ հոգևոր եղբորս ու գործակցիս՝ փոխ-տեսչին՝ իմ շատ սիրելի Մեսրոպ հայր սուրբին, իմ ուսուցչական կազմին և բոլոր լարի հոգիներուն, որոնք հրենց խորհուրդներով կօգնեն մեզի մեր այս շատ պատասխանատու և սուրբ գործին մեջ։

Վեհափա՛ռ Տեր.

Այս պահուս, ի գուսս անկյալ առ դատս Վեհիդ, կհայցեմ Ձեր սուրբ օրհնությունը նախ այս սրբազան հարկին և ապա մեր ամենուն վրա։

Այս նվիրական պահուն, մեր ամենուն շրթներուն վրա են սրբազան աղոթքին սա բառերը. «Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ, Տէր, և զգործս ձեռաց մերոց յաջողեսո մեզ»։ Ամեն»։

«Որք զարդարեցին» շարականից հետո, ընդհանուր լռության և հանդիսավոր իրադրության մեջ, խոսք առավ նաև Վեհափառ Հայրապետը և Իր հայրական խոսքն ուղղելով Հոգևոր Ճեմարանի վերատեսչության, դասախոսական կազմին և ուսանողության, ասաց.

«Մենք Մեր ուրախության խոսքը կբերենք Հոգևոր Ճեմարանի վերատեսչության, դասախոսական կազմին և ուսանողներուն։ Բարի գալուստ կմաղթենք դասախոսներուն, որոնք, վստահ ենք, թե երկու ամսվան հանգիստեն հետո, հոգվով և մարմնով կազդուրված, նոր եռանդով, ավելի ջերմ զգացումներով պիտի վերսկսին իրենց վեհ գործը Հոգևոր Ճեմարանեն ներս։

Բարի գալուստ նաև մեր նոր ուսանողներուն, թվով մոտ քսան հոգի, որոնք իրենց քննությունները հաջող կերպով հանձնած՝ այսօրվընե կհամարվին Հոգևոր Ճեմարանի սաներ։

Վստահ ենք, որ մեր մյուս ուսանողները ևս, որոնք անցյալ և նախորդ տարիներուն սորվեցան այստեղ, իրենց ամբողջ մտածումներով, սրտի և հոգիի կապերով կապված են մեզի, կապված են այս սուրբ հաստատության, և որոնք մոտ ապագային մեջ պիտի ծառայեն մեր Եկեղեցիին, մեր ժողովուրդին։ Անոնք պիտի ծանոթացնեն նոր ուսանողներուն այս հաստատության նպատակները և նոր ուսանողները պիտի միանան, պիտի եղբայրանան հիներուն հետ և պիտի դառնան մեկ սիրտ և մեկ հոգի։

Սրբազան հայրը իր խոսքերով հուզեց մեզ։ Իսկապես, սեպտեմբերյան այս օրերը Հայաստանի երիտասարդներուն համար երջանկության օրեր են, որովհետև բոլոր գիտական հաստատությունները՝ համալսարան, տեխնիկում, ինստիտուտ և ուրիշ կրթական բազմաթիվ հաստատություններ իրենց դռները լայն կբանան այս օրերուն մեր ժողովուրդի զավակներուն առջև, որպեսզի գիտությամբ և հայրենասիրությամբ զինվին և ապագային սատարեն հայ ժողովուրդի հառաջդիմության և Հայ Հայրենիքի ծաղկման։

Մեր Հոգևոր Ճեմարանը իր հատուկ ծրագրով և հատուկ նպատակներով սուտաֆնապես կտարբերի մյուս կրթական հաստատություններեն, սակայն խորքին մեջ Մենք պիտի չուզեինք, որ մեր Ճեմարանը իր հիմնական նպատակներով տարբերեր մյուս հաստատություններեն և մեր ուսանողները՝ անոնց ուսանողներեն։

Դուք, սիրելի՛ ուսանողներ, ամենեն առաջ հայ ժողովուրդի զավակներն եք և մեր Հայրենիքի քաղաքացիները, դուք հեռու չեք հայ ժողովուրդի ապրումներեն և իղձերեն։ Միայն աշխատանքի բաժանում մը կա, ինչպես այդ կա նաև մյուս հաստատություններուն միջև. օրինակ՝ բոլորովին այլ բան կսորվի ելեկտրագիտության հետևող ուսանող մը և այլ բան՝ երաժշտության հետևող ուսանող մը։ Բայց այդ երկուքն ալ նույն բնդհանուր նպատակներուն կծառայեն՝ հայ

[illegible]

ժողովուրդին և Մայր Հայրենիքին: Մենք կկասենանք, որ այս զգացումը տիրական ըլլա ձեր սեր և մնա անսասան:

Մեր հասաաաությունը կրոնական հաստատություն է: Զեղմն ամեն մեկը եկած է այստեղ իդեալով մը, երազով մը: «Երազ» բառը գտագործեցինք այստեղ, որովհետև երազի դաղափարի հետ կապ ունի մեր գործը: Մեսք բոլորս, իսկապես բոլորս, կկազմենք երազողներու համայնք մը: Բայց մենք երազը կամ տեսիլքը չենք բաժներ կյանքենք: Ամեն մեծ գործ երազով կսկսի: Մեր երազը ապագա գործի տեսիլքն է, որ մեզ կկանչե հեռուներեն: Երազողներ և գործողներ պիտի ըլլամ դում, բավարարելու համար մեր ժողովուրդի հրամարիտ իդեաները: Մեր երազը հիմնված է հայ ժողովուրդի հավատքին վրա, մեր պատմության, մեր արժեքներուն և մեր ժողովուրդի ու Հայրենիքի ներկա իրականության և ապագայի իդեաներուն վրա:

Կմաղթենք բոլորիդ առողջություն, ջանասիրություն և կորով ձեր ուսման ընթացքին մեջ:

Կմաղթենք, որ դում բոլորդ ալ բարձրանամ մտքով ու հոգիով դեպի այն բարձունքը, որ Մենք կուզենք որ դում հասնիք: Մենք, վերատեսուչը, փոխ-տեսուչը, դասախոսական կազմը պիտի օգնենք ձեզ այդ սուրբ նպատակին վրա:

Կօրհնենք ձեզ բոլորդ: Թող աստվածային լույսը և շնորհքը առատապես իջնեն ձեր հոգիներուն ներս, որպեսզի դում ծլիք, ծաղկիք այս սուրբ հարկին տակ, որպես «ձիրանի պտղալից», և պատրաստվիք նվիրվելու Աստուծո փառքին, Ս. Էջմիածնին և մեր հավատացյալ ժողովուրդին»:

Բուռն ծափահարությունների տակ Վեհափառ Հայրապետը վերջացրեց Իր խոսքերը. Սրահում հանդիսավոր կերպով հնչեց «Էջ Միածին ի Հոր» շարականը: Ապա Վեհափառ Հայրապետը օրհնեց բոլորին:

Հոգևոր ճեմարանի վերաբացման հանդիսությունից հետո տեսչարանում դումարվեց առաջին մանկավարժական ժողովը վերատեսչի նախագահության տակ և քննության առնվեցին կազմակերպչական հարցեր:

Ժամը 2-ին Վեհափառ Հայրապետը Վեհարանում պաշտոնապես ընդունեց Հոգևոր ճեմարանի վերատեսչության և դասախոսական կազմին՝ ուսումնական նոր տարվա կապակցությամբ:

Ժամը 2.30-ին վանքի սեղանատանը տրվեց հաշկերույթ, որին ներկա էր նաև դասախոսական ամբողջ կազմը: Միաբանության անունից նոր ուսանողներին շնորհավորեց դերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը: Դասախոսական կազմի անունից խոսեցին պր. Ա. Հատիտյանը և պր. Ս. Կոնսուլյանը:

Անցավ Հոգևոր ճեմարանի վերաբացման 1958—1959 ուսումնական տարվա առաջին օրը:

Սեպտեմբերի 9-ին, երեքշաբթի առավոտ, սկսվեցին կանոնավոր դասավանդությունները Հոգևոր ճեմարանում:

ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ՏԻՐԱՅՐ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՐՏԻԿՅԱՆ

(Առաջնորդական տեղապահ
Ալդրիջանի և Թուրքեստանի թեմի)

ՀՈՎՎՍԿԱՆ ՍՅՈՒԵԼՈՒԹՅՈՒՆ ՌՈՒՄԻՆԱՀԱՅ ԵՎ ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ ԹԵՄԵՐԻՆ*

Ուղևորությունը Բուխարեստից Սոֆիա օդային ճանապարհով ուղիղ մեկ ժամ տևեց։ Սոֆիան լողում էր լույսերի մեջ։ Դիմավորության համար օդանավակայան էին եկել թեմական և թաղական խորհուրդների անդամները, քահանան, հավատացյալներ և Կրոնից նախարարության ներկայացուցիչը։

Բարի գալուստի և ողջույնի սրտագին խոսքերից հետո ինձ առաջնորդեցին «Սլավյանսկայա բեսեդա» («Սլավոնական զրույց») կոչված հյուրանոցը, քաղաքի կենտրոնական մասում։

Հաջորդ օրը, առավոտ կանուխ, ցանկացա ծանոթանալ քաղաքին։ Սոֆիան կանաչ քաղաք է, թաղված փարթամ կանաչի գիրկը, Վիտոշ լեռան ստորոտին։ Ջուրը շատ սառն է։ Ո՛չ միայն Սոֆիան, այլև ամբողջ Բուլղարիան կարելի է նմանեցնել մի հսկայական այգու, հոյակապ պարտեզի, ծաղիկներով և կանաչով շրջապատված։ Այցելեցի տեսարժան վայրերը, եղա թանգարաններում, ապա Շահումյանի անվան կոշիկի ֆաբրիկայում, որտեղ աշխատում են բազմաթիվ հայեր։ Շահումյանի անվան ֆաբրիկայի կոշիկի արտադրությունը հանրածանոթ է Բուլղարիայում և արտասահմանում։

Մայիսի 11-ին, կիրակի օրը, պատարագեցի և քարոզեցի Սոֆիայի հայոց եկեղեցում։ Երգում էր եկեղեցու քառաձայն երգեցիկ խումբը։

Մայիսի 12-ին, երկուշաբթի առավոտյան, թեմական և թաղական խորհուրդների մի քանի անդամների հետ դնացինք Սոֆիայից 20 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Բանկի գյուղը, որը շատ հարուստ է հանքային ջրերով։

Մայիսի 13-ին, երեքշաբթի, երեկոյան ժամը 7-ին Սոֆիայի հայոց եկեղեցում դասախոսեցի Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մասին։

Մայիսի 14-ին, չորեքշաբթի, երեկոյան գնացքով, ընկերակցությամբ թեմական խորհրդի ատենապետ պր. Լևոն Համբարձումյանի, մեկնեցի Վառնա քաղաքը, ուր հասա 12-ժամյա ճանապարհորդությունից հետո, հինգշաբթի օրը, Քրիստոսի Համբարձման տոնին։ Դիմավորող ժողովրդի հետ դնացինք դեպի հայոց եկեղեցին, որտեղ պատարագեցի և քարոզեցի։ Չնայած օրը հինգշաբթի էր, եկեղեցին լիքն էր հայ հավատացյալներով։

Տեղավորվեցի Վառնայի լավագույն հյուրանոցներից մեկում, որը գտնվում է քաղաքից դուրս 11 կիլոմետր հեռու, ծովի ափին, և կոչվում է Վառնա քաղաքի հիս անունով՝ Օդեսու։

Վառնան գտնվում է Սև ծովի լավագույն ափի վրա, հիանալի դիրքով, անչափ գեղեցիկ և արևոտ, որի համար էլ հին ժամանակի բանաստեղծներից կոչվել է «Սև ծովի մարգարիտ»։ Քաղաքը հիմնադրվել է Զ դարում մեր թվադրությունից առաջ հույների կողմից և կոչվել է այդ ժամանակ Օդեսու։ Հետաքրքրական են հռոմեական պարսպի

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1958 թվականի № Ը-ից։

մնացորդները և Վլադիսլավ Գ-ի հուշարձանը։ Վլադիսլավ լեհ իշխանը, բանակի գլուխն էր։ Վլադիսլավ լեհ իշխանը, բանակի գլուխն անցած, չեխերի, հունգարների և ռումինացիների հետ միասին կռվեց այստեղ թուրքական զորքերի դեմ և զոհվեց ճակատամարտում։ Ապա քաղաքը կոչվեց Վառնա։

Վառնայի հայ գաղութի հիսնադրությունը բարձրանում է մինչև Անի քաղաքի անկումը և ավերումը։

Թուրքերի տիրապետության շրջանին, Վառնայում ապրել է շուրջ 350 ընտանիք հայ, ամփոփված եկեղեցու և դպրոցի շուրջը։

Բուլղարիայի ազատագրումից հետո, 1878 թվականին (ռուսների կողմից), Վառնայի հայ գաղութի վիճակը բարվոքվում է։ 1896 թվականին Կոստանդնուպոլսի դեպքերի ժամանակ, շատ հայեր Կոստանդնուպոլսից և այլ դավառներից ղաղթում են դեպի Բուլղարիա։ Նրանց մեծ մասը հաստատվում է Վառնայում։

1922 թվականին, քեմալական հալածանքից ազատված հայեր ևս ապաստան են գտնում բուլղարական հյուրընկալ հողում։

1944 թվականի սեպտեմբերը Բուլղարիայի հայերին ևս բերել է իսկական ազատություն գերմանական բռնակալությունից։ Հայերը, որպես Բուլղարիայի լիիրավ քաղաքացիներ, վայելում են բուլղարների հետ հավասար իրավունքներ, առանց ենթարկվելու նախկինում գոյություն ունեցող ազգային սահմանափակումների և զրկանքների։

Վառնայում այցելեցի Ս. Կոստանդինի վանքը, որը ուխտատեղի է։ Մատուռը շատ աննշան է և գետնափոր, որովհետև թուրքերը, որոնք երկար ժամանակ տիրել են այս երկրին, թույլ չեն տվել, որ քրիստոնյաները բարձրագմբեթ և խաչազարդ եկեղեցի ունենան, ուստի Բուլղարիայի շատ եկեղեցիներ գետնափոր են և ոչ խաչազարդ։

Երեկոյան հայոց եկեղեցու բակում, որտեղ բավականին ժողովուրդ էր հավաքված, նորից զասախոսեցի Ս. Էջմիածնի վերաբերյալ, Վեհափառ Հայրապետի գործունեության, Ադրբեջանի թեմի և Հայրենիքի վերելքի մասին։

Նարաթ երեկոյան նավակատիքի արարողություն կատարեցի գերեզմանատան մատուռ մեջ։

Կիրակի օրը օծումը կատարեցի գերեզմանատան նորոգված մատուռ, որը քանդվել էր գերմանական ռմբակոծության ժամանակ, պատերազմի ընթացքում։ Հաճելի եղանակ էր։ Վառնայի հայ հավատացյալները դերեզմանատան բակում և մատուռ մեջ մասնակցում էին օծման գեղեցիկ արարողության։ Վառնայի Ս. Գրիգոր Լուսավորիչ մատուռ օծումից հետո պատարագեցի և քարոզեցի, հոգեպես մխիթարելով Վառնայի բարեպաշտ և հավատացյալ հայերին։

Երեկոյան, թաղական խորհուրդը գերեզմանատան մատուռ օծման առթիվ ճաշկերույթ տվեց, որին մասնակցում էին գաղութի ներկայացուցիչները։ Սեղանների շուրջ ստեղծվել էր ջերմ, հայկական մթնոլորտ։

Երկուշաբթի օրը հյուրը եղա թաղական խորհրդի անդամ պր. Գրիգոր Մարինյանի։ Մեզ հետ էր նաև ռումինահայ թեմական խորհրդի անդամ պր. Տիգրան Մինասը։

Ապա այցելեցինք քաղաքից 15 կիլոմետր հեռու գտնվող Ալաձա վանքը, որը կառուցված է ժայռի մեջ 6—7 դարերում և վերանորոգված միջին դարերում։ Վանքից երեք կիլոմետր հեռու, ծովափում, հյուրասիրվեցինք «Ոսկե ձկնիկ» ճաշարանում։

Երեկոյան, պր. Օննիկ Մարտիկյանի ավտոմեքենայով, թեմական և թաղական խորհուրդների ատենապետների ընկերակցությամբ, մեկնեցինք Տոլբուխին։ Վառնայից Տոլբուխին 50 կիլոմետր է։ Այս քաղաքը առաջ կոչվում էր Դոբրիչ և ծանոթ էր թուրք և ռումեն տիրապետության ժամանակ Հաջի սղլու Բազարջիկ կամ պարզ Բազարջիկ անունով։ Դոբրիչը բուլղարների կողմից կոչվում է նաև Զլաթնա Դոբրուջա (Ոսկե Դոբրիչ) իր բնական հարստությունների համար։ Այս քաղաքը, Հայրենական Մեծ պատերազմից հետո, ի պատիվ ռուս նշանավոր զորավարի, կոչվեց Տոլբուխին։ Այստեղ ապրում է շուրջ 300—400 հայ ազգաբնակչություն։ Երբ հասանք, ժողովուրդը մեզ սպասում էր եկեղեցու բակում։ Երեկոյան ժամերգությունից հետո քարոզեցի։

Տոլբուխինի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին կառուցվել է 1886 թվականին ժողովրդի լումաներով և օծվել 1894 թվականին։ Հինը, ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, թուրքերի կողմից վերածվել է ցորենի շտեմարանի և այրվել նահանջի ժամանակ։ Այս այրված եկեղեցու հիմքերի վրա էլ հետո կառուցվել է նոր եկեղեցին։

Տոլբուխինում այցելեցի հայոց Մամիկոնյան դպրոցը։ Ավելի ուշ, տեգի ազգային սրահում բանախոսեցի «Հայ ժողովուրդը երեկ և այսօր» թեմայով։ Դասախոսությունից հետո, շրջապատված հայրենակարոտ ժողովրդով, պատասխանեցի նրանց բոլոր հարցերին։ Եկեղեցու բակում քաղցր զրույցը տևեց բավական երկար։ Վերջում Տոլբուխինի հայերը հյուրասիրություն կազմակերպեցին բացօդյա մի ճաշարանում։ Արդեն ուշ գիշեր էր, երբ հրաժեշտ առինք տոլբուխինցիներից լավագույն տպավորություններով և վերադարձանք Վառնա։

Մայիսի 21-ի երեկոյան դպրոցի տնօրինության կողմից հրավիրվել էի նախագահելու դպրոցականների ամավերջի հանդեսին, որը տեղի ունեցավ «Մակեդոնսկի» կոչված սրահում։ Հանդեսը անցավ շատ հաջող։ Եղան արտասանություններ, երգեր՝ նվագախմբի մասնակցությամբ, բալետ և վերջում փոքրիկ ներկայացում ուսանողության ուժերով։

Հանդեսի վերջում փակման, շնորհակալության և հրաժեշտի սրտագին խոսք ասացի Վառնայի հայ ժողովրդին։

Մայիսի 22-ի առավոտյան գնացքով, ժողովրդական սրտառուչ հրաժեշտի արտահայտություններ տակ, մեկնեցի դեպի Կոլարովդրադ, անմոռանալի տպավորություններով թե՛ քաղաքից և թե՛ հայ գաղութից։

Ժամը 11-ին հասա Կոլարովդրադ, որի նախկին անունն է Շումեն։

Երեկոյան ժամերգությունից հետո քարոզեցի և ժամը 7-ին «Երևան» ակումբում դասախոսեցի «Ս. Էջմիածնի վերազարթոնքը և Հայրենի երկրի տնտեսական վերելքը» թեմայով։

Կոլարովդրադում ապրում են մոտ 700 հայեր. ունեն եկեղեցի, դպրոց, երգչախումբ, պարախումբ և ինքնագործ թատերախումբ։ Չկա մի հայ տուն, որ իր մասնակցությունը չբերի վերոհիշյալ կազմակերպություններին։ Շատերի ասելով, Կոլարովդրադի հայոց պարախումբը և երգչախումբը Բուլղարիայի լավագույն խմբերից է։

Կոլտրովդրաղցիք շատ հյուրասեր ժողովուրդ են։ Թեև անակնկալ կերպով այցելեցի այս քաղաքը, սակայն այնուամենայնիվ ջերմ կերպով հյուրասիրվեցի հայ գաղութից և ժողովրդից։ Գիշերը, ժամը 10.10-ին, գնացքով մեկնեցի դեպի Սոֆիա։ Մինչև այստեղ վայելել էի ընկերակցությունը պր. Գրիգոր Մարինյանի։ Բաժանման սրտառուչ պահն էր։ Պր. Գրիգոր Մարինյանը, այդ բարի, ազնիվ և հնգակա մարդը արտասվում էր...։

Մայիսի 24-ը ուրախության և ազգային տոնախմբության օր էր բուլղար ժողովրդի համար։ Այդ օր տոնն էր Կիրիլի և Մեթոդիոսի, որոնք բուլղարների Ս. Սահակն ու Ս. Մեսրոպն են, սլավոնական գրերի գյուտարարները և սլավոնյան գրականության հիմնադիրները։ Փակ են դպրոցներ։ Աշակերտությունը շքերթի մեջ է։

Երեկոյան հսկումի արարողություն կատարեցի Սոֆիայի հայոց գերեզմանատան մատուռ մեջ։

Մայիսի 25-ին, կիրակի, Հոգեգալուստ։ Գերեզմանատան մատուռ օծումն է կատարվելու այսօր։ Այս իսկ պատճառով ներկա է նաև Պլովդիվ քաղաքի ավագ քահանա Տ. Գևորգ Սարյանը։

Օծման սրբազան արարողության հրավիրված էին նաև բուլղար բարձրապատիվ Տ. Գորազտ վարդապետը, հայ ավետարանականների ներկայացուցիչը և ուրիշ պաշտոնական հյուրեր։ Ներկա էր նաև Սոֆիայի ամբողջ հայ գաղութը։ Այս մատուռը նույնպես կոչվեց Ս. Գրիգոր Լուսավորչի անունով։ Պատարագեցի և քարոզեցի։ Ապա շնորհավորության ե ողջույնի ջերմ խոսք ասաց Բուլղար Օրթոդոքս Եկեղեցու ներկայացուցիչ, Սինոդի քարտուղար, բարձրապատիվ Տ. Գորազտ վարդապետը։

Ժամը 4.30-ին նախագահեցի Սոֆիայի հայոց դպրոցի տարեվերջի հանդեսին։

Երեկոյան ժամը 7-ին հրավիրվեցի Բուլղար Օրթոդոքս Եկեղեցու Սոֆիայի հոգևոր ճեմարանի ուսանողության տարեվերջի համերգին, որը նվիրված էր Ս. Կիրիլին և Ս. Մեթոդիոսին։ Ռումինահայ և բուլղարահայ Թեմական խորհուրդների անդամների ներկայացուցիչների ընկերակցությամբ ներկա եղանք այս համերգին։ Մեզ սիրալիր ընդունելություն ցույց տվեց ճեմարանի ռեկտոր դերաշնորհ Տ. Նիկոլայ սրբազանը։

Համերգին երգում էր ճեմարանի ուսանողների 60 հոգուց բաղկացած խումբը։ Գործադրվեց ճոխ ծրագիր։ Համերգի վերջում հյուրասիրվեցինք հոգևոր ճեմարանի ռեկտորի կողմից։

Մայիսի 27-ին, ընկերակցությամբ թեմական խորհրդի անդամ, փաստաբան Ա. Ռումյանի, այցելեցի Բուլղարիայի Օրթոդոքս Պատրիարքարանը։ Բուլղարիայի Պատրիարք Ամենապատիվ Կիրիլ Սրբազանը գտնվում էր Ս. Էջմիածնում և հյուրն էր Ամենայն Հայոց Հայրապետի։ Ինձ սիրով ընդունեցին մի քանի միտրոպոլիտներ և Սինոդի քարտուղար Գորազտ վարդապետը։

Ճիշտ այն պահին, երբ իրար էինք ողջունում Բուլղար Պատրիարքարանում, Ամենապատիվ Կիրիլ Պատրիարքը զանգահարեց Մոսկվայից և հաղորդեց, որ ինքը եղել է Էջմիածնում և հարուստ տպավորություններով վերադարձել Մոսկվա։

Հրաժեշտի պահին Գորազտ վարդապետը ինձ գրկեց, համբուրեց և ասաց. «Ես սիրում եմ խելացի մարդկանց. առաջին իսկ րոպեից զգացի և համոզվեցի, որ Ձեր վարդապետը խելացի է։ Ես հայերին շատ եմ սիրում, բայց այս վարդապետին՝ ավելի շատ»։

Նույն օրը այցելեցինք սովետական և ապա ռումինական դեսպանատները, որտեղ և սիրալիր ընդունելության արժանացանք թեմական խորհրդի անդամների հետ։ Մեզ հետ

էին սան ռումինահայ գաղութի ներկայացուցիչները։

Երեկոյան ռումինահայ թեմական խորհրդի անդամ փաստաբան պր. Տիգրան Սիրասի և առաջնորդարանի քարտուղար պր. Հովհաննես Գալփաքյանի ընկերակցությամբ, որոնք եկել էին Բուխարեստից ինձ ընկերանալու և աջակցելու այցելեցինք Երևան շարաթաթերթի խմբագրատունը, որտեղ մեզ սիրալիր ընդունեց և հյուրասիրեց խմբագիր պր. Բենիամին Թյուֆենքճյանը, խմբագրության աշխատակիցներով։

Մայիսի 29-ին, առավոտյան շատ կանուխ պատրաստվեցինք մեկնելու Ռիլայի վանքը։ Սոֆիայից մինչև Ռիլայի վանքը 120 կիլոմետր հանապարհ է։ Վանքը կառուցված է ծովի մակերևույթից 1175 մետր բարձրության վրա և Ռիլա լեռան անունով կոչված է Ռիլայի վանք։ Վանքում կան մոտ 300 սենյակներ։

Ռիլայի վանքը, որը կառուցված է 876—945 թվականներին, ունի հարուստ դրադարան և թանգարան։ Թուրքական ծանր լծի երկար ժամանակաշրջանում վանքը եղել է բուլղար ժողովրդի ազգային ազատագրական շարժման վառ օջախ։ Ռիլայի վանքը հանդիսանում է Բալկանյան աշխարհի ամենահռչակավոր վանքը և միաժամանակ բուլղարական մշակույթի ամենափայլուն հուշարձանը։

Վանքում մեզ դիմավորեցին եղբայրական սիրով։ Մեզ ընդունեց վանքի փոխ-վանահայր բարձրապատիվ Տ. Մյուռոն վարդապետը, որը պատշաճ բացատրություններ տվեց մեր վանքի շինության և պատմության վերաբերյալ։ Սպա այցելեցինք եկեղեցին, թանգարանը, գրադարանը և վանքի ամբողջ շրջակայքը։ Վանքի ջուրը շատ սառն է։ Ավելի ուշ, հյուրասիրվեցինք փոխ-վանահոր կողմից և վայելեցինք վանքի բարիքները։ Երեկոյան շատ ուշ վերադարձանք Սոֆիա, անմոռանալի հուշերով։ Ճանապարհին դեռևս խորհրդածում էի բուլղարական այդ նշանավոր վանքի մասին։

Մայիսի 30-ին, առավոտյան ժամը 9-ին, թեմական խորհրդի ատենապետ պր. Լեռն Համբարձումյանի և պր. Տիգրան Մինասի հետ մեկնեցինք Պլովդիվ (Նախկինում Ֆիլիպե), այնտեղ ես պատարագելու, քարոզելու և դասախոսելու։ Պլովդիվի կայարանում մեծ բազմություն էր եկել մեզ դիմավորելու համար, թաղական խորհրդի ատենապետ պր. Գեորգ Կարապետյանի գլխավորությամբ։

Հանդիսավոր ընդունելություն էր կազմակերպված Ս. Գեորգ եկեղեցում։ Բարի գալուստի խոսք ասաց արժանապատիվ Տ. Գեորգ ավագ քահանան։ Հուզված այս ջերմ ընդունելությունից, ողջույնի խոսք ասացի բոլոր ներկաներին, հաղորդելով Վեհափառ Հայրապետի ողջույնն ու օրհնությունը։ Ժողովուրդը արտասվում էր և օրհնում Ամենակալ Հայոց Հայրապետին, որ իրենց չէր մոռացել և ուղարկել էր Ս. Էջմիածնից Իր պարդապետին։

Տեղավորվեցինք Տրիմոնտիում (Երեք սար) կոչված նորակառույց հոյակապ հյուրանոցում, որի տնօրենը հայ էր՝ պր. Արշավիր Վարդերյան։

Երեկոյան, Հայ մշակույթի տան սրահում, դասախոսեցի Ս. Էջմիածնի, Վեհափառ Հայրապետի գործունեության ու Հայրենիքի վերելքի մասին։

Մայիսի 31-ին այցելեցինք Պլովդիվից 30 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Բաչկովայի վանքը։ Վանքը կառուցված է 1080 թվականին։

Բաչկովայի վանքը բուլղարական արվեստի և ճարտարապետության ամենագեղեցիկ հուշարձաններից է։

Վանահայրը բացակայում էր, մեզ ընդունեց վանքի միաբաններից մի արեղա և բացատրություններ տվեց վանքի և թանգարանի մասին։ Վերջում հյուրասիրվեցինք։ Մի բանի ժամ վանքում մնալուց հետո վերադարձանք Պլովդիվ։

Հունիսի 1-ին պատարագեցի և քարոզեցի Ս. Գեորգ եկեղեցում։ Կեսօրից հետո ներկա եղա Պլովդիվի «Երևանս միության կազմակերպած դաշտադնացության դեպի Պրբվենց գյուղը, որը կոչվել է նաև Ֆեոնանդո և Դեյիրմենդերե։

Հունիսի 3-ին, դժվարությամբ բաժանվեցինք պլովդիվցիներից։ Թաղական խորհրդի ատենապետ պր. Գեորգ Կարապետյանը, այդ աշխույժ և եռանդուն մարդը, ոչինչ չէր խնայել, ամեն ինչ արել էր, որպեսզի ընդունելությունը կատարյալ լինի։

Հիմա, երբ հեռու եմ այս սիրելի մարդկանցից և գրում եմ այս տողերը, կարող եմ վստահարար ասել, որ իրավունք չունեմ մոռանալու մանավանդ երեք մարդկանց, որոնց հանդիպեցի Ռումինիա և Բուլղարիա իմ այցելության ժամանակ։ Դրանցից առաջինը Բուխարեստի թեմական խորհրդի փոխնախագահ պր. Վահրամ Դանիելյանն է, երկրորդը Վառնայից պր. Գրիգոր Մարինյանը և երրորդը Պլովդիվի թաղականության ատենադետ Գեորգ Կարապետյանը, որոնք շատ հաճախ պատկերանում են աչքերիս առաջ և հիշում եմ նրանց՝ կանգնած հրաժեշտի պահին կայարաններում, հեռացող գնացքի հետ վազելիս մանկական ուրախությամբ և մանկական միամտությամբ՝ գնացքը կանգ-

նեցնելու և վարդապետին իրենց մոտ ավելի երկար պահելու համար։

Մնաս բարո՞վ և քեզ Պլովդիվ և ժողովուրդ հայոց, որ ապրում ես այս գեղեցիկ և հարուստ քաղաքում։

Հունիսի 4-ին, ընկերակցությամբ թեմական խորհրդի ատենադպիր պր. Լևոն Համբարձումյանի, այցելեցի Կրոնից նախարարություն, որտեղ և ընդունվեցի պր. Քուչուկովի կողմից։

Երեկոյան ներկա եղա Սոֆիայի «Երևան» երգչախմբի համերգին, որը տեղի ունեցավ «Բուլգարիա» լավագույն սրահում։

Սոֆիայի թաղական խորհուրդը հրաժեշտի ճաշկերույթ տվեց «Բուլգարիա» ճաշարանում։ Ճաշկերույթին հրավիրված էին Սինոդի բարտուղար Տ. Գորաղտ վարդապետը, Կրոնից նախարարության ներկայացուցիչ պր. Սադիխովը, «Երևան» միության ատենապետ պր. Մ. Խաչիկյանը, «Երևան» թերթի խմբագիր պր. Բ. Թյուֆենկճյանը, ռումինահայ թեմական խորհրդի ներկայացուցիչները, հայ ավետարանականների ներկայացուցիչը և շատ ուրիշներ։

Ճաշկերույթն անցավ ջերմ մթնոլորտում։ Թեմական խորհրդի ատենապետ պր. Լևոն Համբարձումյանը թարգման հանդիսանալով հայ դպրության և ներկաների, ասաց.

«Ը պաշտոնն և ի մասնավորի ի խորոց սրտի՝ երկու խոսք կփափագիմ ուղղել հոգեշնորհ Տիրայր վարդապետին։

Սիրելի՛ հայր սուրբ, եկաք հրամանով Վեհափառ Կաթողիկոս Վազգեն Ա-ի, սփոփելու մեր կարոտտենչ սրտերը, վերարծարծելու մեր հավատքը և պայծառացնելու մեր եկեղեցին։ Եկաք մանավանդ բերելու մեզ սրտարուխ ողջույնները Մայր Հայրենիքի և օրհնությունները Ադոիս թանկագին Հայրապետին։

Դուք նույնպես եկաք իբրև առաքյալ մը և հանդիպ լեցուն հայրենասեր հոգևորական մը, Ձեր խոսքով ու քարոզով խորապես ազդեցիք մեր վրա։ Դուք կրցաք դանել մեր բոլորի սրտի ճամբան։ Կարծեմ, թե սխալած չեմ բլլար, եթե բոլորին թարգմանը բլլալով մաղթեմ, որ մոտիկ ապագայի մը մեջ Ձեզ մեր մեջ կրկին ունենանք, ի՛նչ հանդամանքով որ հաճի տնօրինել Վազգեն Ա Կաթողիկոսը։

Սիրելի՛ հայր սուրբ, վստահ եմք, որ մեր գաղութին սերը և հարգանքը միասին կտանիք Ձեզ հետ։ Միաժամանակ Ձեզ հետ տարեք մեր փոխադարձ սիրո և կարոտի զգացումները Մայր Հայրենիքին և մեր բոլոր հայ եղբայրներուն, և մեր հավատարմության հավաստիքը Ս. Էջմիածնին, ուր արժանավորագույն կերպով կրաղմի մեր երբեմնի սիրելի առաջնորդը՝ Վազգեն Ա Կաթողիկոսը։

Մենք Իր հավատարիմ հավատացյալներն ենք։ Ս. Էջմիածնի հետ զուգահեռ Մայր Հայրենիքի հմայքը կտարածվի աշխարհի բոլոր այն անկյունները, ուր հայ մը կապրի, ուր հայ հոգին կթրթռա։ Ի սրտե կմաղթենք, որ Վեհափառ Հայրապետի այս աղդաշեն և սուրբ գործը զարգանա, առավել ևս Ձեզ նման ձեռներեց երիտասարդ միաբաններու գործակցությամբ։

Բարի ճանապարհ, սիրելի՛ վարդապետ. Աստված Ձեզ հետ։

Հունիսի 6-ի երեկոյան կայարան էին եկել Կրոնից նախարարության ներկայացուցիչ պր. Սագիխովը, բարձրապատիվ Տ. Գորաղտ վարդապետը, թեմական և թաղական խորհուրդների անդամները և շատ ժողովուրդ։

Հրաժեշտի ժամն էր։ Ժողովուրդը մեկիկ-մեկիկ մոտենում էր։ Հուզիչ էր պատկերը, երբ երկու երեխաներ՝ Նվան և Սարգիսը, իրենց կողմից և իրենց ձեռքով պատրաստած ճանապարհի ուտելիքը մատուցեցին մեզ։

Կրոնից նախարարության ներկայացուցիչ պր. Սադիխովը, որ մեր կողքին կանգնած ականատես էր այս բոլորին, ասաց.

«Ես շատ ուրախ եմ, որ Դուք շատ կարճ ժամանակում այսքան սիրվեցիք Ձեր հայ ժողովրդի կողմից և լավ հարաբերության մեջ մտաք բուլգար բարձրաստիճան հոգևորականների հետ։ Դուք կենսուրախ եք և երբեք հոգնություն չեք զգում. այդ շատ լավ է։ Շնորհավորում եմ Ձեզ և ցանկանում բարի ճանապարհ և շատ-շատ հաջողություն»։

Երեկոյան ժամը 10-ին գնացքը Սոֆիայից շարժվեց դեպի Ռուսև, որը պիտի լիներ մեր այցելության վերջին քաղաքը։

Ռուսեն գտնվում է ռումինական սահմանի մոտ, Դանուբի ափին։

Առավոտյան հասանք Ռուսև։ Ժողովուրդը սպասում էր գեղեցիկ և մեծ կայարանում։

Երեկոյան ժամը 7-ին, ժամերգությունից հետո, դասախոսեցի «Երևան»-ի սրահում։

Կիրակի օրը՝ «տօն Կաթուղիկէ Ս. Էջմիածնի»։ Պատարագեցի և բարոզեցի Ռուսևի հայոց եկեղեցում։

Ռուսևի հայոց եկեղեցին, ինչպես նաև ռումինահայ և բուլգարահայ բոլոր եկեղեցիները հարուստ են եկեղեցական զգեստներով, վարագույրներով, սպասներով, խաչերով, որբատուփերով, աշտանակներով, ծածկոցներով և դորդերով։

Կեսօրից հետո ներկա եղա հայկական գպրոցի ամավերջի հանդեսին։

Երեկոյան, Ռուսևի թաղական խորհուրդը ճաշկերույթ տվեց, որին մասնակցեցին ռումինահայ թեմի ներկայացուցիչները և շատ հայ ընտանիքներ։

Շուրջ մեկ ամիս մնալուց հետո բուլղարահայ գաղութում, հունիսի 9-ին մեկնեցի դեպի Բուխարեստ։ Շատեր կայարան էին եկել ողջերթի։ Ժամը 6.30-ին գնացքը շարժվեց։

Մնաս բարո՜վ Բուլղարիա, մնաս բարո՜վ բուլղար բարի և աշխատասեր ժողովուրդ։

Հունիսի 10-ին, ցերեկվա ժամը 9.15-ին կրկին Բուխարեստում էի, ուր այս անգամ մնացի 10 օր։

Բաժանման սրտառուչ ժամն էր։ Սդանավակայան էին եկել քահանայից դասը, թեմական և թաղական խորհուրդների անդամները, Կրոնից նախարարության տնօրենը, Սևան և «Նոր կյանք» թերթերի ներկայացուցիչները և շատ ուրիշներ։

Փոխանակվեցին վերջին անգամ ջերմ սիրո, շնորհակալության և հրաժեշտի խոսքեր, որոնք երբեք չեն ջնջվի մարդու հիշողությունից։

Ի նշան շնորհակալության լավ հյուրասիրության և բարեկամական ջերմ ընդունելության, օդանավակայանից հեռագրեցի հետևյալը.

«Ռումինական Ժողովրդական Ռեսպուբլիկայի Մինիստրների խորհրդին առընթեր Դավանության բաժանմունքի պր. ընդհանուր բարտուղարին.

Այս վայրկյանին, երբ հեռանում եմ գեղեցիկ և հյուրասեր Ռումինական Ժողովրդական Ռեսպուբլիկայից, իմ մտածումը գոհունակությամբ ուղղվում է առ Ձեզ այն հատուկ ուշադրության և օժանդակության համար, որ տվիք ինձ իմ՝ Ռումինական Ժողովրդական Ռեսպուբլիկա այցելության ժամանակ։ Միշտ պիտի աղոթեմ Ռումինական Ժողովրդական Ռեսպուբլիկայի ծաղկման և զարգացման և աշխատավոր ժողովրդի բարօրության համար, ինչպես նաև անձնապես Ձեր առողջության, արևշատության և երջանկության համար»։

Քիչ վերջ ինքնաթիռը աղմկեց և պատրաստվեց թռիչքի։ Մնաս բարո՜վ գեղեցիկ Ռումինիա, մնաս բարո՜վ հայ ազնիվ և հավատավոր ժողովուրդ։

Կիևում մի փոքր հանգստանալուց հետո, ինքնաթիռը ուղղություն վերցրեց դեպի Մոսկվա, որտեղ հասանք 7 ժամից։

Մի քանի օր մնացի Մոսկվայում, որպես հյուրը Մոսկվայի հայոց հոգևոր հովիվ հոդեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանի։ Պատարագեցի և քարոզեցի։

Հունիսի 26-ին, Ս. Սահակ Պարթև Հայրապետի և Մեսրոպ Մաշտոց վարդապետի տոնի օրը հասա Էջմիածին, երեք ամիս տևող հովվական այցելությունից հետո։

Ներկայացա Հայոց Հայրապետին և կարոտով համբուրեցի Նրա Ս. Աջը և ներկայացրի հովվական իմ այցելության զեկուցագիրը։

Մի քանի օր Ս. Էջմիածնի միաբանության հյուրը լինելուց հետո մեկնեցի Բաքու, որտեղ իմ ժողովուրդը սպասում էր անհամբեր։

Կիրակի օրը պատարագեցի և քարոզեցի «Տէ՛ր, ուղղա՜ զգնացս մեր ի ճանապարհս խաղաղութեան» ընթերցանով։



ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄՈՒՄ

Հյուսիսային Ամերիկայի Հայոց Արևելյան Թեմի Թեմական խորհրդի որոշմամբ, առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանի նախագահությունակ, 1957 թվականի դեկտեմբերին կազմվել է կենտրոնական հանձնաժողով, արժանավոր շքով նշելու համար 1957 թվականի դեկտեմբեր ամսից մինչև 1958 թվականի հունվար և փետրվար ամիսները, Խրիմյան Հայրիկի մահվան հիսնամյակը, Արևելյան Թեմի ավելի քան 42 համայնքների եկեղեցիներում։

Կենտրոնական հանձնաժողովը ձեռնասորեն կազմել և ղեկավարել է Խրիմյան Հայրիկի մահվան հիսնամյակին նվիրված տոնակատարությունների ծրագիրը, հրատարակելով միաժամանակ Խրիմյան Հայրիկի կյանքն ու գործունեությունը պատկերող հոբելյանական մի գրքույկ, հայերեն և անգլերեն լեզուներով։

Հատկապես առանձին շքով է նշվել Խրիմյան Հայրիկի մահվան հիսնամյակը Նյու-Յորքի հայոց Թեմի վեց եկեղեցիների մասնակցությամբ, 1958 թվականի հունվարի 26-ին։ Այդ օրը առաջնորդ սրբազան հայրը եպիսկոպոսական հանդիսավոր պատարագ է մատուցել Նյու-Յորքի Եպիսկոպոսական Սեյնտ Ջան դը Դիվայն Մայր Տաճարում, որին ներկա են եղել ոչ միայն 6000-ից ավելի հավատացյալ հայեր, այլ նաև Հայոց Եկեղեցին սիրող և Խրիմյանի հիշատակը հարգող բազմաթիվ ամերիկացի հոգևորականներ, որոնց թվում Եպիսկոպոսական Մայր Եկեղեցու երեց դոկտ. Ջեյմս Պայկը, Դին Կանոնը և շատ ուրիշներ։

Սուրբ պատարագը երգել է 150 հոգուց բաղկացած դպրաց դասը դպրապետ պր. Ներսես Ներսեսյանի ղեկավարությամբ։

Եպիսկոպոսական Մայր Եկեղեցու երեց դոկտ. Դին Պայկը բարի Գալստյան և ող-



ՄԱՄԲՐԵ ՍՐԲԱԶԱՆԸ ՀՈՐԵՍ Պ. ԴՈՆԻԿՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՀԵՏ

ջույնի սրտագին խոսք է ասել հայ հավատացյալներին, շեշտելով Հայ Եկեղեցու և Եպիսկոպոսական Եկեղեցու հավատի նույնությունը և ստեղծված եղբայրությունը։ «Պատիվ է մեզ համար,—ասել է նա իր ողջույնի խոսքում,—մեր եկեղեցում Հայաստանյայց Եկեղեցու սուրբ պատարագի մատուցումը։ Մեր սերն ու բարեկամությունը միշտ ձեզ հետ կլինեն»։

«Հայր մեր»-ի ժամանակ պատարագիչ Տ. Մամբրե արքեպիսկոպոսը խոսել է բովանդակալից. քարոզ «Ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց» (Յովհ. Ժ 11) բնաբանով։ Քարոզիչ սրբազանը Խրիմյանին ներկայացրել է որպես իսկական ավետարանական «քաջ հովիվը», վեր հանելով Խրիմյանի բազմակողմանի գործունեության բոլոր հանգրվանները, ուր նա հանդես է եկել որպես ժողովրդի ուսուցիչ և դաստիարակ, վարդապետ ու առաջնորդ, պատրիարք և կաթողիկոս։ Իր քարոզի մեջ սրբազանը հատկապես կանգ է առել Խրիմյան Հայրիկի սրբատառ այն կոնդակի վրա, որով հաստատում է ամերիկահայ թեմը և հայրական սրտով հորդորում է ամերիկահայությանը՝ չմոռանալ Հայոց աշխարհը, Ս. Էջմիածինը, սիրել հայոց լեզուն, ամենայն երկյուղածությամբ պահել հայրենական ավանդությունները, ապրել խաղաղությամբ ու սիրով, որպես նույն ժողովրդի հարազատ զավակները։

Քարոզի վերջում առաջնորդ սրբազանը սրտագին շնորհակալություն և երախտագիտություն է հայտնում ամբողջ թեմի անունից Եպիսկոպոսական Եկեղեցու իշխանավորներին, որոնք այնքան ազնվորեն տրամադրել էին իրենց Մայր Տաճարը հայոց սուրբ պատարագի համար և իրենց

ՊԱՏԱՐԱԳ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՅՈՒ-ՅՈՐՔԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՍԵՅՆԹ ՋԱՆ ԴՀԸ ԴԻՎԱՅՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

սրտագին մասնակցությունն էին բերել Խրիմյանի հիշատակին նվիրված հանդիսություններին։ «Սրտառուչ երևույթ մրն է,—ասաց իր քարոզում գերաշնորհ սրբազան հայրը,— որ Եպիսկոպոսական Եկեղեցին, իբրե հարազատ քույր եկեղեցի, իր նշանավոր առաջնորդ սրբազան եպիսկոպոսներով, ինչպես անցյալին բիշոպ Ուիլյամ Տ. Մենինգի, և ներկայիս բիշոպ Հորես Պ. Դոնիկոնի և Դին Ջեյմս Պայկի սիրալիր աջակցությամբ, զորավիգ եղած է առաջնորդարանիս և մեզի։ Այս առթիվ Եպիսկոպոսա-

կան Եկեղեցվո իշխանավորներուն և ծխականներուն կհայտնենք վիճակիս ժողովուրդին և մեր սրտագին երախտագիտությունը այդ ասպնջական վերաբերմունքին համար։ Քրիստոսի շնորհը անպակաս ըլլա ամենքին վրա»։

Սուրբ պատարագի վերջում կատարվում է հանդիսավոր հոգեհանգիստ Խրիմյան Հայրիկի խնկելի հիշատակին նվիրված։

Նույն օրը երեկոյան Մք. Ալպին պանդոկի շքեղ սեղանատան մեջ հոգեճաշ է տրվում Հայրիկի հիշատակին։ Հոգեճաշին ներկա են լինում ավելի քան 400 հոգի։ Ճաշի ընթացքին գործադրվում է նաև գեղարվեստական մի հայտագիր։ Հուզիչ ու գեղեցիկ ճառերով ոգեկոչում են հիշատակը Վասպուրականի Արծվի տիկին Վերժին Էքսերճյանը՝ «Խրիմյան Հայրիկ և հայ ընտանիքը», Նուպար Տորոյանը՝ «Խրիմյան Հայրիկը և հայ երիտասարդությունը, «Պայքար» օրաթերթի կորովի խմբագրապետ կրադետ Անդրանիկ Անդրեասյանը՝ «Խրիմյանը որպես հանրային գործիչ, հոգևորական և կրթական մշակ», Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության վարիչտնօրեն Գրիգոր Կիրակոսյանը՝ «Խրիմյանի պատգամը», թեմական խորհրդի անդամ Ռիչարդ Գ. Գրեգորի, գնդապետ Գառնիկ Քեյ, Նշան Շահինյան և ուրիշներ։

Բարեգործական Կրթական հանձնաժողովի վարիչ քարտուղար Անդրանիկ Փոլատյանը պատրաստել էր 70 էջերից բաղկացած Խրիմյան Հայրիկի կենսագրությունը, հայերեն և անգլերեն լեզուներով, Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի 1957 թվականի նոյեմբերի 17-ին, Խրիմյանի մահվան հիսնամյակի առթիվ Ս. Էջմիածնի Մայր Տաճարում արտասանած քարոզի հետ միասին։ Այդ կենսագրական գրքույկը պատկերազարդվել է Խրիմյան Հայրիկի և Վեհափառ Հայրապետի նկարներով։

Հանդիսության գեղարվեստական բաժնին իրենց շնորհալի մանակցությունը բերել են երգերով Եդվարդ Գառնիկյան, Մարտիրոս Քյոշեյան, նվագով՝ օրիորդ Կետերին Ավագյան, արտասանությամբ՝ տիկին Արտեմիս Տարսոն։

Խրիմյան Հայրիկի մահվան հիսնամյակի առթիվ տրված հոգեճաշի սեղանի առաջ փակման խոսք է ասել արժանապատիվ Տ. Արսեն քահանա Աշճյանը։

Հոգեճաշը վերջացել է առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանի «Պահպանիչ»-ով։

Ամերիկահայ ամբողջ մամուլը, մտավորականությունը, բոլոր կազմակերպությունները արժանավայել կերպով նշում են Վասպուրականի Արծվի մահվան հիսնամյակը։



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՊՐ. ԱԼԵՔՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԲԱՑՄԱՆ ՈՒՂԵՐՁԸ 44-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ*

Հարգելի ժողովականներ.

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության 44-րդ ընդհանուր ժողովը կգումարենք այսօր, անոր 1956 տարեշրջանի գործունեության համարատվությունը լսելու և խորհրդակցելու համար օրակարգի այն բոլոր հարցերուն մասին, որոնք սերտորեն կապված են մեր կազմակերպության կյանքին ու ապագային հետ։

Ուրախությամբ կողջունեմ ձեզ բոլորիդ, որ Միության անհողդողդ հավատավորներն եր, անոր համար կտրնիք ու կդոհաբերեք, և ջերմեռանդ ուխտավորներու նման եկած եք ձեր պարտականությունը կատարելու, վասնզի լավ գիտեք, թե այս մեծ Ընկերությունը ի՞նչ վճռական դեր մը կկատարե մեր ժողովուրդին ճակատագրին բարելավման համար։

Իր գոյության երկրորդ հիսնամյակին առաջին տարիին մեջ է այսօր Հ. Բ. Ը. Միությունը։ Անոր ոսկի հոբելյանը, որ ամենուրեք տոնախմբվեցավ սիրալեզ ցնծության, սփոփանքի ու հպարտության զգացումներով, անդամ մը ևս անառարկելի ապացույցը տվավ, թե մեր ժողովուրդը իր հույսերուն ու տենչերուն իրագործումը Հ. Բ. Ը. Միութենեն է որ կակընկալե։ Անցնող հիսուն տարիներուն, երբ շատ անդամ անցանք արյունի և ավերումի մղձավանջներու մեջեն, դաղութահայությունը իր տառապանքին դարմանը, իր կարոտությանց գոհացումը, իր վերականգնումի հենարանը մասնավորապես գտավ Հ. Բ. Ը. Միության մոտ։ Վստահ ենք, թե հառաջիկա հիսուն տարիներուն, մեր կազմակերպությունը՝ ազգային կյանքի նորանոր պահանջներուն համաձայն, շատ ավելի ուժեղ թափով մը պիտի կատարե իր բարերար առաքելությունը։

Մեր այս համոզումը, այս անդրդվելի հավատքը զուտ բարոյական կրվան մը ունի իրեն։ Անշուշտ, Հ. Բ. Ը. Միության հարստությունը տարվե-տարի կաճի, բայց ապագայի համար մեր լավատեսությունը նյութին կապված չէ միայն։ Մենք կգոտեպնդվինք մանավանդ ա՛յն երևույթով, որ այսօր Բարեգործականի ոգի մը, մտայնություն մը, քիչ մը ավելի մեծ բան մը գործածելով՝ ըսեմ աշխարհայացք գոյություն ունի։

Հայ ժողովուրդին ողջամիտ զանգվածը իր կյանքին անդորրությունն ու բարելավումը, ազգային զգացումի ու մշակույթի վրա խարբսխված իր հառաջդիմությունը կապած է խաղաղ աշխատանքի, միարանության, համերաշխ գործակցության և իր բարձրադույն արբությանց պահպանումին հետ։ Այս սկզբունքներն են, որ առաջնորդած են Բարեգործականը իր ամբողջ գոյության ընթացքին և ան ճշմարիտ, հարազատ թարգմանը եղած է մեր ժողովուրդին խոհական ոգիին ու առողջ դիտակցության։

Ան միշտ հավատացած է, թե գաղթաշխարհի մեր ցրվածության մեջ, Հայ Եկեղեցին, դարավոր ամրոցը մեր գոյության, մեր ազգային միության հավերժական ամենահզոր կապն է. թե մեր Հայրենիքը՝ վերականգնած, մեծագույն ներշնչարանն է մեր հայկականությունը պահելու։ Պարագաներու բերումով անոր ունեցած վարչտեսին մասին որքա՛ն ալ տարբեր ըլլան մեր ըմբռնումները, կողնորվինք այն փառատանած իրականությամբ, թե մեր ժողովուրդին ստվար մեծամասնությունը այսօր տեղ է իր հայրերու երկրին, որուն համար դարերով լացեր, աղոթեր ու գոհվեր ենք, ու հալածանքի, կոտորածի տեսական սարսափներեն զերծ՝ լծված է նյութական թե իմացական ստեղծագործ աշխատանքի։ Անոնք, որ կհետաքրքրվին մեր Հայրենիքին մեջ կատարված մտավորական վիթխարի վաստակով, դյուրավ կտեսնեն, թե զուտ հայեցի ի՞նչ խորհրդ շունչ մը կա անոր մեջ. մեր դպրությանց դանձարանին կրոնական բովանդակությամբ արժեքավոր գործերն անգամ

* Բերվում է ճառի առաջին մասը միայն։—Խմբ.։

երբեք առարկա չէին եղած այն գուրգուրոտ ու ակնածալիր պրպտումներուն ու ուսումնասիրությանց, որքան կըլլան այսօր Հայաստանի մեջ։

Ասոնք են մեր բարձրագույն սրբությունները, որոնց ակնարկեցի, Հայաստանյայց Եկեղեցին՝ իր անսասան Աթոռով Էջմիածնի մեջ, և Հայրենի հողը՝ իր վրա ապրող ժողովուրդով։ Հայությունը օտարացումի, այլասերումի ամենեն դժխեմ վտանգները պիտի կրնա դիմագրավել, երբ իր հոգիին մեջ որպես տապանակ ուխտի պահպանե այս սրբությունները։

Գաղթաշխարհի մեջ ունինք նաև մեր լեզվին, մեր մտավոր ժառանգությանց, մեր ազգային ինքնությունը բնորոշող ամեն կարգի ավանդությանց պահպանման ծանր հոգերը, դաստիարակության հսկա գործ մը, որուն պիտի անդրադառնամ քիչ վերջ։

Ժողովուրդը, իր բնածին ողջմտությամբ, իր գոյության բոլոր այս խարիսխները, բարոյական և իմացական այս բոլոր արժեքները լավ կճանչնա ու կդողա անոնց վրա։ Եվ որովհետև Բարեգործականը կազմակերպված դրական ու տևական աշխատանք մը կկատարե այդ արժեքները անկորուստ պահելու և զանոնք աճեցնելու, տարածելու համար, գաղթաշխարհի մեծ զանգվածները կանգնած են Բարեգործականի կողքին։ Ահավասիկ այդ երևույթն է, որ կկոչենք Բարեգործականի մտայնություն, գաղափարական կամ դավանանք։ Մեր անդամներուն թիվը, որ ամեն տարի ավելի կաճի ու ներկայիս կհասնի 17 000-ի, ճշգիմ փոքրամասնություն մըն է անշուշտ գաղութահայության մեկ միլիոնի մոտ եղող թիվին բաղդատմամբ։ Մեզի համար կարևորը այս չէ սակայն, այլ այն ուրախալի իրականությունը, թե հայկական բոլոր գաղութներուն մեջ, ժողովրդային մեծ բազմությունները մեզի պես կխորհին, մեր գիրքը ունին ազգային կենսական հարցերու մեջ, ու կգործակցինք իրարու։

Կարգ մը թերթերե դուրս, ամբողջ հայ մամուլը, ի՛նչ ուղղություն և մտածումի ի՛նչ երանգ ալ ներկայացնե ան, Հ. Բ. Ը. Միության դերը միշտ գնահատած, անոր գործերուն նշանակությունը միշտ ճանչցած և անոր թև-թիկունք ըլլալու հրավիրած է ժողովուրդը։ Մամուլը, որ հանրային կարծիքին թարգմանն է ու առաջնորդը, իր կոչումին այս հավատարմությամբ արժանի է մեր բոլորին երախտագիտության։ Հայ մամուլին այդ միահամուռ արտահայտությունը ակներև ապացույց մը ևս է, թե հայ ժողովուրդը Հ. Բ. Ը. Միությունը իրեն պատիվ բերող ազգային մե՛ծ հաստատություն մը կնկատե։

Այս ըմբռնումը ո՛չ թե ներկա ժամանակներուն հատուկ է, այլև զորավոր կերպով զգալի եղած է անցյալին մեջ ալ։ Այսօր մոտ ութ միլիոնի հասնող մեր դրամագլուխները մեծ մասով կպարտինք հանգուցյալ անմահանուն բարերարներու, որոնք խաղաղ սրտով գացած են իրենց հավիտենականության, վստահ ըլլալով, որ Հ. Բ. Ը. Միության իրենց ավանդ թողած բարիքը Ազգին պիտի երթա։ Այդ պատվական բարերարները տևականորեն կգործակցին ուրեմն մեզի, և այսպես միասնության կապը զորավոր կպահվի ներկային ու անցյալին միջև ևս։

Անցյալին մեջ Բարեգործականը օրը-օրին ապրած է մեր ժողովուրդին հետ և իր բոլոր միջոցները տրամադրած է անոր բազմատեսակ ցավերուն ու կարոտություններուն դարմանումին։ Այս պարագան երկարորեն բացատրած եմ նախորդ տարիներու ուղերձներուս մեջ։

Այսօր, անոր հսկա վաստակը մեզի կներկայանա շատ ավելի բյուրեղացած ձևով մը։ Կրթական գործն է, որ հիմա առանցքը կկազմե մեր մտահոգություններուն ու զոհողություններուն, Անշուշտ միությունը դպրոցական ձեռնարկներ ուներ կանուխեն ալ։ Բայց վերջին պատերազմեն հետո էր, որ անոնք ընդարձակվեցան անօրինակ համեմատությամբ։ Ներկայիս չկա հայ գաղութ մը, որուն զավակներուն դաստիարակության առավել կամ նվազ չափով չսատարե Բարեգործականը, ինչպես է, օրինակ, Լիբանանի, Սուրիո, Կիպրոսի, Հունաստանի, Իրանի, Ամմանի, Ֆրանսայի և ուրիշ երկիրներու մեջ։

Մեր ընդարձակ տեղեկագրին մեջ, ուր Միության կատարած ազգապահպանման բոլոր ջանքերուն մանրամասն նկարագրությունը պիտի տեսնեք, առաջին տեղը կգրավե կրթական գործը։ Մասնավորաբար Մերձավոր Արևելքի գաղութներուն մեջ, ուր տարաշխարհի հայության մեծագույն զանգվածը կապրի, առանց չափազանցության կրնանք ըսել, թե Բարեգործականն է, որ ստանձնած է նոր սերունդին դաստիարակության ծանր բայց կենսական պարտականությունը։

(Կաթիրե, «ԱՐԵՎ» օրաթերթ, 26 փետրվարի 1958 թ., № 11920)

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱԼԱՐԴԱՐՅԱՆ

(Առաջնորդական փոխանորդ
Արարատյան բեմի)

ԷՋՄԻԱԾՆԻ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ*

Սիմեոն կաթողիկոսի մահից հետո, 1780 թվականի օգոստոսի 2-ին, կաթողիկոս է ընտրվում Ղուկաս Կարնեցին։ Սիմեոն Երևանցին հանձնարարել էր իր մահից հետո ընտրել Ղուկասին, որը եղել էր Ջմյուռնիայի առաջնորդը և Սիմեոնի մտերիմն ու գործակիցը։

Ղուկաս Կարնեցին Հայրապետական Գահի վրա է մնում տասնինն ու կես տարի, 1780 թվականի օգոստոսից մինչև 1799 թվականի դեկտեմբեր ամիսը[12]*։*

Ղուկաս Կարնեցին իր նախորդի պես եղել է գրասեր անձնավորություն։ Այդ մասին են վկայում Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանում գտնվող նրա նամակների և կոնդակների պատճեններն ու սևագրությունները, որոնք գրանցված են 2803, 2922, 3738, 4448, 4381, 4482, 4383, 4501 համարների տակ։

Ղուկաս կաթողիկոսը «ուսումնատյաց մը չէր», ինչպես իրավացիորեն գրում էր Օրմանյան սրրաղան, թե «Ղուկաս կմեղադրվի նաև, որ իր օրով դադարեցան Սիմեոնի հիմնած տպարանը և թղթի գործարանը»[13]*։ Այդ չհիմնավորված մեղադրանքի հեղինակն է Մսեր Մսերյանը իր «Պատմութիւն կաթողիկոսաց էջմիածնի ի Սիմէոնէ մինչև ցՅովհաննէս Ը» աշխատության մեջ։*

Օրմանյանը, վեր հանելով Ղուկաս կաթողիկոսի գործունեությունը, հակառակ Մսերյանի մեղադրանքին, գրում է, որ նա զբաղվել է, շատ վատ ժամանակաշրջանում, նաև կրթական, լուսավորական գործունեությամբ։ Ղուկասի օրով գործում են Սիմեոնի տպարանն ու թղթի գործարանը, մինչև 1793 թվականը։ Նրա օրով լույս են տեսել մի քանի հրատարակություններ։ Այնուհետև տպարանը ժամանակավորապես կանգ է առնում, երկրի ընդհանուր խառնակ դրության պատճառով։

Հանգուցյալ Գարեգին Լևոնյանը իր «Հայ գիրքը և տպագրության արվեստը» աշխա-

---

* *Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1958 թվականի Ն է-ից։*

12 Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, «Ազգապատում», Կոստանդնուպոլիս, 1914 թ., հատոր Բ, էջ 3138։

13 Նույն տեղում, էջ 3235։

տության 152-րդ էջում, խոսելով Ղուկաս կաթողիկոսի գործունեության մասին, գրում է. «Ղուկաս Ա Կարնեցու հայրապետության առաջին իսկ տարիներին էջմիածնի տպարանը բարեշինության է ենթարկվում՝ տպագրական արդ ու զարդը ավելի կարգավորվում է շնորհիվ փորագրիչ վարպետ Հարությունի և աշակերտ Խաչատուրի»։

Եվ մի փաստ, որ իրոք Ղուկասի օրով գործել է տպարանը։ Շահխաթունյան սրբազանը իր «Ստորագրութիւն Կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ» արժեքավոր աշխատության մեջ, նկարագրելով Ղուկաս կաթողիկոսի Մայր Աթոռում կատարած շինարարական աշխատանքները՝ Ս. Էջմիածնի վանքի, շենքերի և այլ շինությունների վերանորոգությամբ, հիշատակում է, որ Սեղանատուն են տեղափոխում տպարանը. «ի պատճառս փոխարկութեան խոհանոցին յայլ տեղի. զի յառաջին խոհանոցին... փոխադրեցին զգործարանն տպագրութեան»[14]։

Վերոհիշյալ փաստերը ապացուցում են, որ Ղուկաս կաթողիկոսի օրով Ս. Էջմիածնում գոյություն է ունեցել տպարան, այն էլ տեղավորված է եղել, ըստ Շահխաթունյան սրբազանի նկարագրության, «ի սեղանատանէ աստի մտանեն ի սեղանատունն ձմրան ընդ երկուս դրունս, ի միջոցս այսոցիկ երկուց շինուածոց՝ տպագրատան և սեղանատան. է սրահ կամարայարկ և ունի դուռն մեծ հանդէպ հարաւային դրան Տաճարին»։ Շահխաթունյան սրբազանի վկայությամբ, ուրեմն, տպարանի տեղը, Ղուկաս կաթողիկոսի ժամանակ, եղել է այժմյան միաբանական նոր ճաշարանի տեղը։ Ի դեպ, հիշենք, որ միաբանական այդ հին սեղանատունը, Ղաղարապատ կոչվող շենքի ներքևում, այս օրերին նորոգվում է Վեհափառ Հայրապետի ջանքերով։ Հետևյալ արձանագրությունը կա հիմա ճաշարանի պատին. «ի կամարի մեծի դրանն՝ որ ընդ մէջ տպարանին և սեղանատան՝ այս օրինակ»[15]։ Այդ. արձանագրությունը վերաբերում է ճաշարանին, որը կառուցվել է ջուղայեցի Խալլազարյանի ծախքով։ Ղուկաս կաթողիկոսը ամեն ջանք ի գործ է դրել պահպանելու ինչպես Ս. Էջմիածնի տպարանը, այնպես էլ թղթի գործարանը։ Նա 1781 թվականի հուլիսի 12-ին, «Թուղթ առ միաբնադաւան ժողովուրդսն Ախալցխայոյ» դրության մեջ, նկարագրելով Մայր Աթոռի պետքերը, խնդրում է ախալցխացի-

ՂՈՒԿԱՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԱՐՆԵՑՈՒ ՕՐՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԺԱՄԱԳՐՔԻ ԱՌԱՋԻՆ ԷՋԸ

ներին՝ «Եւ հնոտի շոր ևս որ ինչ վասն թղթաշինութեան ժողովեցի՝ զայն ևս դա պարտի յղել աստ, և դուք, սիրելիքդ մեր, պարտիք յօժարութեամբ տալ զհնոտիս՝ որքան և կարեցէք, որ ձեզ չէ ինչ ծանրութիւն, իսկ թղթաշինութեան Սրբոյ Աթոռոյս ի մեծ ձեռնտուութիւն և ձեզ պատճառ բարեաց վարձուց ի Տեառնէ։ Եւ կատարողդ հրամանաց մերոց եղէք օրհնեալք՝ յԱստուծոյ և ի մէնջ, և շնորհք Սրբոյ Աթոռոյս ընդ ձեզ լիցի յարաժամ»[16]։

Այնուամենայնիվ, թղթի հարցը մտահոգում է նաև Մայր Աթոռի միաբաններին։ Արտասահմանից թուղթ ստանալը շատ դժվար էր և կապված շատ խոշոր ծախսերի հետ։ Կոստանդնուպոլսում Էջմիածնի նվիրակ Իսահակ վարդապետը 1784 թվականի ապրիլ ամսվա 27-ին Ղուկաս կաթողիկոսին գրում է, թե ինքը նպատակ ունի դրամ հավաքելու՝ Էջմիածնի թղթե գործարանը նորոգելու համար։ Ղուկաս կաթողիկոսը նրան պատասխանում է. «իսկ վասն թղթատանն, որ ցաւելով դրես, մի՞թէ մեք ոչ ցաւիմք. այլ

14 Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյան, «Ստորագրութիւն Կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ», հատ. Ա, էջ 102։

15 Նույն տեղում։

16 Գյուտ ավագ քահանա Աղանյանց. «Դիւան հայոց պատմութեան», Գիրք Դ, էջ 91։

ԳԻՐՔ ՊԱՏԱՐԱԳԱՅԻ ՅՈՎՀԵՂՈՍԻ ԵՐԱՑԵՑԻՈՑ. ԵՐԿԻ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԸ

ժամանակս ձեռնտու չէ, մանաւանդ խղճալի Նիկողայոսն ևս վախճանեցաւ, ի նոյն արհեստ այդ գիտող ոչ գոյ»[17]։

Ս. Էջմիածնում այլևայլ արգելիչ պատճառների հետևանքով թղթագործարանը չի վերանորոգվում։ Ղուկաս կաթողիկոսը իր տպագրելիք գրքերի համար թուղթ է ընտրել տալիս Կոստանդնուպոլսից։ Նա իր մի նամակում թղթի ստացման մասին հետևյալ սրտառուչ տողերն է գրում Կոստանդնուպոլսի իր նվիրակ Իսահակ վարդապետին. «Իսկ ի յունիսի ԺԸ գրեցեալ խոստմանդ, որ զԺԲ օդմայ բեասիկ բեանար թուղթ և զԺ դաստայ Ստամպոլու օրինայ թպդայ թուղթ էիր առեալ և մերայնող իրոքն մէկ բեռն շինիլոյ և յղեալ ծովովն Պոնտոսի ի հասանել Մինաս վարդապետին մերոյ ի Կարին, այն բեռն ևս հասեալ էր անդ։ Զոր նա երեր և հասոյզ ընդ ինքեան ի սուրբ Աթոռս և առ մեզ։ Ու մեր բաղեալ դայն, զթուղթսն մեր առար և հաւանեցաք ոի լաւք էին»[18]։

Իրոք, Ղուկաս կաթողիկոսը բազում դժվարություններ հաղթահարելով թուղթ է ստացել արտասահմանից և հրատարակել է գրքեր։ Նրա օրով է ավարտվել Սիմեոն կաթողիկոսի «Պարտավճար» աշխատությունը, որն ուղղված է կաթոլիկության դեմ, և որը մեծ ընդունելություն էր գտել հայ ժողովրդի մեջ։ Ահա թե ինչ է գրում Ղուկաս կաթողիկոսն իր նվիրակին այդ մասին. «Ծանիր սիրելի և հոգևոր որդի մեր, ծոցածին և քրտնաջան զաւակ նիրոյ Աթոռոյս, Իսահակ աստուածաբան վարդապետ։ Զի ի յուլիս ամսոյ ԻԶ զթուղթ գրեցաք առ քեզ ի պատասխանի յառաջ գրեալ թղթոյդ և հանդերձ այլովք թղթովք յղեցար և քանի մի աւուրբր զկնի զկ հատ Պարտավճար գիրք ևս դարկար. որք ի հարկէ մինչև ցարդ հասեալ են առ քեզ»[19]։

1777 թվականից Ս. Էջմիածնի տպարանը կոչվում էր «Ս. Գրիգոր Լուսավորչի» անունով, հետագայում՝ «Կաթողիկե Ս. Էջմիածնի տպարան» անունով, ապա վերջում «Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի» անունով։

Մայր Աթոռի տպարանի սկզբնական շրջանի հնատիպ երկերը վաղուց են սպառվել և դարձել միայն գրադարանների հազվագյուտ ունիկումներ։ Այդ հազվագյուտ գրքերից կան Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի գրադարանում, Ալեքսանդր Մյասնիկյանի անվան Պետական գրադարանում։

Մեր պրպտումները ցույց են տալիս, որ Ղուկաս կաթողիկոսի օրով Էջմիածնում տպագրվել են՝

ա) 1779 թվականին Սիմեոն կաթողիկոսի տպարան հանձնած «Պարտավճար» աշխատությունը, որի 9-րդ տպագրական մամուլը լույս չտեսած հեղինակը վախճանվել է (1780 թ. հուլիսի 21-ին)։ «Պարտավճար»-ի տպագրությունը շարունակվում է Սիմեոնի հաջորդ Ղուկաս կաթողիկոսի օրով և ավարտվում է 1783 թվականին։

բ) 1785 թվականին լույս է տեսնում «Ատենի ժամագիրք»-ը, որի տպագրությունը զգալի չափով լավացել է նախորդ հրատարակություններից։ Հիշատակարանում նշվում են սրբազան Թաղեոս վարդապետի, տառերն ու միջին զարգերը պատրաստող վարպետ Հարությունի և նրա աշակերտ տիրացու Խաչատուրի, գրաշարներ տիրացու Մաղաքիայի և Ագեբսանդր սարկավագի անուններու։ Զի մոռացվել նաև դրածույլ և մրազարկ Գևորգը։ Այդ «Ատենի ժամագիրք»-ը 426 էջանոց է, 30 սմ. հաստություն ունի. տպագրվել է Խաչիկ իշխանի ծախսերով։

17 Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 2503, թ. 249բ։

18 Նույն տեղում. թ. 176բ.

19 Նույն տեղում. թ. 175բ։

գ) 1787 թվականին նույն տպարանից լույս է տեսնում քառածալ ընտիր մի հրատարակություն՝ «Գիրք պատմութեանց Յովսեպոսի Երրայեցւոյ», թարգմանությամբ Ստեփանոս վարդապետ Լեհացու։ Այս գրքի հրատարակությունից երևում է, որ տպարանի բանվորները, գրաշար թե տպագրիչ, էջկապ թե մրազարկ, որակավորվել են շատ գդալի կերպով։ Իր արվեստի մեջ խոշոր առաջադիմություն է երևան բերել փորագրիչ վարպետ Հարությունը։ Նա գիրքը զարդարել է բազմաթիվ գլխազարդերով, լուսանցազարդերով և թռչնագրերով։ Առաջին համառոտ անվանաթերթի համար Հարությունը նկարել և փորագրել է մի շրջանակ պատկեր։ Ընդարձակ անվանաթերթի վրա գրված է. «Ի տպարանի սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մեջ, ի թուոջ Փրկչին 1787 և ի մերում թուականիս ՌՄԼԶ»։ Գիրքը շարված է ցիցերո չափսի նոր տառերով, մոտ 500 ծաղկափակ երեսների մեջ, տպագրությունը՝ սպիտակ և բարակ թղթի վրա, կատարված է խնամքով և մաքուր։ Կազմը սրճագույն կաշիով և միջին էլ՝ ոսկեգրությամբ և զարդերով։ Գրքի վերջում կա ընդարձակ «Յիշատակարան տպեցման գրքոյս», որից երևում է, որ տպագրության ծախքը հոգացել է ջոսլայեցի Մահտեսի Խաչիկ աղան։ Հիշատակարանի ամենավերջում ասվում է. «Այլ և յիշեցէք զկեբտողն դրոցս և կանոնաց և ծաղկենշանից զվարպետ Յարութիւնն վաղարշապատցի հանդերձ աշակերտիւն իւրով տիրացու Խաչատուրիւն։ Եւ զդրաշար Մաղաքիայն և զտիրացու Աղեքսանդրն և զայլ աշխատաւորս գործարանիս»[20]։

Գարեգին Լևոնյանն իր հիշված աշխատության մեջ, բացի այս երեք գրքերից և 1793 թվականին լույս տեսած «Տաղարան փոքրիկ» գրքից, չի հիշատակում ներքո հիշվող գրքերից «Խորհրդատետր»-ը և Սիմեոնի «Պատրաստվճար»-ը, որոնք իրենց տպագրության արվեստով և բովանդակությամբ շատ կարևոր են։

դ) «Խորհրդատետր սրբազան պատարագի, ըստ արարողութեան Սրբոյ Եկեղեցւոյ։ Հայաստանեայց։ Տպագրեցեալ ի քրիստոսասիրմն և ի լուսանկար Աթոռոջ Սրբոյ Էջմիածնի։ Հրամանաւ Տեառն Ղուկասու Վեհափառ Կաթուղիկոսի Ամենայն Հայոց, յամի մարդեղութեան Փրկչին ՌՉՁԸ (1788), և ի թուականիս Հայոց ՌՄԼԷ»։ Այս տիտղոսաթերթի վրայի վերնագիրն է։ Միևնույն ժամանակ կան նկարներ վերևում, մեջտեղ Փրկիչը, աջ և

«ԳԻՐՔ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ ՅՈՎՍԵՊՈՍԻ ԵՐՐԱՅԵՑՒՈՅ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԲԱՆԸ։

ձախակ Թադեոս և Բարթողիմեոս առաքյալները, կենտրոնում՝ Սահակ Հայրապետը և Ս. Մեսրոպը, ներքևում՝ Գյուտ և Հովհան Մանդակունի հայրապետները։ Բաղկացած է 35 էջից, 30 սմ. երկայնքով։ Հիշատակարանի վերջում՝ «Մանաւանդ՝ յիշեսջի՛ք զՋուղայու երևանցի և ի Սուրաթ քաղաքի բնակեալ քրիստոսասէր և մեծահաւատ պարոն Աւետիսն... Վասնզի նոյն բարեմիտ պարոն Աւետիքի խնդրանօքն և արդեամբքն տպագրեցաւ սուրբ մատեանս ի բարի յիշատակ նմա և նորայնոյն»։ Տպագրիչների մասին նույն հիշատակարանում կարդում ենք. «Այլ և յիշեսջի՛ք զբանդակողն նոր գրոցս և ամենայն պարագայիցն՝ զվարպետ Յարութիւնն, և զտիրացու Խաչատուրն. և զդրաշար Մաղաքիայն, և զսՂեքսանդր սարկաւագն. և զայլ աշխատաւորս գործարանիս»։

Ինչպես այստեղ էլ տեսնում ենք, վարպետ Հարությունը, տիրացու Խաչատուրը և սարկավագ Աղեքսանդրը շատ երախտիք են ունեցել տպարանում. այդ աղնիվ և նվիրված մարդկանց անուններին շատ ենք հանդիպում հիշատակարաններում։

ե) 1789 թվականին Ս. Էջմիածնի տպարանից լույս է տեսել նաև «Շարակնոց», 895 էջանոց, 16 սմ. հաստությամբ։

20 Գարեգին Լևոնյան, «Հայ գիրքը և տպագրության արվեստը», Երևան, 1958 թ., էջ 152—153։



ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐԻ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹԸ (1788 Թ.)

զ) 1793 թվականին լույս է տեսնում «Տաղարան փորրիկ»-ը, Սիմեոն կաթողիկոսի հեղինակությամբ, նոր տպագրությամբ, «ի թախանձանաց սիրատարփ խնդրողացն»։

Այս հրատարակությամբ էլ Ս. Էջմիածնի տպարանը փակում է իր հաշիվները ԺԸ դարի հետ և այնուհետև բավական երկար ժամանակ դադարի է մատնվում նրա գործունեությունը, մինչև Հովհաննես Ը Կարբեցու օրերը։

Թեոդիկը իր «Տիպ ու տառ»-ի մեջ հիշատակում է միայն չորս հրատարակություն Ղուկաս կաթողիկոսի ժամանակ, այն է՝ 1785 թվականի «Առենի ժամագիրք»-ը, «Յովսեպոս»-ը 1787 թվականին, «Շարակնոցն»-ը 1789 թվականին և «Տաղարան փորրիկ»-ը 1793 թվականին։ Նա մոռացության է մատնել Ղուկաս կաթողիկոսի տպագրած «Պարտավճար»-ը և «Խորհրդատետր»-ը։

Մայր Աթոռի տպարանը մոտ 40 տարի փակ է մնում։ Այդ երկար դադարի ղլխավոր պատճառներն էին վանքի ներքին երկպառակությունները ու Դավիթ-Դանիելյան վեճերը, ինչպես նաև ժամանակի աննպաստ քաղաքական իրադարձությունները, ռուս-պարսկական պատերազմը, կողոպուտը, բռնությունները։ Այդ տարիներին վանքապատկան նույնիսկ շատ իրեղեններ՝ պղնձեղեն, գրքեր կողոպուտի են ենթարկվել և տարվել Թավրիզի շուկաներում վաճառքի հանելու. «Թէպէտ ի գալն շահին կրկին կողոպտեցին պարսիկքն [զԱթոռն]) մինչև երկու հազար թումանի դիրք. պղնձեղէն բեռն արարեալ տարին... զոր տեսաք հազարաւոր դիրք ծախելն և եկեղեցական հանդերձ ի Թավրէզ...»[21]։

Այսպիսի դժնդակ տարիներին ինչ խոսք կարող էր լինել մշակութային, տպագրական աշխատանք կատարելու մասին։ Տպարանը միայն անունով գոյություն ուներ. նրա սենյակներից մեկը ծառայել է որպես «բոնատուն», ուր բանտարկվել է Դավիթ կաթողիկոսը. «մորուքը սափրիչին գերծել կուտան և տպագրատան խուցն կփակեն...»[22]։



«ՏԱՂԱՐԱՆ ՓՈՔՐԻԿ»-Ի ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹԸ

21 Գյուտ ավագ Բաճանա Աղանյանց, «Դիւան հայոց պատմութեան», գիրք Ա—Բ, Թիֆլիս, 1893 թ., էջ 186։

22 Մագաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, «Ազգապատում», հատ. Բ, էջ 362։

ԺԹ դարի առաջին քառորդին քայքայվել էր Մայր Աթոռի տնտեսական դրությունը։ 1819 թվականի փետրվարին, Եփրեմ կաթողիկոսի ժամանակ, փորձ է արվում Ս. Էջմիածնի տպարանը վերակազմակերպելու համար։ Մայր Աթոռի կառավարչությունը իր ձեռքում կենտրոնացրած 11-ի ժողովը կազմում է մի ծրագիր ընդհանրապես վանքի համար, որը բաղկանում է 9 կետերից, և որի 6-րդ և 7-րդ կետերը վերաբերում են տպարանին. «Ամենայն հետևողութեամբ հոգ լիցի ի գործ դնել զտպագրատունն չափաւոր ծախիւք, զի այնու ունելոց են զտեղի մեծի պարծանաց ի մէջ Ազգի մերոյ և օգնութիւն ի խնդրելն առ ա՛ն ի նոցանէ ոչ բերէ զամօթ։ Ուստի ի յօգնութիւն գործածութեան այնորիկ ի մէջ միաբանից մերոց ևս ով ոք դրամ ունիցի ըստ չափու փոխ տացէ թեմեսուկաւ առանց շահու և կամ տասին մին շահով և դարձեալ նոյն թեմեսուկաւ ստացի ըստ ժամանակին մինչ ելցեն Աստուծով տպեալ գրեանքն ու վաճառեսցին և եթէ յամեսցի ևս հատուցումն գոնէ շահուց նեղութիւնն չունի կրել Սուրբ Աթոռոյս ի նոցանէ որպէս կրէ յայլ պարտեացն։

Որպէս զամենայն զգրչեայ և զտպեալ գրեանսն գրատանն Սրբոյ Աթոռոյս նոյնպէս և նորատիպ գրեանսն մինչ ելցեն Աստուծով ի տպագրատնէն պարտին արկանիլ ի տումարի յիշեալ տումարագիրին, և այնպէս յանձնել գրքատան վերակացուին, որոյ վասն ևս երկու մինն օրինակ դաւթար պահելի է, մինն ի գրքատանն առ վերակացուն և միւսն առ Սրբազնագոյն Գահակալն և կամ առ սուրբ ժողովն, և նորատիպ գրեանսն ևս փոյթ փոյթ լիցի կանխաւ ի վաճառել, զի արդիւնքն նոցին օգնես[ցեն] տպագրատանն և եթէ յաւելանայցէ ինչ ևս ի հատուցումն պարտուց...»[23]։

1819 թվականի փետրվարին Եփրեմ կաթողիկոսի և 11-ի ժողովի կողմից Ստեփանոս եպիսկոպոս Ենովքյանը նշանակվում է «տումարագիր վասն ամենայն ելից և մտից Սրբոյ Աթոռոյս»։ Տումարագիր սրբազանի հաշվետվության մեջ խոսվում է նաև տպարանի մասին. «Ցովսէփ վարդապետն յաղագս ծախուց Սրբոյ Տանս 5310 թուման։ ...0400



1788 ԹՎԱԿԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐԻ ՎԵՐՋԻՆ ԷՋԸ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԸ

դահեկան, յաղագս ապարանին ճարկաւորացն»[24] (ընդգծումը մերն է— Վ. Վ.)։

Ավելի մանրամասն խոսվում է տպարանի վերաբացման համար կատարված ծախսերի մասին. «Թղթատան մօհրաց դնող վարպետ Պօղոսի մախթուն բոլոր պարսպի ետուն եօթն թուման... Փոքր թղթաշէն Ֆրանգ մուսի Դէսի Օսն ի հոկտեմբեր ամսոյս 28 դարձաւ յերկիր իւր...»[25]։ «Վասն կազմարարի գործեացն ղորոց դրեալ էր պատուելի Բէնդիրցովն, իմա՛, զի ի մէնկէնտէց (որ աստ հարկաւոր է) երկոքին տեսակքն ևս կարևոր են մեզ. վասն որոյ, զորս այդի և զորս ի Մոսկվու հոգացեալ փութով առաքեսջիք։ Այսպէս ծանուսջիր յարգոյ Բէնդիրցովին ողջունիւ»[26]։

[23] Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 35, վավերագիր 373։

[24] Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռագիր № 369, էջ 8։

[25] Նույն տեղում, էջ 6—7։

[26] Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 31, վավերագիր 88, էջ 2։



ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԻ ՎԵՐՋԻՆ ԷՋԸ

1822—1824 թվականներին որոշ աշխատանքներ կատարվել են անպայման տպարանը անշարժությունից դուրս բերելու կապակցությամբ։ Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի Կաթողիկոսական դիվանի Ֆ 43 թղթապանակի Ֆ 316 վավերագրի Ա, Բ, Գ համարներում 1822 թվականից կա մի ընդարձակ հաշվետվություն այն մասին, թե ինչպիսի ծախսեր են կատարվել տպարանի վրա։ Օրինակ, 1822 թվականի հունիսի 14-ին տպարանի վարչությունը դնել է «արճիճ վասն կոպելայ դերկոստի տեսակն բոլոր դրոց մէկ տուփ կամ հինդ լիտր, 8 մանէթ». կամ «խարտոց տոկնալ երեք հատ 7 մանէթ 35 կոպեկ»։ Վերոհիշյալ հաշվետվության մեջ ցույց են տրված նաև տպարանի որոշ մասերի վերանորոգման ծախսեր. «1822 թ. դեկտ. 13-ին բուճ տախտակին սոյն տպարանի, որ առաջին էր ձուլեալ եղեն, ի հինդ և կէս փութ թեռոյ. զոր հաշուեալ միասին տասն և հինդ լիտրն լիտրին հինդ վճարեցուք 75 մանէթ»[27]։

Տպարանի վերակառուցման աշխատանքները շարունակվում են, բայց տպարանը չի գործում։

Ռուսական բանակի հաղթությամբ 1828 թվականին Հայաստանի արևելյան մասը վերջնականապես ազատագրվում է պարսկական ծանր լծից։ Թուրքմենչայի դաշնագրով ռուս-պարսկական պատերազմը վերջ է գտնում։ Կազմվում է հայկական մարզ, որի մեջ և Ս. Էջմիածինը ազատ շունչ է քաշում։ Երկիրը խաղաղվում է. վերջ են դանում պատերազմի տխուր հետևանքները։ Բովանդակ հայության ցանկությունն է լինում Մայր Աթոռը դարձնել նաև մշակութային կենտրոն։ Այդպես էին մտածում նաև Լազարյան եղբայրները, որոնց ցանկությունն էր Ս. Էջմիածնի Մայր Աթոռը տեսնել ծաղկուն դրության մեջ։ 1832 թվականի դեկտեմբերի 4-ին Հովհաննես և Խաչատուր Լազարյանները իրենց գրած մի նամակում Հովհաննես Ը Կարբեցուն հիշեցնում են, որ մեր հայրապետներից Հակոբ Ջուղայեցին դրաստեր էր և Սիմեոն կաթողիկոսը. «որ բաղում տառապանօք երաց յԷջմիածին տպագրատուն և տպեաց զրազում մատեանս, իսկ յետ մահուն Ղուկաս կաթողիկոսի և այսր բարի ինչ ոչ լուաք զաթոռակտլաց դորին բաց ի զանազան անկարգութեանցն և ի շփոթութեանց. բայց այժմ զի շնորհօք Ամենակարողին Տունդ այդ ազատեալ ի բռնաւորութեանց պարսից»[28]։ Լազարյանները և՝ անդ են ներշնչում կաթողիկոսին, ավելացնում են նաև, որ «հաւատամբ տեսնել Ձերդ Ձեռամբ ըստ հոգեորին և ըստ մարմնաւորին, զի վերստին ծաղկեսցի առ ձեզ հոգեոր դպրատունն վասն վարդապետաց»[29]։

Հովհաննես Կարբեցին ինքն էլ ցանկանալով Մայր Աթոռը բարեկարգ դրության մեջ տեսնել, պատասխանում է Լազարյանների նամակին սրտառուչ կերպով. «Լիասիրտ խոստմունք ձեր վասն շինութեանց և նպաստից դերազահ Սրբոյ Աթոռոյս յաւելին ի մեզ զյոյս մեծ, զոր վասն և տպարան մեր այլ շինութեանց հարկաւորք վասն ուսումնարանի ապաւինութեամբ ձերոյ է, զոր ձեռնկալութեանց խոստանան հետզհետէ արդիւնաւոր առնել զպտուղս իւրեանց և յառաջադէմ հանդիսանալ հանդիսիւ տնզուղական պարծանացդ Հայրենեաց Հայաստանի, ե նա ահա մատուցեալ ձերոյ վեհազնութեանց զնախապտուղ իւրեանց զ-6 օրացոյցս ոչ զլանան նուիրել և զայլս մեծամեծս ի հա-

[27] Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան. թղթապանակ 43. վավերագիր 316։

[28] Առիստակես Եպիսկոպոս Սեդրակյան, «Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանի. կենսագրությունը», II. Պետերբուրգ, 1898 թ., էջ 133։

[29] Նույն տեղում, էջ 134։

ճոյս բարերար կամաց ձերոց»[30]։ Լազարյան եղբայրները ցանկանում էին նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնում վերստին բաց անել հոգևոր դպրոցը։

Հովհաննես Կարբեցի կաթողիկոսի ժամանակ Ս. Էջմիածնի տպարանի վերակառուցման, ինչպես նաև ժառանգավորաց վարժարանի առաջադիմության մասին կան վկայություններ Լենինգրադի Պետական պատմական կենտրոնական արխիվի ֆոնդ № 821, ОПИС 138, № 103, էջ 123—129-ի պարունակած վավերագրում։

Եվ իրոք, Հովհաննես Կարբեցին բավականին աշխատանքներ է կատարել Ս. Էջմիածնի ժառանգավորաց վարժարանը և ապարանը ծաղկեցնելու ուղղությամբ։

Աղեքսանդր Երիցյանը, իր «Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում» աշխատության Բ մասի 544-րդ էջում, թվարկելով Կարբեցու շինարար գործունեությունը, դպրոցի և տպարանի մասին գրում է . «... վերանորոգեաց զտպարան Ս. Էջմիածնի դերապայծառ և ընդարձակ քան զառաջինն. Ճեմարանն մեծամեծ դահլճօք հանդերձ և ըստ եւրոպացւոց նստարանօք, դրասեղանօք և մահճակալօք»։

Կարբեցու ձեռնարկությունները սակայն կիսատ են մնում։ Միաբանների մեջ տեղի է ունենում ըմբոստություն Հայրապետի դեմ, սկսված շինարարական գործը խանգարվում է և կաթողիկոսը չի կարողանում իր ցանկությունները իրագործել։ Թեև 1834 թվականին տպարանը վերաբացվում է, բայց ոչ մի հրատարակություն լույս չի տեսնում։

Կարբեցին 1834 թվականին պր. Ռոզինին գրած բացատրականում դժգոհում է, որ «Աբարատյան Ստեփան վարդապետը... և Շահխաթունյան Հովհաննես աբեղան, որ նմանապես Սինոդի անդամներից մեկն էր, բոլորովին առանց պատճառի թողեց յուր պաշտօնը... Այս վերջին երկուսը նամանավանդ մեղավոր են թվում ինձ, որովհետև առաջինը (Արարատյանը), բացի սինոդական անդամությունից, նշանակված էր նաև կառավարիչ ու տնօրեն սինոդական գործերի, մեր դիվանատան և Էջմիածնի հոգևոր վարժարանի, իսկ երկրորդը (Շահխաթունյանը) կառավարիչ էր մեր տպարանի և գրատան»[31]։ Ինչպես հայտնի է դառնում, նրանք ընհարվել էին Կարբեցու հետ, և ինչպես վերջինս է գրում, իբր թե նրանք փոխանակ գործերը կարգավորելու, խառնել էին և պաշտոններից հրաժարվել։

1837 թվականին Նիկոլայ Ա ռուսաց կայսրը գալիս է Անդրկովկաս։ Նա լինում է Երևանում և Վաղարշապատում։ Ս. Էջմիածնում ցարը տեսակցություն է ունենում Հովհաննես կաթողիկոս Կարբեցու հետ, միասին այցելում են Մայր Տաճարը, ապա վանքի տպարանը, որը ողորմելի վիճակում էր գտնվում։ Հայտնի չէ, թե ցարի և կաթողիկոսի միջև տպարանի մասին խոսք լինում է թե չէ, բայց փաստն այն է, որ հետևյալ տարի՝ 1838 թվականին, Ս. Էջմիածնի տպարանից լույս է տեսնում մի թարգմանական գիրք ռուսերենից։ Այդ գիրքն է «Հարիւր և չորս սուրբ պատմութիւն հաւաքեալ ի Հին և Նոր Կտակարանաց յօգուտ մանկանց... ի ռուս լեզուէ հայացոյց աւագ քահանայ հայոց Տփխիսոյ Իսահակ Սահառունեանց, ի տպարանի Ս. Գրիգոր Լուսաւորչին ի Ս. Էջմիածին»։ Տպագրության և թղթի որակի կողմից այս հրատարակությունը իհարկե չի կարող գովեստի արժանանալ, մխիթարական է, սակայն, այն, որ տպարանն արդեն երկար ժամանակի խանգարումից ու դադարից հետո փոքր ի շատե կարգի է բերվել և ի վիճակի է եղել գիրք տպագրելու[32]։

Կարեգին Լևոնյանն իր գրքի մեջ չի հիշատակել 1838 թվականին Ս. Էջմիածնի տպարանից լույս տեսած «Ժամագիրք»-ը, որի հիշատակարանում կարդում ենք, որ այդ ժամանակ տպարանի կառավարիչն է եղել վաղարշապատեցի Հովհաննես վարդապետ Մուրադյանը և վարպետ՝ Հակոբյան Վլասիոսը։ Սրանց ջանքերի շնորհիվ տպարանը թեև համեստ, սակայն շարունակել է իր գործունեությունը։

Թեոդիկն ևս իր «Տիպ ու տառ»-ի մեջ անտեսել է 1838 թվականին տպագրված այդ երկու գրքերն էլ։

Ս. Էջմիածնի տպարանից 1842 թվականին լույս է ընծայվում Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանի «Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Այրարատայ» երկհատոր աշխատությունը, տպագրված գոհացուցիչ չափով և մաքուր։ Արժեքավոր այս աշխատությունը ներկայումս էլ հավաստի աղբյուր է հանդիսանում հայ բանասիրության համար։

Սուրբ Էջմիածնի տպարանում աշխատել է տիրացու նկարիչ Հովհաննես Տեր-Մկրտչյան Աֆանդովը, որն ունեցել է իր վիմա-

30 Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, Արխիվ Լազարյանների, թղթապանակ 117, գործ 52։

31 Ա. Երիցյան, «Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում», Բ մաս, էջ 191—192։

32 Գարեգին Լևոնյան, «Հայ գիրքը և տպագրության արվեստը», էջ 215։

ատունը և այդ վիմագրատան «շարխ»-ի մեջ առաջին անգամ տպել է Նիկոլայ Ա ցարի պատկերը։ Այդ առթիվ Ս. Էջմիածնի միաբան ծաղկաբեր Իսահակ եպիսկոպոսը 1839 թվականի մայիսի 29-ին մի նամակ է գրել Էջմիածնից՝ Պետերբուրգի հաջորդ նիստրեմ վարդապետ Ալթունյանին, որտեղ հետևյալ կարևոր տեղեկությունն է հաղորդում. «Տէր Մկրտչեան Աֆանդով պարկեշտ և հանդարտաբարոյ շնորհափայլ և նկարիչ 4 աստիճանաւոր տիրացու Յովհաննէս սիրեցեալն մեր, որ յառաջ քան զայս եկեալ էր ի կայսերախնամ տիրապահ քաղաքն Մոսկով առ ի ուսումն ընկալնլոյ զարհեստն տպարանի և զնկարչութիւն, որ և ուսեալ ըստ կարողութեան իւրոյ զլիտոգրաֆի տպելն զանազան ձևն և զնկարչութիւն Նորին Սրբազնասուրբ Վեհափառ Օծութիւնն ի Նորին կայսերական բարձրութենէն խնդրեալ էր վասն սորա, որ արդէն դասցէ այդր ի Ս. Պետերբուրգ, առ ի մտանել յակադէմի ուսումնարանն, որ լաւ ևս ուսցի։ Զկնի վերադարձման Ն. Կ. Բարձրութեանն աստէն, ի նոյն աշնան, եկն դոյն Յովհաննէս տիրացուն աստ, վայլեցուց զուսեալ շնորհն իւր ի Սուրբ Արոռս, որոյ տպարանի միջին յօրինեաց զմեծ մեքենայ շարխ մի լիտոգրաֆի, որոյ տպեաց զպատկեր բարեփառ հզոր թագաւորին մերոյ Հայաստանի, և կայսերն ռուսաց Նիկոլայ Պավլովիչի, որոյ Տէր տայցէ կեանս խաղաղական հանդերձ թագուհեաւն և ժառանգակցօքն... զկնի տպելոյ պատկերն, որ տպեաց և դուարձաց այց Ն. Ս. Օծութեան (Հովհաննես Ը Կարբեցու—Վ. Վ.) և սրբազան սինոդին և մեր ամենեցուն...»[33]։

Ներսես Աշտարակեցու օրով Էջմիածնի տպարանը երկրորդ պլանի վրա է մղվում։ Աշտարակեցին իր ուշադրության կենտրոնն է դարձրել Թբիլիսիում իր անունով բացված դպրոցը և նրան կից տպարանը։ Նա միշտ դժգոհել է, որ Ս. Էջմիածնում «մարդ չունեմ»։ Նրա կաթողիկոսության տարիներում, 1843—1857 թվականներին Էջմիածնի տպարանից լույս տեսած այնքան էլ հարուստ հրատարակություններ չենք տեսնում։ Աշտարակեցու օրով լույս է տեսնում միայն 3 գիրք՝ «Հրահանգ համաշխարհային պատմութեան՝ Արել վարդապետ Մխիթարյանի (1844 թ.), «Երգարան աղօթից ի պէտս վաճառականաց և ճանապարհորդաց» (1845 թ.) և Պետրոս եպիսկոպոս Ադամալյանի «Աղբիւր բացեալ» անունը կրող մի հոգևոր մեկնաբանական աշխատությունը (1857 թ.), որ տպագրվել է «Հրամանաւ Լուսաւորչական հայոց Սինոդոսին Էջմիածնիս և ծարդեամբք բարեպաշտօն աղա Թովմասու Այվազեան Բագուեցւոյ»։

Աշտարակեցու օրով փոխվում է նաև տպարանի անունը. եթե առաջ Ս. Գրիգոր Լուսավորչի անունով էր գործում տպարանը, այժմ ուղղակի «Տպարանի Կաթուղիկէ Էջմիածնիս» հիշատակությունն են կրում լույս տեսած գրքերը։

«Երգարան աղօթից»-ը մի փոքրիկ գրքույկ է, շարված նոր տեսակի մանր տառերով, խնամքով և մաքուր տպագրությամբ[34]։

Ս. Էջմիածնի տպարանը ավելի է առաջադիմում Մատթեոս Ա կաթողիկոսի օրով։

Մայր Աթոռի տպարանի պատմության նոր շրջանը սկսում է Գևորգ Դ մեծագործ կաթողիկոսի օրով, որը և շարունակվում է Մակար Ա և Խրիսյաս Հայրիկ կաթողիկոսների օրով։

33 Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, Արխիվ Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանի, թղթապանակ 84, վավերագիր 1, էջ 82։

34 Գարեգին Լեոնյան. «Հայ գիրքը և տպագրության արվեստը», էջ 216։

(Շարունակելի)



ԱՆԴՐՈ ՍԱՐԿԱՎԱԳ ԲԵՀԲՈՒԴՅԱՆ

ԳԵՂՈՆԿԱՐԻՉ ՄԱՐԳԱՐԻՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

(ԺԹ դար)

Ուրբ Էջմիածնում պահվող թանկարժեք հնությունների շարքին է պատկանում հիասքանչ ձեռագիր մի Ավետարան, որի ընդօրինակողն է գեղարվեստագետ, ճարտար գրիչ Մարգարիտ Ալեքսանյանցը, ԺԹ դարի հայկական գեղանկարչության կին գործիչը։ Այդ գեղեցիկ ձեռագիր Ավետարանը այժմ պահվում է Ս. Էջմիածնի թանգարանում։

Մարգարիտ Ալեքսանյանցը ծնվել է 1838 թվականին Շուշի քաղաքում։ Այդ ժամանակ Ղարաբաղի իգական սեռի կրթության կենտրոնը Շուշի քաղաքի կուսանաց անապատն էր, որտեղ ժամանակին հռչակված Աքեր կույս Եղիսաբեթ Սարգսյանի մոտ սովորում է ապագա գեղանկարիչ և գեղագրող Մարդարիտը։ Այդ վաղ շրջանում նրա նախասիրած առարկան էր ասեղնագործությունը։

Ազգականների հետ դեպի Տաթև կատարած մի ուխտագնացության առթիվ, փոքրիկ Մարգարիտը հմայվում է Տաթևի վանքում պահված եկեղեցական զգեստներով՝ Ս. Գրիգոր Տաթևացու մեկ սքանչելի ձեռագրի մանրանկարչությամբ։ Գեղարվեստով ապրող Մարդարիտը որոշում է մոտիկից ծանոթանալ այդ հիանալի արվեստին, յուրացնել այն և նվիրվել նրան։ Տաթևացու գրքի մանրանկարչությունը վառում է նշորհալի օրիորդի սրտում այն սերը, որը չմարեց մինչև իր մահը։ Նա որոշում է հրաժարվել ասեղնագործությունից և բոլորանվեր լծվել գեղագրության և արտագրության։

ԳԵՂԱՆԿԱՐԻՉ ՄԱՐԳԱՐԻՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆՑ

Հին գրչագրերը դառնում են նրա ոգևորության առարկան։ Նա սկսում է ուսումնասիրել հայկական հին ծաղկագրությունն ու գե-

ղագրությունը. նաև ձեռագրական նկարչությունը։ Կարճ միջոցում նա հայտնի է դառնում իբրև ճարտար ու շնորհալի ձեռք ունեցող։ Իր ձեռքի առաջին երախտիքը նա իր հոր՝ Ամբրի բեկ Սմբատյանցի ձեռքով ուղարկում է Մատթեոս Ա Կաթողիկոսին, որը օրհնության կոնդակ է տալիս նրան։ Այդ կոնդակը ավելի ևս ոգևորում և նոր եռանդ է տալիս արվեստագիտուհուն։

Հակառակ իր ցանկության, 1851 թվականին Մարգարիտի հայրը ամուսնացնում է նրան՝ վաճառական Պետրոս Ալեքսանյանցի հետ։

թին. զոր գովեցաք մեծապէս և ուրախակրցք եմք ձեզ։ Բայց տեսրը մնում է անտրպ, տպագրական ծախսերի շատության պատճառով։

1863 թվականին նա գծագրել է գեղագիր մի ալբոմ, որի վերնագիրն է «Հայկական գեղագրութիւն. գծագրեցաւ ի Մարգարտէ դստերէ Ամբրի բէկի Յովհաննեսեանի. ըստ ամուսնոյն Ալեքսանեանց»։ Բայց իր բոլոր գործերից ամենաթանկը և գլուխ-գործոցը մնում է Ս. Էջմիածնին նվիրված Ավետարանը։ Թբիլիսիում հրատարակվող «Աղբյուր ամսագրի խմբագիր Տիգրան Նազարյանցը բա-

ՄԱՐԳԱՐԻՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆՑԻ ԳՐՉԱԳՐԱԾ ԱՎԵՏԱՐԱՆԻՑ ՄԱՐԿՈՍԻ ԱՌԱՋԻՆ ԷՋԸ

Առաջնորդվելով միայն ձեռագիր օրինակներից, առանց ուսուցչի, Մարգարիտը իր սենյակի առանձնության մեջ, ոգևորությամբ առաջ է տանում իր սիրած առարկային տիրապետելու և այն մշակելու աշխատանքը։ Երկար տարիներ ուսումնասիրելով կազմում է դեղագրության մի տետր և 1861 թվականին այն ուղարկում է Վենետիկ՝ տպագրել տալու համար։ 1862 թվականին Մխիթարյան հայրերից տպարանապետ Հ. Աթանագինես Երեմյանը գրում է Մարգարիտին. «Արդարև գործ զարմանաքանչ և ճարտար մատանց. դեղեցիկ և հնարագէտ գծագրու-

բեպաշտ գեղանկարչի հանձնարարությամբ, 1886 թվականի հունիսի 5-ին, Ս. Էջմիածին է բերում այդ Ավետարանը, որպես նվեր մեռոնօրհնեքի առթիվ Մակար Ա կաթողիկոսը համակրանքով է ընդունում այդ թանկագին նվերը և օրհնության ու գոհունակության մի կոնդակ է ուղարկում արվեստագետ բարեպաշտուհուն գրելով. «Ընկալեալ գանգնահատելին քո նուէր պատուական համագասեցեար գայն ի շարս ամենապատուական գարդուց թանգարանի Մայր Աթոռոյս ի տես համայնից այցելուաց»։ Այս հիացմունք Ավետարանի վրա Մարգարիտ Ալեք-

սանյանցը աշխատել է հինգ տարի շարունակ։ Պետք է տեսնել այդ նրբին ու ճաշակավոր աշխատանքը, որպեսզի կարելի լինի դաղափար կազմել և գնահատել այն տանջանքը, որը կամավորապես կրել է նա ի սեր արվեստի։ Ավետարանը գրված է տպանման ձեռագրով, յուրաքանչյուր Ավետարանի համար գործ ածելով տարբեր տեսակի մի ձեռագիր։ Ամենանուրբ աչքն անդամ չի կարող Մարդարիտի ձեռագիրը զանազանել տպագրից։ Ավետարանի յուրաքանչյուր գլուխն սկսվում է մեծադիր գլխատառերով, որոնք ներկայացնում են զանազան սուրբ կենդանիներ կամ ձկներ։ Իսկ գլուխների միջի փոքր գլխատառերը զարդարված են նրբանկար փոքրիկ ծաղիկներով և փունջերով։ Գլխագրերը դրված են երեք լեզվով՝ հայերեն, ռուսերեն և ֆրանսերեն։ Ավետարանի սկզբում շատ գեղեցիկ նկարված են չորս ավետարանիչները իրենց առանձին-առանձին խորհրդանիշներով, իսկ առաջին գլխից հետո նկարված է Հիսուսը նավի վրա, ժողովրդի բազմության դիմաց։ Այս բոլորից բացի կա նաև Շուշի քաղաքի գեղեցիկ կերպով նկարված պատկերը։ Կան նաև Ավետարանի բովանդակությունից վերցրած ուրիշ գեղեցիկ նկարներ։ Ավետարանի մեջ եղող ղծերը, տառերի ստվերները զարմանալի նրբությամբ են նկատվում, ընդունված կանոնների դեմ ոչ մի բառի կազմվածքը չի մեղանչում։ Պետք է երևակայել, թե որքան տոկունություն է հարկավոր, որքան ուշադրություն է պետք լարել այդպիսի մանր գրերով, քանոնի օգնությամբ տառերը կազմելու և ամբողջ չորս Ավետարանները գրելու համար։

Գեղագիր Ավետարանը անչափ հմտությամբ և նուրբ ճաշակով է սկսված և ավարտված։ Ավետարանը դրված է գեղեցիկ արծաթյա ոսկեզօծ կազմի մեջ, որը հատկապես ինքը պատրաստել է տվել իր Ավետարանի համար Մոսկվայում։ Բուռն թափով գեղարվեստին նվիրման մեջ Մարգարիտը աշխատում էր մոռանալ իր կյանքի մենակությունը, բայց արվեստից այդքան խոր և անհաշիվ տարվելը նրան շատ թանկ արժեց, մինչև աչքերի լույսի իսպառ կորուստը։ Փչանում է նրա աչքերից նախ մեկը. հակառակ բժիշկների կտրուկ արգելքին նա չի հրաժարվում իր նախասիրած գործից, շատ նեղությամբ, փչացնելով երկրորդ աչքն էլ, նա ավարտում է մի երկրորդ Ավետարան ևս, նախկինի կատարելությամբ, և այն նվիրում Շուշու Ղազանչեցոց եկեղեցուն։

1902 թվականի մարտի 27-ին Շուշի քաղաքում վախճանվում է գեղագրող Մարգարիտ Ալեքսանյանցը։ Խրիմյան Հայրիկի հրամանով նույն ամսի 30-ին, Ս. Գրիգոր Լուսավորչի տոնին, Ղազանչեցոց եկեղեցու բակում մեծ հանդեսով հողին են հանձնում բազմավաստակ երախտավորին։

Հայկական գեղարվեստի դանձարանում մեծ ավանդ է մուծել համեստ գեղանկարիչ Մարգարիտ Ալեքսանյանցը։ Նա ցանկանում էր ավելին տալ, բայց դաժան ժամանակները, ուր ծնվել և գործել էր նա, հնարավորություն չտվեցին նրան է՛լ ավելի զարգանալ և պտղաբերել իր այնքան շատ սիրած հայ մանրանկարչության ասպարեզում։ Պետք է շեշտել, որ եթե Մարգարիտ Ալեքսանյանցը ծնված լիներ և աճած կյանքի այլ հանգամանքների մեջ, ապրեր ավելի աղատ մի շրջապատում և ունենար մասնագիտական կրթության համար անհրաժեշտ մեծ վարպետների առաջնորդությունը, նա իր զարմանալի աշխատասիրության և ընդունակությունների շնորհիվ կարող էր հրաշքներ գործել, առանց զոհաբերելու իր թանկագին տեսողությունը։ Այդ ժամանակ հայկական մանրանկարչությունն էլ տաղանդավոր արվեստագիտուհուց փոխանակ երկու հատորի՝ կունենար բազմաթիվ գործեր։

Մարգարիտ Ալեքսանյանցը իր կենդանությանը գնահատվել է Մայր Աթոռի կաթողիկոսներից, ոչ միայն իր գեղարվեստագետի ձիրքերի համար, այլև իբրև առաքինի և հավատացյալ մի կին, սկսյալ Մատթեոս Ա-ից մինչև Խրիմյան Հայրիկը, որոնք նրան գնահատել են օրհնության կոնդակներով։

Ս. Էջմիածինը թանկ է գնահատում իր բոլոր երախտավորներին, որոնք ոչ մեկ զոհողության առաջ կանգ չեն առել՝ շարունակելու համար իրենց հայրերից ավանդ թողնվածը։ Մենք խոնարհում ենք նրանց խնկելի հիշատակի առաջ և մեծ երկյուղածությամբ ու զուրդուրանքով պահպանում նրանց թողած ժառանգությունները հոգևոր գանձարանում։ Այսօր էլ Ս. Էջմիածնի թանկագին գանձերից մեկն է բարեհիշատակ տիկնոջ ձեռագիր Ավետարանը և այն պարծանքով է ցուցադրվում Մայր Աթոռի թանգարանի սրահներում։

ՊՐՈՖ.-ԴՈԿՏ. Լ. ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿ

Դիտության վաստակավոր գործիչ

ՀԱԿՈԲ ՇԱՀԱՆ-ՋՐՊԵՏՅԱՆ ԵՎ ՆՐԱ ՆՈՐԱՀԱՅՏ ՖՐԱՆՍԵՐԵՆ ԱՆՏԻՊ ԵՐԿԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

(Մանվան 120-ամյակի առթիվ)

Հակոբ Շահան-Ջրպետը (Chahan de Cirbied, H. M. III. Чербет, ըստ Մ. Նալբանդյանի՝ Шахан-Черпет) 1826 թվականից ֆրանսերենի դասատու էր Նորաբաց Ներսիսյան դպրոցում, իսկ 1828—1829 ուսումնական թվին տեսուչ նույն դպրոցում։

Նրա մանկավարժական գործունեության մասին գրականության մեջ որոշ տեղեկություններ կան ամփոփված Ա. Երիցյանի[1] և Ս. Մալխասյանի-Համապատասխան գործերում։ Իսկ նրա գրական-գիտական վաստակների մասին մանրամասն, թեև ոչ սպասիչ կերպով, խոսում են Գարեգին վարդապետ Զարբհանալյանը[2] և նույն Ա. Երիցյանը[3]։

Հակոբ Շահան-Ջրպետյանը սիրիացի հայ էր։ Ծնված լինելով մոտ 1766 թվականին Եդեսիայում (Ուռհայում, այժմյան Ուրֆա), այնտեղից դարավերջում դաղթել է Փարիզ, ուր և սկսել է մանկավարժական և գրական-գիտական գործունեությունը, ձեռք բերելով համբավ մոտ հայազգի—սուլթանական։

Փարիզում Ջրպետը աշխատել է ֆրանսիական արքայական մատենադարանին կից գտնվող «Արևելյան կենդանի լեզուների դպրոց»-ում, իբրև հայերենի դասատու, որով և հնարավորություն է ստացել ի մոտո ծանոթանալու և կապվելու այն ժամանակվա ֆրանսիական գիտական շրջանների հետ։

Ջրպետի մանկավարժական գործունեությունը Փարիզում տևել է նախ 1799—1801 թվականները, իսկ 1811—1826 թվականներին նա զբաղվել է հիշյալ դպրոցում «Հայոց լեզվի ամբիոն»-ը, ինչպես այդ, ի միջի այլոց, նշված է Մ. Նալբանդյանի ռուսերեն դիսերտացիոն շարադրության մեջ՝ «Հայոց լեզվի ուսումնասիրություն Եվրոպայում և հայ գրականության գիտական նշանակություն»[5]։

Փարիզում ապրած միջոցին Ջրպետը ձեռնամուխ է լինում մի շարք հայագիտական հրատարակությունների թե՛ անհատապես և թե՛ ֆրանսիացի այլևայլ գիտնականների ընկերակցությամբ։

1 «Պատմութիւն 75-ամեայ գոյութեան Ներսիսեան հայոց հողեոր դպրոցի. որ ի Թիֆլիս (1824—1899 թ.), հատ. Ա (1824—1850 թ.), աշխատասիրեաց Աղեքսանդր Դ. Երիցեանց». Թիֆլիս, 1898, էջ 75, 77—81, 131—150։

2 «Համառօտ պատմութիւն Ներսիսեան հողեոր դպրոցի եւ թանասուն հինգամեայ գոյութեան (1824—1899), կազմեց Ստ. Մալխասեանց». Թիֆլիս, 1900, էջ 33—36։

3 «Ուսումնասիրութիւնք հայ լեզուի և մատենագրության յԱրևմուտս». Հ. Դ[ասեղի] Զ[արբհանալեան]. Վենետիկ, 1895, էջ 109—129։

4 Ա. Երիցյանց. «Հիշյալ աշխատությունում», էջ 134—150։

5 Մ. Նալբանդյան, «Անտիպ երկեր», խմբագրություն և կոմենտարներ Աշոտ Հովհաննիսյանի, Երևան—Մոսկվա, 1935, էջ 30, 38։— Մ. Նալբանդյան, «Երկերի լիակատար ժողովածու», հատ. II, Երևան, 1947, էջ 331 (Шахан-Черпет)։

Այս կարգի Ջրպետի առաջին գործը լինում է «Հետազոտութիւնք ի վերայ հին պատմութեան Ասիոյ» գիրքը, Ֆրանսերեն, Փարիզ, 332 էջ։

Առաջին Հայրենական պատերազմն ավարտելուց և Մոսկվայում Լաղարյանների անվան Արևելյան լեզուների ճեմարանը հիմնելուց հետո (1814 թ.) նույն այդ աշխատությունը Ա. Խուդարաշյանը (հետագայում անուն վաստակած բառարանագետը) վերածում է ռուսերենի և հրատարակում հետևյալ վերնագրով. «П. М. Ш. Чирбет и Ф. Мартин, «Любопытные извлечения из древнейшей истории о Азии, почерпнутые из восточных рукописей, хранящихся в Парижской библиотеке, и из иных источников, изданные в Париже на французском языке в 1806 году, а ныне здесь переведенные Александром Худобашевым», СПБ. 1816.

1810 թվականին Ջրպետը գրում է «Ընդհանուր նկարագիր Հայաստանի» գործը[6]։

Ապա Ջրպետը հայոց լեզվի ամրիոնը գրավելու պահից (1811 թ.), Փարիզում մասնակցություն է ունենում հետևյալ աշխատությունների հրապարակման գործում։

Նույն 1811 թվականին Ջրպետը մասնակցում է Սեն-Մարտենի ձեռնարկած գործին՝ Մատթեոս Եղեսացու (Ուռհայեցու) պատմության մի շարք մանրամասնությունների մեկնարանության գծով, որոնք վերաբերում են Բյուզանդիայի արշավանքներին դեպի Պաղեստին։ Հրատարակիչը այդ նյութերը քաղել է Փարիզի արքայական մատենադարանին պատկանող հայերեն գրչագրից[7]։

1812 թվականին Ջրպետը հրապարակում է «Տեղեկութիւն ի վերայ երկուց գրչագրաց, որ բովանդակեն զՊատմութիւն Մատթէի Եռիցւոյ, և քաղուած ի պատմագրութենէ անտի վերաբերելոցն առաջին խաչակրութեան, ի հայ և ի գաղղիերէն»[8]։

Միաժամանակ Ջրպետը ձեռնարկում է «Խորհուրդք (թելադրութիւնք) առ հայս հարաւային դաւառաց պետութեանն ռուսաց յաղագս մշակութեան բամբակի»[9] աշխատությունը։

1817 թվականին Ջրպետը երկու այլ ընկերների հետ միասին մասնակցում է Պարսկաստանի նկարագրությանը նվիրված մի գրքի հրատարակության, որ է «Տեղեկութիւն ի վերայ այժմեան վիճակին Պարսկաստանի, ի լեզու պարսիկ, հայ և գաղղիացի, ի Միր Տաւուտ Ծատուրէ, Լանգլեսէ և ի Ջոպետէ»[10]։ Գիրքը հիմնականում գրել են Միր-Դավուդ-Ծատուր Մելիք-Շահնազարը և Մ. Լանգլեսը, որոնք շրջել էին պարսկաստանը ֆրանսիական կառավարության հանձնարարությամբ, իսկ Ջրպետը մասնակցել է գրքում հայերեն տեքստի մշակման գծով։

1820 թվականին Ջրպետը, Ֆրանսիայի հնագիտական ընկերության պատվերով, գրում է «Զկառավարութենէ և զկրօնից նախնի հայոց» աշխատությունը, որը հիշատակում են Հ. Գ. Զարբհանալյանը[11] և Հ. Ա. Ղազիկյանը[12], և որը, սակայն, մնացել է անտիպ։ Այս աշխատությունն է, ըստ երևույթին, մի մասն այն գործի, որը նորերս հայտնաբերվեց Վրաստանի Կենտրոնական պատմական արխիվում և որի մասին կխոսենք ստորև։

1823 թվականին Ջրպետը հրատարակում է գրաբարի ստվար դասագիրքը, որը հետևյալ ընդարձակ վերնագիրն է կրում. «Քերականութիւն արամեան լեզուին, յորում բացատրին սկզբունք և կանոնք արամեան լեզուին ըստ հեղինակութեան ընտրելագոյն քերթողաց, ուղղախօս մատենագրաց և սեպհական սովորութեանց հայկական բարբառոյ։ Ցօրինեալ ի պէտս ուսման աշակերտաց արքայական և մասնաւոր դպրոցի արևելեան լեզուաց թագաւորական գրատան։ Ի Յակոբայ Շահան-Ջրպետեան յԵդեսացւոյ» (նույնը և ֆրանսերեն)[13]։

Այս դասագիրքը սուր քննադատության ենթարկվեց Ջրպետի երբեմնի աշակերտ Հովհաննես վարդապետ Զոհրապյանի կողմից «Journal Asiatique»-ի էջերում, որը հրատարակվում էր նույնի (Ջրպետի) մի այլ աշակերտ Սեն-Մարտենի խմբագրությամբ։ Հավանական է, որ այս գրախոսականը մեծ վիշտ պատճառած լիներ հեղինակին, որի հետևանքով նա որոշեց Փարիզից հեռանալ, չնայած, որ ինքը 40 էջանոց ընդարձակ բացատրություն-պատասխան էր գրել այդ քննադատության առթիվ[14]։

Վերջապես, 1824 թվականին Ջրպետը հրատարակում է, ըստ Փարիզի արքայական

---

6 «Ուսումնասիրութիւնք հայ լեզուի և մատենագրութեան յԱրևմուտս», էջ 110։

7 Հմմտ. Հ. Առսեն Ղազիկյան, «Հայկական նոր մատենագիտութիւն և հանրագիտարան հայ կեանքի», հատ. Ա, Վենետիկ, 1909—1912, էջ 1865։

8 Նույն տեղում։

9 «Ուսումնասիրութիւնք հայ լեզուի և մատենագրութեան յԱրևմուտս», էջ 110—111։—Հ. Ա. Ղազիկյան. Նույն տեղում։

10 Հ. Ա. Ղազիկյան, Նույն տեղում, էջ 1003։

11 «Ուսումնասիրութիւնք հայ լեզուի...», էջ 111։

12 Ա. Երիցյանց, Հիշյալ աշխատությունում, էջ 135։

13 Հ. Գ. Զարբհանալյան, «Հայկական մատենագիտութիւն», Վենետիկ, 1883, էջ 705—706։

14 Հմմտ. Ա. Երիցյանց. Հիշյալ աշխատությունում. էջ 136—137։

մատենադարանի հայերեն ձեռագրերի», Դիոնեսիոս Թրակացու «Արուեստ քերակա-Դիոնեսիոս Թրակացու «Արուեստ քերակա-Ն. Ադոնց», որն, ինչպես հայտնի է, մեծ գեր խաղաց հայ բանասիրական-լեզվագրական մտքի զարգացման պատմության մեջ սկսած Զ—է դարից։ Սա, իրոք, ասորանիկ հրատարակությունն էր մեծահռչակ հույն բանասեռակությունն էր մեծահռչակ հույն բանասեռի երկասիրության, հետևյալ վերնագրով. Քերականութիւն Դիոնէսիոսի Թրակացւոյ, հանեալ ի Թագաւորական գրատան Փարիզոյ և ի լոյս ընծայեալ ի յոյն և ի հայ և ի գաղղիացի լեզուս. հանդերձ ծանօթութեամբ և բացատրութեամբ ի Յակովբայ Շահան-Ջրբպետեան եղեսացւոյ»։

Ի դեպ, նշենք, որ Դիոնեսիոս Թրակացու այս գործը վերահրատարակեց հետագայում Ն. Ադոնցը»։

Այսպես թե այնպես, իր վերջին հրատարակություններում Ջրպետն իր ազգանունի հիշատակությանը գրքերի տիտղոսաթերթին՝ թե՛ ֆրանսերենին և թե՛ հայերենին՝ կցում է իր պաշտոնավարության և կոչումների այսպիսի տվյալներ. «դասատու վարժապետ հայկական բարբառով յԱրքայական դպրոցի արևելյան լեզուաց Թագաւորական գրատան [Ի Փարիզ], «անդամ». «ՀԵՍԿԵՐՈՒԹԵԱՆՑ Համալսարանին ընդդիտաց Գաղղիոյ», «ԴամարՀակին (այսինքն՝ ժողովին—Լ. Մ.-Բ.) աշխարՀագրաց Փարիզոյ», «Հայկական ճեմարանին Սրբոյն Ղազարու Վենետիկ (այսինքն՝ Վենետիկ—Լ. Մ.-Բ.) քաղաքի», «Փարիզի Ասիական ընկերությունը» այստեղ չի հիշվում, հավանական է, այն պատճառով, որ այն հիմնվել էր միայն 1822 թվականին և այդ պահին Ջրպետը կարող էր այնտեղ դեռ ընտրված չլինել։

Ջրպետը գրագրություն է սկսում Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցու հետ, հավանական է, Թիֆլիսում գործող ֆրանսիական հյուպատոս Ժակ-Ֆրանս-Դամրայի[18] միջոցով։ Ընդ սմին Ջրպետի նամակներն ուղղված Ներսես արքեպիսկոպոսին, կրում են 1816, 1818, 1824, 1825 և 1826 թվականները[19]։

Ներսես արքեպիսկոպոս՝ Աշտարակեցու խնդրով է, որ Ջրպետը կազմում է նախագիծ Թիֆլիսում հիմնվելիք դպրոցի համար՝ Առաջարկություն դպրոցական կարգադրությանց ի պէտս հայկական ուսումնարանին Տփխիզ քաղաքի» վերնագրով, որ հրատարակել է Ա. Երիցյանը[20]։

Այդ նախագիծը նախատեսում էր Ներսիսյան դպրոցի կազմակերպումը («դասակարգություն վարժարանաց ուսումնարանին») 12 բաժնից, որոնցից 1—10 հեղինակը կոչում է «վարժարան», իսկ 11—12՝ «լսարան»։ Իր հերթին, «լսարան»-ը ընդգրկում էր «կանոնադրական» և «եկեղեցական» բաժինները։

Իհարկե, պատահական չէր, որ այս «առաջարկությանց» տեքստում Ջրպետը ցուցադրեցնում էր որոշ չափով հմտություն հայ մատենագրության, եկեղեցական պատմության և կանոնական իրավունքի բնագավառում, որը նա ցուցաբերել էր դեռևս 1820 թվականին ֆրանսիական հնագիտական ընկերության պատվերով կատարած գործում։ Մասնավորապես «կղերական լսարան»-ի Գ դասարանի ծրագրում նշված է «ծանօթութիւն ի վերայ եկեղեցական պատմութեան, ժողովոց և եկեղեցական կանոնաց հայոց»[21]։

1826 թվականին գրական լուծում է ստանում Ջրպետի Փարիզից Թիֆլիս տեղափոխվելու հարցը։

Անկասկած, այդ իսկ պահից Ջրպետի տեղը Փարիզում գրավում է ֆրանսիացի հայագետ Լը-Վայան-դը-Ֆլորիվալը, որն հետագայում մեծ անուն վաստակեց իր բազմաթիվ աշխատություններով[22]։

Նույն 1826 թվականից սկսում է Ջրպետի գործունեության երկրորդ շրջանը՝ Թրիլիսիում, նախ իբրև ֆրանսերենի դասատու, ապա և տեսչի Ներսիսյան դպրոցում։

---

15 Այժմյան ցուցակագրությամբ № № 269 և 270 (F. Macler, «Catalogue des manuscrits arméniens et géorgiens», Paris, 1908, pp. 110—111).

16 Հ. Ա. Ղազիկյան, նույն տեղում, էջ 533։

17 Ն. Ադոնց. «Արուեստ Դիոնիսեայ քերականի և հայ մեկնութիւնք նորին», Պետերբուրգ, 1915։

18 Դամրայի մասին տե՛ս M. A. Полиевктов «Европейские путешественники по Кавказу 1800—1830 гг. (մեր խմբագրությամբ), Тбилиси, 1946, стр. 86—89.

19 Ա. Երիցյանց, Հիշյալ աշխատությունում, էջ 139 և այլն։

20 Նույն տեղում, էջ 78—82։

21 Նույն տեղում, էջ 79—80։

22 Կ. Կոստանյանց, «Հայագիտությունն Արևմտեան Եւրոպայումն», Թիֆլիս, 1910, էջ 83—84։ Այս Լը-Վայան-դը-Ֆլորիվալը, որին հիշատակում է, ի միջի այլոց, և Մ. Նալբանդյանը («Անտիպ էջեր», 31, 32, «Երկերի լիակատար ժողովածու», II, 332, 340), 1834 թ., Մ. Բրոսսեի հետ ճանապարհորդել է դեպի Կովկաս և ցարական կառավարության ժամանակվա մի գրագրության մեջ կոչվում է «Էվայանս» և Բրոսսեի հետ միասին ճանաչվել է բաղարականապես «անբարեհույս» (Л. Меликсет-Бек, «Французские армениисты первой половины XIX века по архивным материалам Грузии. Яков Шахан-Джрпет, Ле-Вайан-де-Флоривал и Мари-Фелисите Броссе», «Թբիլիսիի Պետ. համալսարանի աշխատություններ», հատ. 63, Թբիլիսի, 1956, էջ 299—310։

Եվ ահա այդ գործունեության բնութագիրը տալիս է Ս. Մալխասյանը, որը համարում է նրան՝ Ջրպետին՝ մի տեսակ արկածախնդիր դևմք գիտության և մանկավարժության ասպարեզում, նույնիսկ «առաջին» չարիքը նորաբաց Ներսիսյան դպրոցի դըլխին[23], քանի որ 1828 թվականի սեպտեմբերին Ալամդարյանի կողմից նրան հանձնված 400 աշակերտի փոխարեն 1829 թվականի մայիսին նա Ալամդարյանին «վերադարձրեց ուսումնարանը 150 աշակերտով», «այնպես, որ Ալամդարյանն ստիպված էր յուր տարիներով շինածը, իսկ Ջրպետի 9 ամսվա ընթացքում կիսով չափ քանդածը նորից վերաշինելա և այլն»[24]։

Ի վերջո Ս. Մալխասյանը նշում է և այն, որ Ջրպետի 2 տարվա և 3 ամսվա գործունեության համար դպրոցը նրան ոռճիկ և հանապարհածախս վճարեց, և բացի դրանից տրվեց որոշ նպաստ և Ֆրանսիա վերադառնալու համար կառք դնելու դրամ։ «Ջրպետը սակայն էլ Փարիզ չդարձավ, մինչև կյանքի վերջը մնաց Տիֆլիսում և կառավարությունը նորան կենսաթոշակ նշանակեց տարեկան 500 ռ.»[25]։

Բարեպատեհ հանգամանքների դասավորությամբ, Ջրպետը Թիֆլիսում բնակվում էր նույն տանը, որտեղ ապրում էր Սունդուկյան ընտանիքը. նա փոքրիկ Գարրիելին (ապագա մեծ թատերագրին) սովորեցնում էր «հայերեն, դրաբար և իտալերեն, իսկ Ջրպետյանի ֆրանսուհի կինը՝ ֆրանսերեն»[26]։

Ջրպետը վախճանվել է Թիֆլիսում 1838 թվականին։

Ջրպետի գործունեության երկրորդ շրջանի արդասիքն է, ի միջի այլոց, նրա մի երկասիրությունը, գրված, կամ, ավելի ճիշտն ասած, ավարտված Թիֆլիսում 1829 թվականին, որը նորերս հայանադրվեց Վրացական կենտրոնական պատմական արխիվում։

Դա մի ստվար աշխատություն է հայոց պատմության և կանոնական իրավունքի ընդարձակ, հորինված ֆրանսերեն, հարց և պատասխանի ձևով, երկձալ (ին ֆոլիո) 305 էջ, բաղկացած երկու մասից, յուրաքանչյուրն իր հերթին երեքական տետրից (ամբողջ գործը հետևապես վեց տետր է), տարբեր վերնագրերով։ Ձեռագիրը, որ մեզ էր հանձնված ցուցակագրելու, մենք նպատակահարմար գտանք առանձնացնելու այսպես կոչված «առանձնապես կարևոր գործերի» հավաքածուի մեջ № 263-ի ներքո[27]։

Առաջին մասի վերնագիրն է «Réponses et éclaircissemen[t]s[28] sur les 85 questions proposées relativement à l'histoire aux lois canoniques et à l'etat ancien et moderne du clergé arménien, données d'après les usages existants et les témoignages des auteurs originaux du pays. Par J. Chahan de Cirbied, Tiflis, le 29-ybre 1829», այսինքն «Պատասխանիք և մեկնարանություն հայոց պատմության, կանոնական իրավունքի և հոգևորականության վաղեմի և ներկա կացության վերաբերյալ, առաջադրված 85 հարցերին,— տրված համաձայն տիրող սովորույթի և ըստ վկայության բնիկ հայ հեղինակների. ի ձեռն Հ. Շահան-Ջրպետի. Թիֆլիս, 29 նոյեմբերի 1829 թ.»։ Ընդամենը 1—155 էջ, Ա—Գ տետրակները։

Երկրորդ մասը կրում է հետևյալ վերնագիրը. «Rép nses et éclaircissem n[t]s[29] sur d'autres questions proposées, touchant la religion, l'hitoire et la hiérarchie ecclésiastiques chez les arméniens. Par. J. Chahan de Cirbied», այսինքն «Պատասխանիք և մեկնարանություն հայոց կրոնի, պատմության և եկեղեցական նվիրապետության վերաբերյալ առաջադրված հարցերի. ի ձեռն Հ. Շահան-Ջրպետի», սակայն այս անդամ առանց գրության տեղն ու ժամանակը նշելու։ Գրված ունի 156—305 էջերը, Դ—Զ տետրակները։

Իսկ տետրների դասավորությունն այսպես է. Ա՝ 1—42 էջ, Բ՝ 43—88 էջ, Գ՝ 89—155 էջ, Դ՝ 156—216 էջ, Ե՝ 217—268 էջ և Զ՝ 269—305 էջ։

Ջրպետի այս նորահայտ աշխատությունը ներկայացնում է իրենից մի տեսակ փորձ հայոց պատմության և գերազանցապես, եկեղեցական պատմության և կանոնական իրավունքի ամփոփման, գրված Հ. Միքայել Չամչյանի «Հայոց Պատմութեան» (հատ. Ա—Գ, Վենետիկ, 1784—1786) և ձեռագիր «կանոնագրքերի» զգալի ազդեցությամբ, որը, սակայն, կանոնական իրավունքի շարադրման մասում առաջինն է իր տեսակով։

23 Ս. Մալխասյանց, հիշյալ աշխատությունում, էջ 33—36, հմմտ. 170—175, 178—179, 184—185, 188, 189, 191, 208, 216 և այլն։

24 Նույն տեղում, էջ 35—36։

25 Նույն տեղում։

26 Գ. Արով, «Գարրիել Սունդուկյան», Երևան, 1953, էջ 20։

27 Մանրամասն տե՛ս Л. Меликсет Бек, „Французские армениcты первой половины XIX века по архивным материалам Грузии", стр. 302—304:

28 Բնագրում՝ éclaircissemens.

Դեռ ավելին։ Նա մի քանի տարով կանխում է կարդինալ Avg. Mulus-ի լույս ընծայած լատիներեն գրքին՝ „Ecclesiae Armenae canones selecti", որը ապված է «Scriptorum veterum collectio ex Vaticanis codicus edita» շարքի Ժ հատորի Ա պրակում (Հռոմ, 1938, էջ 269—316)[30]։

Բացի Հ. Մ. Ջամչյանից և «Կանոնագիրք Հայոց»-ից Ջրպետը լայն չափով օգտագործել է Փարիզի արքայական (այժմ ազգային) մատենադարանի հայերեն ձեռագրերի հավաքածուն և հայագիտական հրատարակությունները։ Ուստի և նա ի վիճակի է մի առ մի հիշատակել բավականին թվով սկզբնաղբյուրներ։

Հայ մատենագիրներից Ջրպետը հիշատակում է մի քանի տասնյակ անուն. Ջենոբ Գլակ, Եղիշե, Մեսրոպ երեց, Մովսես Խորենացի, Հովհան Մամիկոնյան, Սամվել Անեցի, Մատթեոս Եդեսացի, Ստեփանոս Օրբելյան, Վարդան և այլն, նաև՝ Միքայել Ասորի, որքան սա մինչև ԺԲ դարի վերջը հայ հեղինակ էր համարվում, ապա Ղազար Կոսթղիկոս Ջահկեցի, Հ. Ղուկաս Ինճիճյան և այլն։

Գրքում զգալի է նաև «Վարք հարանց»-ի և «Յայսմաւուրք»-ի աղդեցություններ։ Իսկ «Կանոնաւորքից» քաղված են տվյալներ եկեղեցական ժողովների ժամանակագրության և սահմանումների մասին, սկսած Վաղարշապատի 325 թվականի ժողովից և մինչև Երուսաղեմի 1651 թվականի ժողովը ներառյալ, որոնց տեսությանը նվիրված է աշխատության Բ մասի Ե տետրը (էջ 217—242)։

Տեղ-տեղ Ջրպետը հիշում է և լատին ու իտալացի հեղինակների գործերը և սրանց թվում „Compendio storico della nazione armena del Marchese de Serops (armenienne d'origine)"։

Երբեմն-երբեմն Ջրպետը խոսում է ժամանակակից անցքերի մասին, օրինակ Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցու և գեներալ Պասկևիչի փոխհարաբերությունների մասին, որոնց ժամանակակիցն էր ինքը. հիշելով միջանկյալ Թիֆլիսը (էջ 279), ուր գրվել կամ, ավելի ճիշտն ասած, ավարտվել է այս գործը 1829 թվականին, եթե իհարկե, ընդունվի, որ այն սկսված լիներ դեռևս Փարիզում եղած պահին և որոշ առնչություն ունենար դեռևս 1820 թվականին ձեռնարկած և անտիպ մնացած երկի հետ։

Ջրպետի նորահայտ ֆրանսերեն երկասիրության առաջին մասն ավարտվել է Թրիլիսիում 1829 թվականին։ Երկրորդ մասը թվական չունի։ Սակայն պիտի ենթադրել, որ այն ևս ավարտված է նույն 1829 թվականին կամ թե չէ նրանից մի քիչ ուշ։

Ի վերջո, կարևոր ենք համարում նշել, որ Հայաստանյայց Առաքելական եկեղեցու «армяно-григорянская», նույնիսկ «армяно-грегорянская» (վերջինս ֆրանսերենի աղդեցությամբ՝ S. Grégoire-ից) հորջորջումը 1836 թվականի 11 մարտին «բարձրագույնս» հաստատված «Պոլոժեննիե»-ում, անկասկած, Ջրպետի համապատասխան կոմիսիայում մասնակցելու աղդեցությունն է կրում։

Տե՛ս նախորդ ծանոթագրությունը։

30 Հմմտ. մեր «Об источниках древне армянского права», Լենինգրադ, 1925, էջ 143—163, նաև մեր «Указатель литературы по истории права Грузии, Армении и Азербайджана», Թբիլիսի, 1939. մեր օրոր հրապարակված նմանօրինակ գործերից տե՛ս «S. Congregazione Orientale. Codificazione Canonica Orientale. Font. Fascicolo VII. Disciplina Armena. Testi veri di dritto canonico Armeno (secolo IV—XVII)», Հռոմ, 1932, 632 էջ։

Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

(Պատմական գիտությունների
թեկնածու, ճնագետ)

ՍԱՆԱՀՆԻ ՎԱՆՔԸ*

ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՏՄԱ-ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ամենափրկիչ եկեղեցի.— *Եղել է վանքի գլխավոր եկեղեցին. նրա կառուցման մասին ԺԸ դարի պատմիչ Ստեփանոս Տարոնեցին գրում է. «Յաւուրս սորա (Աշոտ Ողորմած թագաւորի— Հ. Ե.) շինեցան կրօնաւորանոցք, ճղնաւորականաց տեղիք Սեաւորդեաց աշխարհին, հաւասարակեացք, միաբանականք, ըստ յառաջասացեալ կանոնին սահմանադրութեան սրբոյն Բարսղի, որոց երկոցունց տեղեացն անուանք Հաղբատ և Սանտհին հանդէպ միմեանց, միակրօնք ի տան Աստուծոյ՝ արանց Շ-ոց։ Եւ առաջնորդ Սանահնի՝ Յովհաննէս դիտնական այրն Աստուծոյ, իսկ Հաղբատայ՝ Սիմէոն ճղնազգեաց ծառան քրիստոսի»*[7]։

ԺԲ դարի մատենագիր Սամվել Անեցին Սանահնի կառուցումը որոշակի կերպով դնում է 967 թվականին, իսկ Հաղբատինը՝ 10 տարի հետո Սանահնից, վերագրելով դրանո եկուսի կառուցումը Աշոտ Ողորմածի կին Խոսրովանույշ թագուհուն.— «Ի ԽԺԶ թվին շինեցաւ Հաղբատ, և Սանահինն՝ Ժ ամաւ առաջ քան զՀաղբատ շինեցաւ ի Խոսրովանուշ թագուհւոյն՝ ի կնոջէ Աշոտոյ Շահնշահի»[8]։

Վարդան Բարձրբերդցին նույնպես Սանահնի և Հաղբատի կառուցումը վերագրում է Խոսրովանույշ թագուհուն.— «Իսկ ի յորս հարիւր թուին փոխի սուրբ թագաւորն Աբաս, և առնու զթագն Աշոտ որդի նորա՝ Ողորմածն կոչեցեալ, որ բաղում ուրկանոցս շինեալ՝ առատ ոռճկօք ուրախ առնէր զնոսա։ ...Եւ բարեպաշտ կոգն իւր՝ Խոսրովանույշ, շինէ զփառազարդ սուրբ ուխտն Սանահին և զՀաղբատ»[9]։

Հայ մատենագիրներից մեջբերված վկայությունները բնորոշ են նրանով, որ Ստեփանոս Տարոնեցին, Սամվել Անեցին և Վարդան Բարձրբերդցին ոչ թե պատմում են Սանահնի Ամենափրկիչ եկեղեցու կառուցման, այլ ընդհանրապես Սանահնի ու Հաղբատի վանքերի կառուցման մասին, չնայած Տարոնեցու վկայության, արդեն գոյություն ունեին այդ վանքերը, որոնց առաջնորդների մասին հիշատակում է ինքը։ Տարոնեցու այն թեզը, թե Սանահնի և Հաղբատի վանքերի, այսինքն՝ նրանց գլխավոր եկեղեցիների կառուցումով վանական միտքանության անդամների թիվը յուրաքանչյուրում հինգ հարյուր մարդու է հասնում, վկայում է, որ Սանահնի վանքը՝ Ամենափրկիչ եկեղեցու կառուցումով նոր բովանդակություն ու հրուշակ է ստանում։

Ինչ վերաբերում է Ամենափրկիչ եկեղեցու կառուցման ժամանակին, ապա Սամվել

---

* Շարունակված ամսագրի 1958 թվականի № 1-ից։

7 Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան, Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885 թ., էջ 181։

8 Նույն տեղում. էջ 100։

9 Նույն տեղում, էջ 121—122։

Անեցու ցույց տված տարեթիվը, ինչպես այդ առիթ ենք ունեցել ստուգելու ուրիշ կապակցությամբ, միանգամայն հավանական է. ուստի պետք է ընդունել, որ Ամենափրկիչ Եկեղեցին կառուցված է Խոսրովանույշ թագուհու կողմից 967 թվականին։

Եկեղեցու շենքը կենտրոնագմբեթ մի ընդարձակ կառուցվածք է, որի հատակագիծն արտաքուստ ուղղանկյուն է, իսկ ներսից՝ չորս անկյուններում եղած խորաններն այն դարձնում են խաչաձև՝ ուղղանկյուն խաչքևերով։ Արևելյան խաչքևում տեղադրված է կիսակլոր արսիդը՝ բարձր բեմով։ Խորանները երկհարկանի են. արևմտյան կողմի խորանների դռները բացվում են նույն կողմի խաչքևի մեջ՝ իրար դիմաց. վերի հարկի խորանները բարձրանում են ներքին հարկի խորաններին կից քարյա սանդուղքներով։ Արևելյան կողմի՝ ստորին հարկի խորանների դռները բացվում են դեպի արևմուտք, իսկ վերի հարկի խորաններինը՝ արսիդի մեջ՝ իրար դիմաց։

Խաչքևերի միացման անկյուններից ձգվող որմնասյուները միանալով կամարներով իրենց վրա են կրում գմբեթը՝ կլոր թմբուկով և սուր վեղարով։ Շրեղորեն զարդարված պարակալներ ունեցող երկու մուտքերից մեկը արևմտյան կողմից է, որը բացվում է գավթի մեջ և մյուսը հյուսիսային կողմից, որը փակված է Մագիստրոսի Հեմարանի որմնասյուներով. մեկական կամարակապ լուսամուտ բացվում է յուրաքանչյուր խաչքևի կենտրոնից և զրանց համապատասխան, չորս նույնաձև լուսամուտ էլ բացվում են գմբեթի թմբուկի մեջ։

Առանձնապես հետաքրքիր են զարդաքանդակները, որոնք բուսական, երկրաչափական և կենդանական բնույթի են և մշակված են վերին աստիճանի նուրբ ձևերով։ Պատերն արտաքուստ զարդարված են զույգ գլանաձև կիսասյուներով, որոնք ունեն խարիսխներ և. խոյակների վրա հենվող որմնակամարներ։ Խարիսխներն ու խոյակները պատած են գանազան կենդանիների և թռչունների բարձրաքանդակներով, ինչպես և բուսական ու երկրաչափական ձևերի գարդաքանդակներով։ Մուտքի և լուսամուտների շրջանակները նույնպես պատված են բուսական և երկրաչափական բնույթի զարդաքանդակներով։ Արևելյան ճակատում ագուցված է Աշոտ Ողորմած թագավորի որդիներ Կյուրիկեի և Սմբատի ամրողջական



ՍԱՆԱՀՆԻ ՎԱՆՔԸ.— ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՃԱԿԱՏԸ։ ՁԱԽԻՑ՝ ԵՐԿԱՏՆԱԲԱԶՈՒԿ ԱՐՔՈՒԹՅԱՆՆԵՐԻ ԴԱՄԲԱՐԱՆԸ։



ՍԱՆԱՀՆԻ ՎԱՆՔ.— Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԱՐԵՎԵԼՔԻՑ։ ԱՋ ԱՆԿՅՈՒՆՈՒՄ՝ ԿՈՐԻԿԵ ԹԱԳԱՎՈՐԻ ԳԵՐԵԶՄԱՆԸ։

բարձրաքանդակները, ձեռքներին եկեղեցու կաղապարը բռնած, համապատասխան մակագրություններով՝ «Կուրիկէ թագաւոր» (հարավից), «Սմբատ թագաւոր» (հյուսիսից)։ Պատերը ներսից ծեփված են եղել, որն ամբողջովին թափված է, արսիդի պատերին պահպանված փոքրիկ ծեփերի վրա նկատելի են որմանկարների հետքեր՝ ծաղկենկարների ձևով։

Հուշարձանը բազմիցս ենթարկվել է վերանորոգումների, որոնցից հայտնի են՝ Հովհաննես եպիսկոպոսի և Գրիգոր վարդապետ Տուտեորդու կողմից 1184 թվականին, որի մասին հիշատակվում է Տուտեորդու մահարձանի տապանագրության մեջ, Սարգիս եպիսկոպոսի կողմից 1652 թվականին, Թումանի որդի Մանուչարի կողմից 1656 թվականին, Սողոմոն հազարապետ Արղությանի և Զաքարեի կողմից 1815 թվականին, Հարություն եպիսկոպոս Բարսեղյանի կողմից 1832 թվականին, Հովսեփ Փարսադանյան Երկայնարազուկ Արղությանի կողմից 1881 թվականին և Պատմական հուշարձանների . պահպանության կոմիտեի կողմից 1939—1940 և 1952—1957 թվականներին։

Այդ վերանորոգումների ժամանակ հիմնովին վերակառուցվել է գմբեթը, ամբողջապես վերականգնված է հարավային պատի արտաքին երեսպատը և մասամբ հյուսիսային պատի երեսպատը, լրացված են թափված քիվերը, ներսի որմնասյուներին կից կառուցված են նոր որմնասյուներ՝ իրենց միացնող կամարներով, ամբողջապես փոխված են տանիքի սալաքարերը և սալահատակը։

Աստվածածին եկեղեցի.— *Գտնվում է Ամենափրկիչ եկեղեցու հյուսիսային կողմում, որից անջատվում է Մագիստրոսի ճեմարանով։ Սրա կառուցումը, պատմական աղբյուրների համաձայն, որի մասին առիթ ունեցանք խոսելու նախորդ գլխում, վերագրվում է Հունաստանից փախած մի խումբ հայ կրոնավորների, որը համընկնում է Ժ դարի երեսնական թվականների ժամանակամիջոցին։*

Այս հուշարձանը նույնպես կենտրոնագմբեթ ձևի կառուցվածք է, արտաքուստ ուղղանկյուն, ներսից խաչաձև հատակագծով՝ ուղղանկյուն խաչթևերով։ Ներսում, յուրաքանչյուր անկյունում ունի մի-մի փոքրիկ խորան. արևմտյան խորանների դռները բացվում են նույն կողմի խաչթևի մեջ՝ իրար դիմաց, իսկ արևելյան կողմի խորանները, որոնք գտնվում են աբսիդի երկու կողմերում, դեպի արևմուտք՝ համապատասխանաբար հարավային և հյուսիսային խաչթևերի մեջ։ Երկու մուտքերից մեկը բացվում է դեպի արևմուտք՝ մեծ դավթի մեջ, իսկ մյուսը՝ դեպի հյուսիս։ Չորս պատերի կենտրոններից բացվում են մեկական փոքր լուսամուտ. դրանց համապատասխան չորս լուսամուտներ էլ բացվում են գմբեթի թմբուկի մեջ։ Վերջինս կլոր է, սուր վեղարով և հենվում է խաչթևերի միացման անկյուններից ձգվող որմնասյուները միացնող կամարների վրա։

Նկատվում է, որ այս հուշարձանը նույնպես ենթարկվել է մի շարք վերանորոգումների, սակայն հայտնի է միայն Սարգիս եպիսկոպոսի կողմից 1652 թվականին կատարված վերանորոգումը և Պատմական հուշարձանների ահպանության կոմիտեի կողմից 1952—1957 թվականներին կատարված վերանորոգումները, որոնց ընթացքում հիմնովին վերակառուցվել է գմբեթը, վերականգնվել են թափված երեսպատ քարերը և տանիքի սալաքարերը։

Գավիթ.— *Գտնվում է Ամենափրկիչ եկեղեցու արևմտյան կողմում, նրան կից։ Կառուցված է 1181 թվականին, համաձայն գավ-*

ՍԱՆԱՀՆԻ ՎԱՆՔ.— ՄԵՆ ԳԱՎԹԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՃԱԿԱՏԸ ԵՎ ՁԱՆԴԱԿԱՏԱՆ ՎԵՐԻ ՄԱՍԸ։

թի ներսում, արևելյան կողմի որմնակամարների վրա եղած հետևյալ արձանագրության.

Զ) «Ով բիւ։ Ի ժամանակս յաղթող բագաւորին Դեորգա և յամիրսպասալարութեան Սարգսի և որդոց իւրոց Զաքարէի և Իւանէի և յամիրաւորեան Քրդին ես՝ Յովանէս, աստուեղոյ սուրբ ուխտիս, շինեցի գերբեմն լեալ գեկեղեցիս ազգականութեամբ ամիր Քրդին և վարդապետի մեծի Գրիգորի և Քրիստոսի Աստուծոյ, և զգաւիթս ի հիմանց, մեծաւ յուսով։ Զաշխատակիզ եղբայրս և զեայր Յովանէս զարժանին ամենայն աւրհնութիւնք, զի յաւուրս սոցա կրկին ազատեցան եկեղեցիս մեր յամենայն հարկէ. յիշեցէք ի Քրիստոս»։

Գավթի կառուցմանը մասնակցում են նաև Կյուրիկե թագավորի դուստրեր Մարիամը, Բորինան և Ռուզուդանը և Թամար թագուհու հորաքույր Ռուզուդանը՝ կառուցելով յուրաքանչյուրը գավթի ներսի սյուներից մեկը, ինչպես այդ մասին հիշատակում են ստորև մեջ բերված արձանագրությունները, համապատասխանաբար փորագրված նույն սյուների վրա.

ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ՍՅԱՆ ՎՐԱ

Է) «Ես Մարիամ Թագրատունի, դուստր արքային Կիւրիկէի, մեծաւ յուսով կանգնեցի զսիւնս զայս և ետու զիմ հայրենի սուրբ նշանս մեծածախ պահարանօք ի Սուրբ Աստուածածինս, սկեան արծաթի, և տաւնացուցակ։ Պարտական են Դ. Բառուսունս եղբայրսամամ, և զկնի վախճանի իմոյ զնաւակատիսն աւրն և զվարդեւարն ինձ պատարագել զՔրիստոս մինչ ի կատարած աշխարհի։ Որ խափանէ նզովեալ է յԱստուծոյ և յամենայն սրբոց, ամէն»։

ՀԱՐԱՎ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ՍՅԱՆ ՎՐԱ

Ը) «Ես Բաւրինա, նոյն արքայի դուստր, քոյր Միրիամու կանգնեցի զսիւնս զայս և զիս յիշեցէք ի Քրիստոս»։

ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎՄՏՅԱՆ ՍՅԱՆ ՎՐԱ

Թ) «Ես Ռուսուդան, նմին արքայի դուստր, քոյր Մարիամա, կանգնեցի զսիւնս՝ լինել ինձ սիւն լուսոյ ի կեանս յաւիտենից»։

ՀԱՐԱՎ-ԱՐԵՎՄՏՅԱՆ ՍՅԱՆ ՎՐԱ

Ժ) «Ես Ռուսուդան, հաւրաքոյր Թամարայ, մայր բագուհեացդ զսիւնս կանգնեցաք։ Զմեզ յիշեցէք ի Քրիստոս»։

Հայ ճարտարապետության այդ հետաքրքիր և արժեքավոր հուշարձանը, չնայած կառուցված է գավիթներին հատուկ ձևով, սակայն նրա ներսի հարդարանքը խիստ բնորոշ ու գեղեցիկ է։ Ներսում եղած չորս սյուները և պատերին կից երկուական կիսասյուները միանալով կամարներով, կազմում են թաղակապ ծածկը՝ կենտրոնում հատուկ լուսանցքով՝ երդիկով։ Արևելյան կողմից առանձին պատ չունի, այլ կիսասյուները կից են Ամենափրկիչ եկեղեցու արևմտյան պատին։

Սյուների և կիսասյուների բները ամրողջական քարի հսկա գլաններ են։ Բոլորն էլ ունեն խարիսխներ ու խոյակներ, որոնք նույնպես ամրողջական մեծ քարերից են և զարդարված են վերին աստիճանի նուրբ ձևով մշակված երկրաչափական ձևի շքեղ զարդաքանդակներով։ Առանձնապես գեղեցիկ ու հիասքանչ են սյուների խարիսխների վրա և խոյակներից կախված զանազան ձևի կավե ամանների ու ջրի դավերի ամրողջական քանդակները։

Երկու մուտքերից մեկը բացվում է գեղի հյուսիս, մեծ գավթի մեջ, գեղեցիկ պարակալով, իսկ մյուսը՝ դեպի հարավ, որը շարված-փակված է։ Չնայած նկատելի են բազմաթիվ վերանորոգումների հետքեր, սակայն այդ մասին մատենագրական և վիմագրական տեղեկությունները բացակայում են։ Վերջին

հիմնական վերանորոգումը կատարված է Հուշարձանների պահպանության կոմիտեի կողմից 1939—1940 և 1952—1957 թվերին։

Մեծ գավիթ.— Կոչվում է նաև նախագավիթ և Աստվածածին եկեղեցու գավիթ։ Գտնվում է Աստվածածին եկեղեցու արևմտյան և գավթի հյուսիսային կողմում՝ դրանց կից։ Կառուցել է Զաքարեի վասալ Վաչե իշխանը 1211 թվականին, ինչպես ցույց է տալիս հուշարձանի ներսում, հարավային պատի վրա փորագրված հետևյալ արձանագրությունը.

ԺԱՅ ԻՆ ՈՒ թուին. ես Վաչէ, ծառա Զաքարիսի, որդի Սարգսի, շինեցի զխորանս և ետու զիմ ոսկետուփ Աւետարանն և զսուրբ նշանն և զԳործս՝ մեծ ծախիւ ի Սուրբ Աստուածածինս. առաջնորդէ սուրբ ուխտիս հայր Վարդան, վարդապետ Գրիգոր միաբանիս սահմանեցաք ի տարտչն Սուրբ Գրիգորի շաբաթն և զկիւրակէն եկեղեցիս պատարագ, ի կենդանութեան՝ մեր ծնաւղացն և յետ մահուն՝ մին աւրն ինձ Վաչէի և մինն ամուսնոյ իմ Մամախաթունին։ Որ խստիանէ մեր խղճին տէր է առաջի Աստուծոյ»։

Մեծ գավթի հատակագիծը քառակուսի է, քիչ հարավից-հյուսիս ձգված. ներսում՝ արևելքից դեպի արևմուտք ձգվող երկու շարք երեքական ամբողջական սյուները շենքը բաժանում՝ են երեք հավասար նավերի, որոնց ծածկը թաղակապ է՝ առանձին-առանձին երկթեք տանիքներով։ Կառուցողական այդ ձևը եզակի օրինակ է հայ ճարտարապետության պատմության մեջ, ուստի առանձին հետաքրքրություն է ներկայացնում։ Արևմտյան պատը մասսիվ չէ՝ յուրաքանչյուր նավի ծայրին կա մի-մի կամարակապ լայն բացվածք, որպիսի ձևը նույնպես յուրահատուկ է։ Հատակը պատած է քաղմաթիվ հարթ տապանաքարերով։

Զանգակատուն.— Գտնվում է մեծ գավթի հյուսիսային կողմում, պատի արևմտյան ծայրին, համարյա կից պատին։ Կառուցման ստույգ ժամանակը որոշ չէ. երկրորդ հարկի ներսում գտնվող արձանագրության համաձայն, որը մեջ ենք բերում ստորև, կառուցել է Աբաս Բագրատունու որդի Վաղնը։ Ուսումնասիրողները տարբեր ժամանակներ են սահմանում զանգակատան կառուցման համար, որոնք, մեր կարծիքով, զուրկ են որևէ հիմքից։ Ինչպես հայտնի է, Աբասը ամուսնանալուց հետո ապրել է ընդամենը երկու տարի, հասկանալի է, որ նրա մահանալու ժամանակ իր որդին պետք է լիներ առնվազն մեկ տարեկան։ Եվ որովհետև Աբասը մահացել է 1192 թվականին, ուստի զանգակատան կառուցումը ԺԲ դարի վերջերին ընդունելը, ինչպես այդ անում՝ են՝ ուսումնասի-

ՍԱՆԱՀՆԻ ՎԱՆՔ.— ԳՐԱՏՈՒՆԸ ԵՎ Ս. ԳՐԻԳՈՐ ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՐԱՎ-ԱՐԵՎՄՈՒՏՔԻՑ։



ՍԱՆԱՀՆԻ ՎԱՆՔ.— ԳՐԱՏԱՆ ՆԵՐՍԻ ՄԻ ՈՐՄՆԱՍՅՈՒՆԸ:

բողների մեծ մասը, հավանական չէ։ Ջանգակատունը կառուցելու համար Վաղնը առնվազն պետք է պատանեկան հասակում լիներ։ Դրանից էլ հավանական է դառնում, որ դանգակատունը պետք է կառուցված լինի 1210 թվականից ոչ շուտ։

ԺԲ) «Կամաւ Աստուծոյ ես՝ Հասան, որդի Աբուսավազա աւրհնեցի զեկեղեցիս զանգակատանս, որ չինել էր արեն մեծաւոր Վազն իմ, որդի Աբասա։ Եւ միաբանիս հաստատեցին ամեն եկեղեցիս ինձ պատարագ»։

Փոքր քառակուսի հատակագիծ կազմող հոսհարկ կառուցվածք է, դեպի վերի հարկերը բարձրանում են պատերին կից քարե սանդուղքներով։ Երկրորդ հարկում կա երեք խորան, իսկ երրորդ հարկի պատերը կամարաձև միանալով իրենց վրա են կրում սյունազարդ գմբեթը։ Պատերն արտաքուստ զարդարված են թռչունների բարձրաքանդակներով։ Վերանորոգված է Սարգիս եպիսկոպոսի կողմից 1652 և Սողոմոն Արղությանի կողմից 1815 թվականներին, ինչպես և Հուշարձանների պահպանության կոմիտեի կողմից 1955 թվականին։

Դրատուն կամ նշխարախուց.— *Գտնվում հուշարձանների խմբի հյուսիս-արևելյան անկյունում. կառուցել է Դավիթ Անհողին Թագավորի դուստր Հրանուշ թագուհին 1063 թվականին, ինչպես այդ վկայում է նրա վրա փորագրված արձանագրությունը.*

ԺԳ) «Ի ԵԺԻ բուին հայոց, ի հայրապետութեան տեառն Դիոսկորոսի, ի թագաւորութեան Կիւրիկէի և Սմբատայ, ես՝ Հրանուշ թագուհի, դուստր Դաւթի արքայի, շինեցի զնշխարատունս և զեկեղեցիս, և եռու զնորաշէնն ի Սանահինս վասն իմ մեզաց թողութեան և իմ եղբարցն արեշատութեան Աստ. առաջնորդ որ հաստի ի Սանահինս պարտական է առաջի Աստուծոյ որ իմ եկեղեցիս ժամ ինձ առնէ. և որ զնորաշէնն ի Սանահնէս հանէ, կամ զիմ ժամն խափանէ, ի փառաց Սուրբ Երրորդութեանն և Գ (սուրբ) Ժողովոյն եղովեալ լիցի անլուծանելի»[10]:

(Արձանագրությունը ծածկված լինելու պատճառով մեջ ենք բերում Ջալալյանից)

Այս արձանագրության մեջ բնորոշ է այն, որ բացի նշխարատնից կառուցում է և եկեղեցի։ Գրատան հյուսիսային պատի վրա փորագրված մի այլ արձանագրության մեջ ասում է, որ անորոգեցի եկեղեցիս».

ԺԴ) «Կամաւ Աստուծոյ, ես Թումանի որդի Մանուչարս նորոգեցի եկեղեցիս, իսկ հայրն Աւագիս և միաբանք ուխտիս հաստատեցին Ղազակի պատարագն յիշատակել ինձ և ամուսինն իմ Մարիամ, անիափան. թվ. ԼԾՆ (1656)»:

Այս երկու արձանագրությունների մեջ էլ՝ կառուցման և վերանորոգման, հիշատակած եկեղեցին, մեր կարծիքով, դրատան հարավային կողմում, նրան կից կառուցված սրահն է, որի արևելյան ծայրին հարմարեցված է սեղան՝ պատարագ մատուցելու նպատակով.

Այդ հոյակապ կառուցվածքը իր առանձնահատկություններով եզակի օրինակ է հայկական ճարտարապետության մեջ։ Նրա հատակագիծը ուղիղ քառակուսի է, ներսից. պատերի կենտրոններից ձգվող կիսասյունները միանում են իրար կամարներով, հատելով անկյունները, կազմում են թաղակապ ծածկը, կենտրոնում՝ հատուկ լուսանցքով՝ երդիկով, դավիթների նմանությամբ։ Կիսասյունների բները, խարիսխները ու խոյակները պատած են կողովահյուս, նուրբ մշակված զարդարանդակներով և թռչունների ու սոդունների բարձրաքանդակներով։ Ներսից պատերի մեջ կան բազմաթիվ խորշեր (դա

10 Սարգիս վարդապետ Ջալալյանց, «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան». Մասն Ա, էջ 22։

բակներ) գրքեր և եկեղեցական սպասներ պահելու համար։

Հարավային կողմից ունի սրահ՝ այդ կողմի պատի ամբողջ երկարությամբ—սրահը հարավային կողմից ունի երկու կամարակապ լայն բացվածքներ, որոնք իրարից անջատվում են ամբողջական սյունով։ Արևելյան կողմում կա հատուկ խորշ, ուր ագուցված է գեղաքանդակ մեծ խաչքար, որի առջևում հարդարված է պատարագամատույց սեղան։ Խաչքարն ունի 1161 թվականը կրող հետևյալ արձանագրությունը.

ԺԵ) «Ի ՈԺ թուիս, ի բազաւորութեանս վրաց Գիորգեա կանգնեցաւ Սուրբ Ամենափրկիչս ի բարեխօսութիւն հաւատացելոց»։

Դրատան սրահի ամբողջ հատակը պատած է տապանաքարերով, որոնց մեջ նկատելի է Զաքարև և Իվանե եղբայրների քույր Նրջիսի գերեզմանը՝ համապատասխան տապանագրությամբ։ Դրատունը և կից սրահ-եկեղեցին, վերը նշված արձանագրությունների համաձայն, վերանորոգված են Սարգիս եպիսկոպոսի կողմից 1652 թվականին և Թումանի որդի Մանուչարի կողմից 1656 թվականին, վերջին անգամ՝ Հուշարձանների պահպանության կոմիտեի կողմից։

Ս. Գրիգոր եկեղեցի.— *Գտնվում է դրատան հարավային կողմում, սրահին կից և Աստվածածին եկեղեցու արևելյան կողմում։ Կառուցման ճիշտ ժամանակը և կառուցողները հայտնի չեն. նրա՝ արտաքուստ կլոր, ներսից խաչաձև՝ կիսակլոր իաչթևերով հատակագիծը, պատերի արտաքին հարդարանքները, որոնք զույգ գլանաձև որմնասյուներ են, միացած որմնակամարներով ու կամարաձև գագաթ ունեցող խորշերը հիշեցնում են հնագույն կառուցվածքները, ուստի պետք է ենթադրել, որ նա վանքի ամենահին կառուցվածքներից է և պետք է գոյություն ունեցած լինի մինչև Ժ դարը, այսինքն՝ մինչև Աստվածածին եկեղեցու՝ Հունաստանից փախած կրոնավորների կողմից կառուցվելը։*

1652 թվականին կատարված վերանորոգման ժամանակ զգալի փոփոխության է ենթարկվել հուշարձանը, քանդված են պատերի վերի մասերը, վերականգնված է պատերի երեսապատ քարերի մեծ մասը, ամբողջապես վերակառուցված են գմբեթը և ծածկը։

Դամբարան Կյուրիկե Ա և իր որդի Դավիթ Անհողին թագավորների.— *Գտնվում է Աստվածածին եկեղեցու արևելյան պատին կից. պահպանվել է միայն Կյուրիկե-Գուրգեն թագավորի գագազաձև գերեզմանաքարը, հետևյալ անթվակիր արձանագրությամբ.*

ԺԶ) «Այս է հանգիստ Գորգենա Թագաւորունո շահանշահի, որդի Աշոտոյ Ողորմածի»։

Այս գերեզմանների վրա Սանահնի առաջնորդ Տեր Հովհաննեսը 1225 թվականին կառուցում է մատուռ, ինչպես այդ երևում է ստորև մեջ բերված արձանագրությունից սակայն վանքի առաջնորդ Հարություն եպիսկոպոս Բարսեղյանը 1832 թվականին քանդել է տալիս այդ մատուռը և քարն օգտագործում վանքի մյուս շենքերի վերանորոգման համար։ Դեռ մինչև այսօր էլ Ս. Աստվածածին եկեղեցու արևելյան պատի վրա պահպանվել են մատուռի պատերի ու ծածկի թաղի կրաշաղախ հետքերը։

ԺԷ) «Ի թվի ՈՀԴ։ Ես Տէր Յովհաննէս առաջնորդ Սանահնիս, Քվեռորդի պատռոնացն շինեցի զմատուռս. որ հանգչէ սմա զիս զյաղաւրս յիշեցէք»։

Մագիստրոսի ճեմարան.— *Գտնվում է Ամենափրկիչ և Աստվածածին եկեղեցիների արանքում, վերջնիս հարավային պատի ամբողջ երկարությամբ։ Դա առանձնակի և հատուկ նպատակներով կառուցված շենք չի, ուստի նրա մասին բացակայում են մատենագրական և վիմագրական տեղեկությունները։ Վանքի միաբանության կողմից կոչվել է Մագիստրոսի ճեմարան, որը հավանական է դարձնում, որ նա եղած լինի վանքի հոգևոր բարձրագույն դպրոցը։ Եվ որովհետև վանքի ընդարձակման ու զարգացման շրջանը համընկնում է Ժ—ԺԱ դարերի ժամանակաշրջանին, որի ընթացքում հիմնադրվում է նաև վանքի հոգևոր բարձրագույն դպրոցը, ուստի միանգամայն հավանական է, որ դա կառուցված լինի ԺԱ դարի առաջին կեսում։*

Մագիստրոսի ճեմարանը իրենից ներկայացնում է երկարավուն, նեղ մի սրահ, առանց հիմնական պատերի։ Ամենափրկիչ և Ս. Աստվածածին եկեղեցիների պատերին կից որմնասյուները միանում են որմնակամարներով ու ծածկի թաղը գոտկող կամարներով։ Երկու ծայրերից էլ ամբողջական կամարաձև բացվածքներ են։ Արևելյան բացվածքում կանգնեցված են երեք խաչքարեր, որոնցից հյուսիսայինը պատկանում է Դավիթ զորավարի որդի Գորգին, իսկ հարավայինը՝ Ֆ. Սարգսին, համապատասխան տապանագրերով ու 1602 և 1606 թվականներով՝ հետևյալ ձևով.

ԺԸ) «Սուրբ խաչս բարեխաւս պարոն Գորգա, որդի Դաւթի զաւրավարին. թվ. ՌԾԱ»։

ԺԹ) «Սուրբ նշան տէրունական Տէր Սարգսին լեր քաւարան։ Թվ. ՌԾԵ»։

Ամբողջ հատակը պատած է գերեզմանաքարերով, որից երևում է, թե կից մեծ գավիթը կառուցելու հետևանքով ծառայել է նաև որպես դամբանատուն։

(Շարունակելի)



Հ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

ԱՌՈԳԱՆՈՒԹՅՈՒՆ

Առոգանությունը հին շրջանի քերականների աշխատություններում չի մտել կետադրության ընդհանուր հասկացության մեջ, այլ կազմել է առանձին բաժին և լուրջ ուշադրության առարկա է եղել։

Առոգանությունը հնում համարվել է խոսքի զարդը, նրա արվեստը, որի միջոցով խոսողը կամ գրողը երանգավորել և կարգավորել է խոսքը։ Հույզը, կոչը, բառային շեշտը, հարցումը, ձայնի բարձրացումն ու իջեցումը, որոնք արտահայտվում են զանազան նշանների միջոցով, նպաստում են գրավոր խոսքին՝ նրան տալով շունչ ու կենդանություն։

Ելնելով հայ քերականների և մատենագրության մեզ հասած հարուստ ժառանգության տվյալներից, այլ կերպ ասած՝ գրավոր լեզվի տվյալներից, պետք է ասել, որ առոգանությունը, երբ ոչ բոլորովին հունականի հասկացողությամբ և ծավալով, այնուամենայնիվ հայ գրավոր լեզվի մեջ ունեցել է իր ուրույն դերն ու նշանակությունը, որը կտեսնենք առոգանության առանձին նշանները շարադրելիս։

Առոգանությունը լայն առումով հասկացվել է բառերն ուղիղ արտաբերելու, ձայնավորները և ձայնավորների ու բաղաձայնների տարբեր միացությունները ճիշտ կարդալու, ձայնը բարձրացնելու, դածրացնելու, երկարացնելու, բառերը շեշտելու կանոնները։

Ականավոր հայագետ Հ. Ա. Այտընյանը իր «Քննական քերականություն հայոց լեզվի» աշխատության մեջ առոգանությունը նույնպես արվեստ է համարում։ «Առոգանության արվեստը,— գրում է Հ. Ա. Այտընյանը,— միայն ձայնավոր դրերու վրա կհածի և նշաններո միայն ձայնավորաց վրա կդովին»[1]։

Գրաբարի շրջանում առոգանության խմբի մեջ դասվել է կետադրական 10 նշան՝ շեշտ, բութ, պարույկ, երկար, սուղ, թավ, սոսկ, ապաթարց, ենթամնա և ստորատ[2]։

Շեշտ.— Շեշտը հայ գրավոր խոսքի մեջ գործածվել է գրերի գյուտի սկզբնական որերից սկսած։ Շեշտը որպես առոգանության նշան, առաջին անգամ հիշատակվում է Դիոնիսիոս Թրակացու հայ մեկնիչների քերականական աշխատություններում, սկսած Ե դարից, մինչդեռ մեզ ծանոթ այլ լեզուներում նրա գործածությունն սկսվում է ԺԴ դարից։

Հայոց լեզվի առանձնահատկությունն այն է, որ բառային շեշտն ունի հաստատուն բնույթ։ Ինչպես արդի լեզվում, այնպես էլ գրաբարի շրջանում շեշտը միշտ դրվել ու դրվում է բառի վերջին վանկի ձայնավոր տառի վրա։ Միայն վաղ անցյալում, նախագրաբարյան շրջանում «Հայերենի շեշտը եղել է բառերի նախավերջին վանկի վրա»[3]։

Հետագայում, շեշտի ազդեցությամբ, բառերի վերջին մասնիկները դուրս են ընկել և շեշտը մնացել է վերջին վանկի ձայնավորի վրա։ Այս կարգը հաստատուն ձև է ընդունել և շարունակվել է մինչև մեր օրերը։

---

1 Հ. Ա. Այտընյան, «Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի», Վիեննա, 1866 թ., էջ 362։

2 Առոգանության նշանները արվում են առանձին տախտակներով (տե՛ս էջ 56 և 57)։

3 Մ. Աբեղյան, «Հայոց լեզվի տեսություն», Երևան, 1931 թ., էջ 108—109։

Կենդանի լեզվի մեջ խոսողը կամ գրողը աշխատում է բառերից մեկը կամ մի քանիսն ավելի ուժեղ արտաբերել, նրանով կամ նրանցով շեշտել հիմնականը, իր համար կարևոր համարվողը։ Ամեն բառ լեզվում, իհարկե, շեշտ ունի, սակայն խոսքի մեջ, բառերի կապակցության ընդհանուր սիստեմում, բոլոր բառերը չեն կարող շեշտվել։ Ահա թե ինչու մեր լեզվում շեշտը գործածվում է հրամայական բայերի, կոչական բառերի, նախադասության մեջ տրամաբանական շեշտ ընդունող և ժխտող ու բացասող բառերի վրա։ Շեշտը գործածվում է այն ժամանակ, երբ խոսողն իր խոսակցին կամ նրա միջոցով մեկ ուրիշին մի բան է հրամայում, կարգադրում, ցանկանում, խրախուսում, հորդորում, արգելում և այլն։ Երբ խոսողը կամ գրողը գործածում է կոչական բառեր, թվարկում է նախադասության առանձին անդամներ կամ ցանկանում է հատկապես նշել նախադասության մեջ կարևոր դեր խաղացող բառը կամ բառերից մի քանիսը, որոնց վրա լսողի կամ ընթերցողի ուշադրությունը անհրաժեշտ է կենտրոնացնել, այս բոլոր դեպքերում նշված բառերը պետք է արտասանվեն ձայնի բարձրացումով, որպեսզի ցույց տան գրողի կամ խոսողի մտքի համապատասխան իմաստը։ Ահա այս նպատակի համար էլ զրավոր խոսքի մեջ գործածվել ու այժմ էլ գործածվում է վերևից ներքև, աջից դեպի ձախ շեղակի մի փոքրիկ գծիկ, որը կոչվում է շեշտ (՛)։ Շեշտը, նայած պատմական շրջանին, ունեցել է տարբեր ձև ու չափ։ Հին գրչագրերում այն երբեմն գործածվել է որպես ալիքաձև (՞) գիծ, մերթ երկար շեղությամբ դեպի ցած բացվող գիծ, իսկ հետագայում նա ընդունել է կարճ, սուր գծիկի ձև (՛) և նմանվել այսօրվա գործածական շեշտին։

Շեշտի մասին խոսելիս քերականներից մեկը գրում է. «Զի յորժամ ձայնն ի վեր տանիս և կտրես, նա շեշտին պիտոյանայ դնիլ, որ է ոյժ» (Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 2371, թ. 12ա)։

Քերական Մովսես Քերթողը շեշտը համարում է վերացման ձայն, իսկ Ստեփանոս Սյունեցին՝ սուր։

Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի գրչագրերից մեկում շեշտեր են դրված բայերի վրա. այսպես, օրինակ, բո՛ղ, ա՛ծ. բե՛ր, կոփեա՛, գրեա՛, կոփե՛մ, գրեցի՛, գնացեա՛լ, գրեսցե՛ս, վարե՛մ, գանի՛մ և այլն (տե՛ս ձեռագիր № 2373, թ. 99բ, 100ա և 129ա)։

Հին գրչագրերում շեշտը դրվել է ձայնարկության պաշտոն կատարող ո տառի վրա, այն ով կարդալու համար։ Օրինակ՝ ո՛ դու եղբայր (որ պետք է կարդալ՝ ո՛վ դու եղբայր). ո՛ մարդ (որ պետք է կարդալ ո՛վ մարդ) և այլն[4]։

Հ. Մ. Ջամչյանը կոչականների վրա դրվող ո և ով մասնիկներն անվանում է կոչականակերտ և առաջարկում է սրանց վրա դնել շեշտ. օրինակ՝ «Նմանող եղերուք՝ ո՛ հովիւք. առաջին հովուացն արդարոց»—ՄՇՌ։ Հ. Մ. Ջամչյանից բերած այս փաստը հաստատում է պրոֆ. Ա. Աբրահամյանի այդ մասին հայտնած կարծիքը։

Համամ Արևելցին քերականության վերաբերյալ գրած իր աշխատության մեջ շեշտ է դնում կրկնվող և ժխտական իմաստ ունեցող ոչ արգելական մասնիկի վրա.

«Ո՛չ շունք, ո՛չ գողք» (Ադոնց, «Արուեստ Դիոնիսեայ քերականի և հայ մեկնութիւնք նորին», Պետրոգրադ, 1915 թ., էջ 254)։

Շեշտ է դրվել նաև թվարկություն ցույց տվող բառերի վրա, անկախ նրանից, թե խոսքի ի՛նչ մաս են եղել դրանք. օրինակ՝ «Բայց դարձեալ տարակուսելի, թե ընդէ՞ր զուղղականն ի հոլովսն դասեաց։ Վասն որոյ ասեմք նշանակութիւնք են անուան. Գ. հանրակա՛ն հասարակակա՛ն և յատկակա՛ն» (Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռագիր № 2373, թ. 87ա)։

Բուր.— Բութ նշանը թե՛ իր ձևով, թե՛ իր նախնական ու հետագա տրոհական ֆունկցիայով հանդես է գալիս որպես զուտ հայկական կետադրական նշան։ Կետադրական նման նշան աշխարհի, մեզ հայտնի, որևէ լեզվում չի գործածվել և այժմ էլ չի գործածվում։

Բութը հին քերականների աշխատություններում բոլորովին այլ կերպ է մեկնաբանվել և չի համապատասխանում նրա հետագա գործածությանը։ Առաջին հայ քերականների (Ե—Թ դարեր) ինչպես և հետագա քերականների մոտ բութը որպես կետադրական նշան դասվել է առոգանության խմբի մեջ և դրվել է այն տառերի վրա, որոնք սուր կամ շեշտված չեն արտասանվել, այլ՝ հարթ։ Քերական Մովսես Քերթողն այդ մասին իր «Մեկնութիւն քերականի» աշխատության մեջ գրում է. «բութ, հարթ, որ ոչ ի վեր եւ ոչ ի վայր» (Ադոնց, նույնը, էջ 178)։

Հին շրջանի քերականներից բութի մասին բավական մանրամասնորեն խոսում է քերական Ստեփանոս Սյունեցին (Ը դար)։ Նա գրում է. «Իսկ ասելն եթէ ըստ հարթութեան բութիւն, այսինքն, որ հարթ ձայնքն են եւ ոչ

---

[4] Տե՛ս Ա. Աբրահամյան, «Հայկական պալեոգրաֆիա», Երևան, 1948 թ., էջ 84։

[5] Հ. Մ. Ջամչյան, «Քերականութիւն հայկազեան լեզուիս», Մոսկվա, 1959 թ., էջ 242։

ԵՂԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ ԳՐՉԱԳՐԵՐՈՒՄ

ՀԵՏԻ ԱՆՈՒՆԸ	ՀԵՏԻ ՁԵՎԸ	ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ
Վերջակետ (կետ ավարտական)	: =	Ը դար
		Ծ դար
Միջակետ (կետ միջակ)	.	Թ դար
Ստորակետ	,	Թ դար
	;	Ծ դար

ԿՐԿՆԱԿԵՏ ՎԵՐՋԱԿԵՏԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԿԵՏԵՐԻ ՈՒ ՆՇԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ Ի ԴԱՐԻՑ ՀԵՏՈ



յորդք եւ սուրբ, այն բուիր ասին։ Ու լինի հարի եւ բուի ձայն (Ադոնց, նույնը, էջ 195)։

Քերական Այուենցին շեշտ ունեցող ձայները համարել է հորդ և սուր, այսինքն՝ ուժգնություն ունեցող շեշտյալ և հարցական ունեցող երկարացվող ձայներ, իսկ դրանցից զուրկ, սովորական ձայնով արտասանվող ձայները՝ բուի կամ հարի։ Բուիը դրվել է չշեշտված, հարցում չպարունակող և հարի արտասանվող բառերի վրա։

Մեկ հասած ամենահնագույն ձեռագրերում չենք հանդիպում բուի նշանի գործածությանը, բացի քերականական գրքերում եղած հիշատակություններից, մասամբ էլ գործածությունից։

Հայոց լեզվի աստիճանական զարդացման ու կատարելագործման և քերականական հարցերի կարգավորման հետևանքով հետագայում բուիը որպես անշեշտ բառերի վրա գործածվող նշան կորցնում է իր նախնական իմաստը, ձեռք է բերում բոլորովին նոր իմաստ և լեզվի մեջ սկսում է գործածվել որպես տրոհության նշան։

Հին գրչագրերում բուիը դրվել է գասական թվականների և նախ. արդ. բառերի վրա՝ հաջորդ նախադասություններից և բառակապակցություններից, բացահայտյալի վրա՝ բացահայտիչից, հեղինակի խոսքի վերջում ուղղակի խոսքը հեղինակի խոսքից, բարդ ստորադասական նախադասության մեջ գլխավոր նախադասության վերջում՝ երկրորդական նախադասությունը գլխավորից զատելու համար։ Հին գրչագրերում հանդիպում ենք որոշ դեպքերի, երբ բուիը դրվել է ոչ թե բառի վերջին տառի վերևը, այլ նախավերջին տառի դլխին. օրինակ՝ «Ուրացյակա՛ն։ Յաղեալ եմք ողջակիզան ձերովբ։ Հեգնակա՛ն։ Ահա Ադամ եղև իբրեւ զմի ի մէնջ։ Դասակա՛ն։ Յառաջագոյն բնակեսցեն յարեւելից կուսէ ցՀնդն Դանա» (Հայկական ԱԱՌ Պետական մատենադարանի ձեռագիր N 2329, թ. 77բ, 78ա)։

Պարույկ (հարցական նշան).— Լեզվի մեջ չիմացածն իմանալու կամ անստույգ իմացածն ավելի պարզորոշ ու հաստատուն դարձնելու համար հարկ է լինում հարցում կատարել։ Այս անհրաժեշտությունը խոսքի մեջ առաջ է բերում հարցական նախադասության պահանջը։ Խոսողը կամ խոսակիցը փոխադարձ հարցումներով իրենց համար պարզում են անհայտն ու անորոշը կամ ոչ ստույգը։ Զարդացման իր ճանապարհին, սակայն, հարցական նախադասությունը դուրս է գալիս իր նեղ շրջանակներից և ձեռք է բերում նաև ոճական նշանակություն։ Հարցման միջոցով խոսողը կամ խոսակիցը արտահայտում է զայրույթ, կշտամբանք, ժխտում, արգելում, սպառնալիք։ Գրավոր խոսքի մեջ հարցումը տեղի է ունենում առանձին կետադրական նշանի միջոցով, որը կոչվում է հարցական նշան (՞)։

Մեզ ծանոթ բոլոր լեզուներում հարցական նշանի գործածությունը թե՛ իր ձևով, և թե՛ իր տեղով միատեսակ չէ։ Հարցական նշանը հայերենում թե՛ իր վաղ գործածությամբ, և թե՛ իր ձևի ու արտահայտչականության տեսակետից միանգամայն տարբերվում է աշխարհի մեջ ծանոթ լեզուներից և կազմում է բացառություն։

Եվրոպական բոլոր լեզուներում հարցական նշանը գրավոր խոսքի մեջ իր գործածությամբ չի համընկնում բանավոր (կենդանի) խոսքի հետ՝ գրվելով նախադասության վերջում։

Հայերենում հարցական նշանը դրվում է հարցում պահանջող բառի շեշտվող վանկի վրա, մի բան, որը լիովին համապատասխանում է բանավոր խոսքի ոգուն։ Հարցական նշանը հայ անցյալի քերականների մոտ կոչվել է պարույկ և դասվել առոգանության նշանների շարքը։

Դիոնիսիոս Թրակացու քերականության հայ մեկնիչները (Դավիթ քերական, Անանուն մեկնիչ, Ստեփանոս Սյունեցի, Համամ Արևելցի և հետագա այլ քերականներ) թեև խոսում են պարույկի մասին, սակայն դժվար է ասել՝ այն մատենագրության ու պաշտոնական այլ դրությունների մեջ երբևէ գործածվե՞լ է, թե՞ ոչ։

Հ. Հակոբոս Տաշյանն իր «Ակնարկ մը հայ հնագրության վրա»[6] և պրոֆ. Ա. Աբրահամյանն իր «Համառոտ ուրվագիծ հայկական պալեոգրաֆիայի»[7] աշխատությունների մեջ այն կարծիքն են հայտնում, որ հարցական նշանը ուշ շրջանի ծագում ունի, բայց թե ո՛ր դարից է մուտք գործել հայ քերականական գրականության և մատենագրության մեջ, որոշակի ոչինչ չեն ասում։ Հ. Տաշյանն իր հիշյալ աշխատության մեջ գրում է. «Զարմանք է նույնպես, որ մեր արդի հարցական նշանին (՞) չհանդիպեցանք հիշյալ բաղմաթիվ ճշգրտապատկերներուն մեջ, այս անգամ նաև ԺԴ, ԺԵ դարերուն։ Անշուշտ ըսել չէ ասիկա, թէ ավելի նորագույն է ծագմամբ քան մյուսները»։

Հարցական նշանի մուտքը եվրոպական և ռուսական կետադրության մեջ նույնպես համարում են ուշ շրջանի, մոտավորապես ԺԶ—ԺԷ դարերի նորամուծություն։

Հարցական նշանը հայ գրավոր խոսքում ունի շատ վաղ գործածություն։ Երբ համեմատում ենք Ն. Աղոնցի կողմից մեջ բերված հույն քերականի և հայ մեկնիչների տեքստերը, նկատում ենք, որ հունական բնագրում «ի՞ առանձնանայ կէտ ի ստորակիտէ. ամանակաւ. զի ի կիտէն կարի յոյժ մեծ է բացատն, իսկ ի ստորակիտէն ամենեւին նուազ» նախադասության վերջին բառի վերջին տառի վրա դրված է հարցական նշան և այն էլ ալիքաձև գծի ձևով (Ն. Ադոնց, նույնը, «Յաղագս կիտի», էջ 3)։

ԿԵՏԱԳՐԱԿԱՆ ԱՅԼ ՆՇԱՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԳՐՉԱԳՐԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԵԼ ԵՆ, ՍԱԿԱՅՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՉԵՆ ՀԻՇԱՏԱԿՎԱԾ

ԿԵՏԻ ԱՆՈՒՆԸ	ԿԵՏԻ ՁԵՎԸ	ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ
Չակերտ	՟՟ ՝ Տ	Թ դար
Պատիվ	— — —	Թ դար
Պատիվ և երկար միասին	⌐	Թ դար
Լերկ	∞	ԺԲ դար
Մակաղկետ	՝ — /	Ժ դար
Սղագրական նշաններ	Ɔ Տ Ս Օ	Ժ դարից հետո
Սղագրական նշաններ	/ // : ⁝	Ժ դարից հետո
Գծիկ	—	ԺԳ դար
Վերնագրերի կետադրությունը ա)	ʒ ʒ	Ժ դարից հետո
բ)	~	
գ)	ſſſ–ſſſ–ſſſ–	
դ)	. . .	

ԱՌՈԳԱՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ ԳՐՉԱԳՐԵՐՈՒՄ

ԿԵՏԻ ԱՆՈՒՆԸ	ԿԵՏԻ ՁԵՎԸ	ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ
Շեշտ	/ /	Թ դար
Բութ	՝ ᒪ ՝	Թ դար
Պարույկ (Հարցական)	՝ ՝	ԺԱ դար
Երկար (դասական շեշտական)	~	ԺԱ դար
Սուղ	Ս Օ	ԺԲ դար
Թավ	⌐ ⌐	ԺԱ դար
Սոսկ	⌐ ⌐	ԺԱ դար
Սպասարկ	՝	ԺԳ դար
Շնթամնա	ᴗ —	ԺԲ դար
Ստորատ	՝	ԺԳ դար

Հայ մեկնիչների տեքստերում հարցական նշանը դրված է հարցում պահանջող բառի վերջին վանկի վրա, վերը նշված ձևով (՞)։ Նշանակում է, հայ քերականները այս նշանը չեն ընդօրինակել հունարենից։ Պարսկերեն լեզուն չունի նման հարցական նշան, այդ ձևի նշան չի նկատվում նաև ասորական ու արամեական ձեռագրերում։ Ուստի հարցական նշանը իր ձևով, գործածության իմաստով ու նշանակությամբ, ինչպես որ կա հայերենում, պետք է համա-

6 Հ. Հ. Տաշյան, «Ակնարկ մը հայ հնագրության վրա», Վիեննա, 1898 թ., էջ 163։

7 Ա. Աբրահամյան, «Համառոտ ուրվագիծ հայկական պալեոգրաֆիայի», Երևան 1940 թ., էջ 55։

րել միանգամայն ինքնուրույն մտահղացում։

Մեզ հասած ամենահնագույն ձեռագրում՝ Լազարյան Ճեմարանի Ավետարանում (գրված 887 թվին Վանանգում), և Էջմիածնի Ավետարանում (գրված 989 թվին) չենք հանդիպում հարցական նշանի գործածությանը։

Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № № 288 (1099 թ.), 1007 (ԺԱ—ԺԲ դարեր), 1590 (1172 թ.), 1325, 1281, 2371 և 2373 (ԺԳ դար) և հետագա այլ ձեռագրերում արդեն հանդիպում ենք հարցական նշանի որոշակի գործածությանը, որը բոլորովին համանման է այսօրվա հարցական նշանին թե՛ իր ձևով, և թե՛ իր գործածության տեղով։

Հարցական նշանը գրարարի շրջանում գործածվել է հարցում պահանջող նախադասություններում՝ անհայտն ու անստույգը պարզելու համար։ Հետագայում ընդլայնվում են նրա գործածության սահմանները և, հարցական նշանը գործածվում է նաև զարմանք, կշտամբանք, հեղնանք, ժխտում և այլ իմաստներ արտահայտող նախադասություններում։

Սակայն պետք է ասել, որ գրարարի շրջանում, ինչպես մյուս կետադրական նշանների գործածությունը, այնպես էլ հարցական նշանի գործածությունը այնքան էլ մեծ ծավալում չի ստանում հայ պետականության բացակայության և միասնական պահանջ չլինելու պատճառով։

Երկար (բացականչական նշան).— Երկարը կամ բացականչական նշանը առոգանության համակարգի մեջ համարվում է կարևոր կետերից մեկը։ Այս նշանով մարդն իր հույզերն ու զգացմունքներն է արտահայտում։

Ինչպես հայերենի հարցական, այնպես էլ բացականչական նշանը իր գործածությամբ տարբերվում է մյուս լեզուներից և կազմում է առանձին բացառություն։ Զարմանք, տարակուսանք ու կշտամբանք, վիշտ, հիացմունք, ցանկություն և այլ զգացմունքներ մարդն արտահայտում է նախադասության մեջ առանձին բառերով։ Այս զգացմունքներն արտահայտող բառերի վրա հայերենում դրվում է հորիզոնական դիրքով ալիքաձև մի նշան, որը կոչվում է Երկար կամ բացականչական նշան (՞)։

Ե՞րբ է սկսվել հայ գրավոր խոսքի մեջ Երկարի գործածությունը։

Հայ գրավոր խոսքի մեջ երկարը (բացականչական նշանը) որպես առոգանության խմբին պատկանող նշան, առաջին անգամ հիշատակվում է Ե և հետագա դարերի քերականական աշխատություններում։ Սակայն բացականչական նշանի փաստական գործածությունը հայերեն գրավոր խոսքի մեջ սկսվում է ԺԱ դարից և շարունակվում մինչև մեր օրերը։ Գրեթե ամբողջ գրաբարի շրջանում այս նշանի գործածությունը եղել է անկայուն թե՛ ձևի, և թե՛ գործածության տեղի տեսակետից։

Վ. Կլասսովսկին իր «Կետադրական նշանները հինգ կարևոր լեզուներում» աշխատության մեջ այն միտքն է հայտնում, որ բացականչական նշանը և չակերտները գրավոր խոսքի մեջ մտել են համեմատաբար ավելի ուշ շրջանում՝ ԺԷ դարի վերջին[8]։

Հ. Տաշյանն իր «Ակնարկ մը հայ հնագրության վրա» աշխատության մեջ, անդրադառնալով այդ հարցին, գրում է. «Բացի պատիվ նշանեն նաև այն երկար նշանը (՞), զոր մենք այժմ իրև զարմացական նշան կգործածենք, իսկ հինք՝ գոնե ոմանք՝ երբեմն դեղծելու չափ կհաճախեն գրեթե ամեն բառավերջքի վրա գծելով (որուն տեղը կբռնե հաճախ նաև շեշտը, տե՛ս տախտակ Բ 8 և այլուր հաճախ)»[9]։

Եվ իրոք, հին ձեռագրերում բացականչական նշանն ունի անորոշ գործածություն. նա մերթ շեշտի տեղ է գործածվում, մերթ երկարի տեղ, դրվելով դրեթե բոլոր բառերի վրա։ Երկար նշանի մասին առաջին տեղեկությունը մենք կարդում ենք հայ քերականների աշխատություններում։

Լազարյան Ճեմարանի և Էջմիածնի փղոսկրակազմ ավետարաններում (Ը—Ժ դարեր) երկարը որպես կետադրական նշան չի գործածվել, չնայած նրան, որ քերականները դրա մասին հիշատակում են դեռևս Ե դարից։

Բացականչական նշանի գործածությանը մենք հանդիպում ենք ԺԱ և հետագա դարերի գրչագրերում։ Հետաղա շրջանի քերականների մոտ նույնությամբ կրկնվում է վաղ անցյալի քերականների այս սահմանումն իր ստորաբաժանումներով. օրինակ՝ «Առոդանութիւնք են տասն. շեշտ, բութ, պարոյկ, երկար, սուղ, թաւ, սոսկ, ապաթարց, ենթամնայ, ստորատ։ Առոդանութիւնք սեռականք են Գ. ոլորա՛կ, ամանա՛կ, հագա՛գ։ Եւ ի սոցանէ ոլորակք են Գ. շեշտ, բութ, պարոյկ։ Ամանակք Բ. երկար, սուղ։ Հաղագ Բ. թաւ, սոսկ։ Կիրք Գ. ապաթարց, ենթամնայ, ստորատ» (Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 2373, թ. 15բ, 16ա)։

Երկարի որոշակի գործածության հանդիպում ենք № № 3784 (1057 թ.), 288 (1099 թ.) և հետագա այլ ձեռագրերում։ Բացականչական նշանը այս ձեռագրերում գործածվել է

8 Վ. Կլասսովսկի. «Կետադրական նշանները հինգ կարևոր լեզուներում», էջ 4 (ռուսերեն)։

9 Հ. Հ. Տաշյան, նույն տեղում, էջ 158—159։

վայ, երանի բառերի վրա, որոնք ըստ խոսքի մասերի արդեն անվիճելիորեն ձայնարկություններ են։ Իմաստով էլ տարբեր են այս և ուրիշ ձեռագրերում գործածված բացականչականները. նրանք մի դեպքում ցանկություն, մի այլ դեպքում կշտամբանք ու հեգնանք, երրորդ դեպքում խորհուրդ են արտահայտում։

№ 199 ձեռագրում (1271 թ.) երկարը մեծ մասամբ գործածվել է շեշտի փոխարեն (գտցե՛ս, աւանդե՛ս, առակեսցե՛ս, քննեսցե՛ս, ամրացուսցէ՛, խոտորեա՛, չարի՛ս, երազո՛ւնք, ղի ոչ կլցո՛ւք)։ «Ոչ զդոյշ լե՛ր» բառակապակցության մեջ «զդոյշ լեր»-ի վրա գրված նշանն իր իմաստով որքան որ մոտ է շեշտին, այնքան էլ հնարավոր է երկար համարել այն։

№ 2373 ձեռագրում երկար է գործածվել նաև անձնանունների վրա (Երակլէ՛ս)։

№ 2329 ձեռագրում, սակայն, երկարը գործածվել է այնպիսի բառերի վրա, որոնք արտահայտում են կոչ, խրախուսանք։ Այսպիսի նախադասությունները քերականը համարում է հորդորական։

Երկար նշանի տարորոշված գործածության հանդիպում ենք Կեչառեցու տաղերում (1294—1295 թ.)։ Այս ոտանավորը, որ մեջ ենք բերել, ուշադրավ է աշխարհաբարին մոտենալու իմաստով. նրա լեզուն պարզ է, իսկ կետադրությունը՝ որոշակի։ Ահա այն.

«Ա՛յ գեղեցիկ աչեր ծովային,
Այս աւր շիջար ի տեսանելոյ։
Ա՛յ գերագով գլուխ գանգրահեր,
Խոնարհեցար իրր զմեռելոյ։
Ա՛յ ոսկեթել մօրուս վարդագոյն,
Դու ներկեցար արեամբ յորգանոյ։
Ա՛յ հրաշագործ բերան բերկրալի,
Դու լռեցեր այժմ ի խաւսելոյ»։

(Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյան, «Խաղրակեանք կամ Պռոշեանք», Երուսաղեմ, 1944 թ., Բ մաս, էջ 42)։

Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 2380 ձեռագրում երկար (բացականչական) նշան է դրված դասական թվականների վրա, որ բոլորովին անտեղի է. օրինակ՝ չորի՛ր, հինգերի՛ր և այլն։ Նախորդ օրինակներից տեսանք, որ դասական թվականների վրա, եթե ղրանք թվարկություն են ցույց տալիս, մյուս քերականներն ու գրիչները ղրել են միայն բութ կամ ստորակետ։ Եթե անգամ ընդունենք, որ այդ նշանն իր իմաստով շեշտ է և ոչ թե բացականչական նշան, ապա դարձյալ միտք չունի, ուրեմն անհատ գրչի առանձին կամայականության կամ անգիտության հետևանք է, իսկ սա միանգամայն բնորոշ է գրաբարի շրջանին։

№ 7651 ձեռագրում կան բավական թվով նախադասություններ, որոնց մեջ ձայնարկությունների վրա դրված է բացականչական նշան, բայց հակառակ սրան կան և խախտման դեպքեր, երբ հեղինակը երկար նշան է դնում լցցի՛, բարկացա՛ւ, ասէ՛ բայերի և վաղվաղակի՛, զո՛ւր մակբայների վրա։ Կան նաև այնպիսի դեպքեր, երբ ձայնարկությունների վրա բացականչական նշան չեն գործածում. օրինակ՝

«Որպէս և ես վաբանէի՝ աւաղ թէ ընդ վայր ջանս իմ լինի» (Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 1418 ձեռագիրը, 1179 թ.)։

Առոգանության մյուս նշանների համեմատությամբ գրաբարի շրջանում երկարի գործածությունն ամենից անկայունն է եղել։

Սուղ.— Սուղը փոքր o-ի կամ վերևից բերանը բաց կորագծի նման մի նշան է եղել։

Սուղը, ըստ հին քերականների, երկարի հետ միասին մտել է ամանակ ենթախմբում և, դրվելով վանկի վրա, ցույց է տվել, որ վանկը սովորականից ավելի կարճ տևողություն ունի, ուստի կարդալիս այն պետք չէ երկարացնել, այլ կարճ արտասանել։

Վաղ շրջանի քերական Մովսես Քերթողը սուղը սահմանում է այս կերպ. «սուղ, որ սակաւիկ մի դադարումն առնուս»[16]։ Սուղ նշանի մեկնությունը հին քերականների մոտ սրանից այն կողմ չի անցնում։ Նրանք որոշակի չեն գրում, թե որտե՛ղ և ինչպե՛ս պետք է գործածել այդ նշանը, մանավանդ, որ օրինակներ չեն նշում, որպեսզի, կարդալով ղրանք, մենք այսօր որոշ եզրակացություններ հանգենք։ Դրությունը այնքան էլ մխիթարական չէ նաև հետագա շրջանում։ Հետագա քերականներեռ սուղ նշանի հարցին անդրադարձել են Հ. Մ. Ջամչյանը, Հ. Գ. Ավետիքյանը, Հ. Ա. Այտընյանը և ուրիշներ։

Հ. Մ. Ջամչյանը սուղի մասին խոսելիս նշում է, որ այդ նշանը գլխավորապես գործածվել է երաժշտության մեջ որպես նոտագրական նշան (խազագրություն) և ավելացնում է. «թէպէտ և հին գրիչք ոմանք դնէին և ի վերայ երկբարբառիս ու»[17]։

Հարցին նույն ձևով հարևանցիորեն է մոտենում նաև Հ. Գ. Ավետիքյանը։ Կրկնելով հների ընդունած տեսակետը, որ երկարն ու սուղը մտնում են ամանակ հասկացողության մեջ և ցույց են տալիս ձայնի երկայնությունն ու կարճությունը, Հ. Գ. Ավետիքյանն ավելացնում է, որ այս նշանը հետագայում գրվել է նաև ու երկբարբառի վրա՝ այն վ կարդալու համար։

---

16 Ն. Ադոնց, նույն տեղում, էջ 178։

17 Հ. Մ. Ջամչյան, Գրամատիկա հայոց աշխարհաբարի, Վենետիկ, 1866, էջ 7։

Այս հարցին ավելի լուրջ է մոտեցել Հ. Ա. Այտընյանը։

Ձեռի նման բնորոշելով սուղ նշանի դերն ու նշանակությունը, այսինքն՝ որ նա ցույց է տալիս, թե վանկը սովորականից ավելի կարճ տևողություն ունի, բերում է կոնկրետ օրինակներ։ Սուղի սահմանումը տալուց և օրինակներ բերելուց հետո Հ. Ա. Այտընյանը նրա անդրադառնում է հնում եղած նրա գործածությանը և գտնում, որ այդ նշանը ավելացվել է գրաբար ուա, ուո և այլ երկբարբառների վրա, որպեսզի դրանք բուա, բուո և այլն չկարդացվեն։ Հ. Գ. Ավետիքյանը և Հ. Ա. Այտընյանը նշում են, որ այդ նշանի գործածությունը դադարեցված է և այն դրավոր խոսքից դուրս է եկել։ Սրանով դրեթե վերջանում է նախորդ շրջանի բերականների ասելիքը սուղ նշանի մասին։

Սովետական շրջանում սուղ նշանի հարցին անդրադարձել է բանասիրական գիտությունների դոկտոր Գ. Ջահուկյանը։ Քննության առնելով առոգանության նշանները մեխանիկորեն յուրացնելու հարցը, Գ. Ջահուկյանը ցույց է տալիս, որ այդ նշաններից շատերը չէին համապատասխանում հայերենի էությանն ու գործնական պահանջներին, ուստի դուրս են գալիս գործածությունից կամ փոխում են իրենց նշանակությունն ու դերը։

Սուղ նշանի գործածությանը մենք չենք հանդիպում մեզ հասած հնագույն ձեռագրերում, ընդհուպ մինչև ԺԲ դարը։ ԺԲ դարի որոշ ձեռագրերում արդեն նկատվում է այս նշանի գործածությունը, թեև ոչ համատարած ձևով։ Այս նշանի գործածությունը շարունակվել է մինչև ԺԸ դարի վերջերը և դուրս է եկել աշխարհաբարի հաղթանակից հետո միայն։ Չնայած այս փաստին, որոշ բերականներ անվերապահորեն շարունակում են այդ նշանի մասին հիշատակել իրենց գրքերում։

Ըստ ձեռագրերի տվյալների սուղը դրվել է ա. ե. ո. ի. է. ձայնավորից առաջ եղած ու ձայնավորի վրա՝ այն վ կարդալու համար, տողադարձի ժամանակ նախորդ տողում մնացած վանկի բաղաձայն տառից հետո ավելացված ր ձայնավորի վրա, ան նախդրի ա ձայնավոր տառի վրա, անկախ նրանից տողադարձ է արված, թե մի տողի վրա է գրված, բառի կարճ արտասանվող վանկի ա ձայնավոր տառի և ղ բաղաձայն տառի վրա՝ այն ղ կարդալու համար և այլն։

Թավ.— Թավը հայ քերականների սահմանմամբ համարվել է ձայնը (հնչյունը) թանձրացնող նշան։ «Թաւ, որ զրան թանձրացուցանէ ի լսելիս»,— գրում է քերական Մովսես Քերթողը։ Թավը գրչագրերում գործածվել է ավելի շատ, քան սոսկը։ Թե ե՞րբ է սկսվել թավի գործածությունը, նախորդ շրջանի քերականներից և ոչ մեկը չի հիշատակում։ Խոսելով թավի մասին, Հ. Ս. Համշյանը այն միտքն է հայտնում, թե «թաւն նշանակէր առ տրնսն զիսոշորաձայն հնչումն այնց տառից, որոց կան լծորդատառք նմանաձայնք, այլ նուրբ հնչմամբ։ Սովորութիւնն խափան էարկ այսոցիկ»[12]։

Քերականության դասագրքի մի այլ հեղինակ՝ Հ. Գ. Ավետիքյանը, կարծում է, որ թավը որպես նշան հին գրչության մեջ չի կենսագործվել, այլ միայն հիշատակվել է հին քերականների մեկնություններում։ Հ. Գ. Ավետիքյանը նշում է թավի գործածության կոնկրետ սահմանները. այդ մասին նա գրում է. «Կիրառութիւն սոցա (թավի և սոսկի— Հ. Մ.) ոչ երևի նաև ի հին գրչութիւնս, այլ ի քերականին միայն խօսին մեկնիչք, թէ սոքա պիտոյ են ոչ ի ձայնաւոր տառս այլ յանձայնս կամ ի բաղաձայնս. թաւն դնի ի վերայ գրոցս՝ փ, խ, ք, թ, լ, գ, շ, ջ, ռ...»[13]։

Հ. Գ. Ավետիքյանն այս հարցում կրկնում է Սկևռացուն, առանց որևէ նոր խոսք ասելու այս նշանի մասին։

Սակայն նույն էջում Հ. Գ. Ավետիքյանն շտապում է հայտնել, որ ԺԴ դարից սկսել են աւ-ով գրվող բառերը հնչել օ. ըստ Հ. Գ. Ավետիքյանի, գրիչները վրիպակները կանխելու համար մտածել են «ի վերայ այրիս» դնել թավ նշան, և իբրև օրինակ բերում է աւազան, յաւիտեան, հաւաւ բառերը, իսկ հաջորդ էջում ավելացնում է. «Հետնադոյնք ոմանք, զոր նորս կոչեմք, հնարեցին դնել թաւ՝ ուր իբր վն հնչելի ասես. զոր օրինակ. թիւ, թիւմ, թուց, կաթուած, զգուել»[14]։

Այս բոլորից հետո, սակայն, Հ. Գ. Ավետիքյանը շտապում է կանխել ընթերցողին, որ այդ սովորության հետևն անդամ չկա ո՛չ բերականի մեկնիչների խրատներում, ո՛չ էլ գրչագրերի մոտ, այլ այդ բոլորը «խանդարիչների գյուտն է», որը լեզվի մեջ մտել է ռամկականի «թյուր արտաբերության հետևանքով։

Ուշագրավ է, որ թավի գործածությունն այնպես, ինչպես բնորոշվում է քերականների գրքերում, չի արդարացվում մեր լեզվում, որովհետև այն չի բխում մեր լեզվի ներքին օրինաչափություններից. դրա համար էլ դուրս է ընկնում։

Քննությանն առնելով մեր վաղ շրջանի առոգանության հարցը, մեր կարծիքով, միանգամայն ճիշտ է դիտում դոկտ. Գ. Ջահուկյանը,

12 Հ. Մ. Զամշյան, նույն տեղում, էջ 240։

13 Հ. Գ. Ավետիքյան, «Քերականութիւն հայկական», Վենետիկ, 1815 թ., էջ 564։

14 Նույն տեղում, էջ 565

ներ գրում է. «Հագադի» նշանների գործածությունը հայերենում ավելորդ էր, որովհետև հայերենում ի հագադի առկայությունը, ի տարբերություն հունարենի, նշանակվում էր ոչ թե «առոգանության» նշանով, այլ հատուկ տառով։ Այդ պատճառով էլ հետագայում թարգմանության այս տեղն ըմբռնվում է այն իմաստով, որ «թավ» նշանը պետք է դրվի թավ բաղաձայնների, «սոսկ» նշանը՝ նուրբ կամ սոսկ բաղաձայնների վրա, մանավանդ որ բարբառներում այս բաղաձայնները շփոթվում էին»[15]։

Թավի գործածության մասին մանրամասն տեղեկություն է հաղորդում քերական Սկևռացին։ Ըստ Սկևռացու թավ նշանը դրվում է այսպես կոչված թավ բաղաձայնների վրա (փ, ք, խ, թ, լ, գ, շ, ռ), տոսկը՝ «լերկ» բաղաձայնների վրա (պ, կ, տ, զ, ն, ծ, ղ, մ, ս, ր)։ Իսկ ինչ վերաբերում է նրա հետագա գործածությանը, ապա դա բխում է մեր լեզվի գահտնջներից։ Այսպիսով, չնայած այս նշանը սահմանված էր դնել «թանձր» և «խոշոր» ձայների վրա, սակայն դրա կարիքը չի դդում հայերենը և, ընդհակառակը, այս նշանը գործածվում է բոլորովին այլ նպատակով։ Այս նշանի գործածությունը տվ թե «խանդարիչների» մտացածին գործն է, ինչպես փորձում է բացատրել Գ. Ավետիքյանը, այլ դրիչների գործը, որոնք ելել են մեր լեզվի կոնկրետ պահանջներից և նրա ներքին օրինաչափություններից։ Բացի այս, այդ նշանի գործածությանը հանդիպում ենք ինչպես քերականների աշխատություններում, այնպես էլ պատմական և այլ բնույթի գրչագրերում։

Հետագա շրջանում թավի գործածության սկիզբը որոշելու հարցով զբաղվել է պրոֆ. Ա. Աբրահամյանը։ Նա գտնում է, որ թավի գործածությունն սկսվել է ԺԲ դարից[16]։

Ձեռագիր վավերագրերի տվյալների համաձայն թավը գործածության մեջ է մտել ԺԱ դարից սկսած. միայն Թ—Ժ դարերի (մեր կողմից նայած) ձեռագրերում այն չի նկատվում։ Այս նշանի գործածությունը, անկանոն կերպով, շարունակվում է մինչև ԺԲ դարը, որից հետո իսպառ հանվում է գրավոր խոսքից։ Այս նշանին ծանոթանալը միայն պատմական նշանակություն ունի, նա միայն օգնում է անցյալի ձեռագրերը կարդալու և հասկանալու գործին։

Թավ նշանը դրվել է որոշ տառերի վրա՝ նրանց փաստական դրության և արտասանության միջև եղած տարբերությունը կամ նույնությունը ցույց տալու համար։ Գրաբարի վաղ շրջանում յուրաքանչյուր տառ կարդացվում էր այնպես, ինչպես գրվում էր, իսկ հետագայում փոփոխվում է այդ կարգը, և որոշ տառեր չեն կարդացվում ու հնչվում այնպես, ինչպես գրվում են։

Սրանից բխել են մի շարք թյուրիմացություններ ու սխալներ։ Այդ թյուրիմացություններն ու սխալները կանխելու համար թավը գործածվել է ավելի շատ որպես ուղղագրական նպատակ հետապնդող նշան։

Ըստ մատենագրության փաստական տվյալների թավը դրվել է ու երկբարբառի վրա, այն վ կամ ու կարդալու, աւ երկբարբառի վրա՝ ավ կարդալու, իւ երկբարբառի դեպքում իւ-ից հետո և ուա երկհնչյուններից առաջ՝ առաջինը իվ, իսկ երկրորդը վա կարդալու, եւ երկհնչյունի վրա՝ դրանք եվ կարդալու, այ և ոյ երկբարբառների վրա՝ դրանք այ և ույ կարդալու համար։

15 Գ. Ջանուկյան. նույն տեղում, էջ 96, 243։

16 Ա. Աբրահամյան. «Հայկական պալեոգրաֆիա», Երևան, 1940 թ., էջ 53։



ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏԻ «ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔ»-Ը ՌՈՒՍԵՐԵՆ.— Վերջերս Հայպետհրատը լույս ընծայեց Սմբատ սպարապետի «Դատաստանագիրք»-ը, որի հավաքական տեքստը կազմել, ռուսերեն թարգմանությունը կատարել, առաջաբանը և ծանոթագրությունները գրել է Ա. Դ. Դալստյանը։

Սմբատ սպարապետը ԺԴ դարի Կիլիկյան Հայաստանի ամենաաչքառու գործիչներից մեկն է, փիլիսոփա, պատմագիր, բանաստեղծ, թարգմանիչ, օրենսգետ, ռազմիկ և զորավար։ Գրիգոր Մագիստրոսից հետո միակ իշխանն է, որ սուրն ու գրիչը գործածել է հավասար ճարտարությամբ և սիրով։ Սմբատ սպարապետը գլխավորում էր թաթարական օգնությամբ մահմեդականների դեմ պայքարելու շարժումը։ Սմբատ սպարապետը, որպես հայ արքունիքի դեսպան, գնաց թաթարների մոտ։ Իր դեսպանության մասին Սմբատ սպարապետը գրել է «Տարեգրությունն»-ը, որը թաթարների այդ ժամանակվա պատմության տեսակետից արժեքավոր նյութեր է բովանդակում և թաթարական արշավանքների մասին ականատեսի թանկարժեք վկայություն է։

18 տարեկանին նա նշանակվում է սպարապետ Հայկական բանակին և առաջին օգնական-խորհրդատու իր թագավոր եղբայր Հեթում Ա-ին, պաշտոն, որը նա վարում է ձեռնհասությամբ և նվիրումով 50 տարի շարունակ, մինչև իր հերոսական մահը ռազմաճակատում։

Դատաստանագրքից և Տարեգրությունից բացի նրա գրչին է պատկանում նաև «Անսիզք Անտիոքայ» միջնադարյան Արևելքում գործող խաչակիրների օրինադիրքը, որի ընդարձակ կորել է, բանաստեղծություններ և այլն։

Դատաստանագիրքը գրված է ՉԺԴ (1265) թվականին, «ի չար և ի դառն ժամանակի», երբ հեղինակն արդեն ծերության դռներին էր, բայց Հայրենիքին ծառայած լինելու համար «զսիրտ բանից առեալ, եդի համառօտարար»։

Սմբատ սպարապետի Դատաստանագրքի ներկա հրատարակությունից բացի եղել են նաև պրոֆ. Կարսոի հայերեն-գերմաներեն և Արսեն եպիսկոպոս Ղլտչյանի հայերեն հրատարակությունները։ Բոլոր հրատարակությունները էլ սահմանափակվել են սոսկ բնագրի հրատարակությամբ։ Սմբատ սպարապետի գործը առավելապես հենվում է հայկական սովորութենական օրենքների վրա, դրանով էլ նա գագաթում է պարզ փոխադրություն կամ ժողովածու լինելուց և դառնում է իր ժամանակի հայկական կյանքի և մտածողության հայելին և զուտ հայկական արժեքավոր ստեղծագործություն։

Դատաստանագրքի հրատարակությունը Ա. Դ. Դալստյանի առաջաբանով և ծանոթագրություններով շնորհակալ և արժեքավոր գործ է, որը ուղեցույց կհանդիսանա հետագա ուսումնասիրությունների համար։

ՍԱՆՍԿՐԻՏԻ ԴԱՍԱԳԻՐՔ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆՈՒՄ.— Հայ-հնդկական մշակութային կապերի հնությունը փաստող մի վավերագիր է Երևանի Պետական մատենադարանում պահպանված սանսկրիտ լեզվի դասագիրքը, որը վերջերս հայտնաբերվել է գետական աշխատողների կողմից։

Դասագիրքը կազմված է ԺԲ դարի կեսերին և դեռևս մնում է ձեռագիր։ Առ այժմ չի պարզվել ձեռագրի հեղինակը։

Ձեռագիրը բացվում է հին հնդկերենի այբուբենով և նրա հայերեն տառադարձությամբ։ Ձոյայի տեղ է հատկացված ուղղագրությանը, նշված են քերականական կանոնները։ Դասագրքում մեծ տեղ է զբաղվում սանսկրիտերեն-հայերեն բառարանը, որն ամփոփում է ավելի քան 2000 բառ։

250 ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆՈՐ ԵՐԳ.— Դարերի խորքից է գալիս հայոց երգը։ Նա սկիզբ է առնում մեր ժողովրդի սրտից և ապրում նրա հետ։

Ամեն տարի Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Արվեստի ինստիտուտի և Հայաստանի Կոմպոզիտորների միության արշավախմբերը շրջագայում են Հայաստանի գյուղերը՝ հավաքելու մեր ժողովրդական երգերը և հայ հոգևոր մշակույթի գանձարանը հարստացնելու նպատակով։ Այդ երգերը ժառանգ են թողնված մեր նախնիքներից և պահվում են ժողովրդի ծոցում։

Ամեն մի դավառ ունի իր յուրօրինակությունները, որոնք վկայում են հայ ժողովրդական երաժշտության հարստության և բազմազանության մասին։

Օրերս Երևան վերադարձավ Սև ծովի ափերի հայաբնակ վայրերն ուղարկված Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Արվեստի ինստիտուտի և Կոմ-

պողիտորների միության միացյալ երաժշտական-ազգագրական արշավախումբը, որի կազմումն էին կոմպոզիտորներ Գ. Հախինյանը, Է. Խաղագործյանը, երաժշտագետ Մ. Մանուկյանը և գրող Հ. Մելոյանը։ Արշավախմբի նպատակն էր լսել և գրի առնել հայ ժողովրդական երգն ու գործիքային երաժշտությունը։ Աբխազիայում ապրող հայ բնակչությունը, որ Տբապիզոնից է գաղթել ԺԹ դարում, պահպանել է Համշենի բարբառը և ժողովրդական երաժշտական արվեստը։

Մեկ ամսվա ընթացքում արշավախումբը եղավ 8 հայկական և 2 աբխազական գյուղերում և հայ ժողովրդական երգերի այդ անբավ մթերանոցից գրի առավ 250 ժողովրդական երգ։

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՆԱՄԱԿՆԵՐՆ ՈՒ ՀՈԴՎԱԾՆԵՐԸ.— Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Գրականության և Արվեստի ինստիտուտների ֆոնդերում բանասիրական գիտությունների թեկնածու Գ. Հակոբյանը հայտնաբերել է Խաչատուր Աբովյանի գերմաներեն նոր նամակներ և հոդվածներ։ Այդ թանկարժեք ու խիստ արժեքավոր նամակները հիմնականում վերաբերում են 1834—1835 թվականներին։ Հետաքրքիր հոդված է «Գյուղական ծուխը», որտեղ Խաչատուր Աբովյանը պատմում է 19-րդ դարի 20-ական թվականների հայ գյուղացու կենցաղի մասին։ Այս հոդվածում այլևայլ տեղեկությունների շարքում ինքնակենսագրական արժեքավոր տեղեկություններ կան մեծ գրողի մանկական տարիների և Ս. Էջմիածնում սովորելու ժամանակի մասին։

Հատվածներ են հայտնաբերված Աբովյանի այն հոդվածից, որտեղ նա քննադատում է գերմանացի միսիոներ Դիտրիխի՝ լյութերականության քարոզիչներից մեկի աշխատությունները։ Հայտնաբերված է նաև արժեքավոր հոդված, որի մեջ Աբովյանը վերլուծում է հայ ժողովրդական երգը, խոսում նրա կենսունակության մասին, բարձր գնահատում այն։

ԱՐԺԵՔԱՎՈՐ ՆՎԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ.— Եգիպտոսի Կահիրե քաղաքից Երևան ժամանած Վահրամ Բրուտյանը Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Աշխարհագրական ընկերությանը նվիրեց Կասպից ծովի քարտեզը, որը տպագրված է 1668 թվականին անգլերեն և մասամբ լատիներեն անուններով։ Վերնագրի մեջ նշված է, որ այդ քարտեզը պատրաստելուն աշակցել են հայ ծովայինները։

Քարտեզի ցածի մասում խոշոր գծված է Արարատ լեռը, լեռան գագաթին նկարված է Նոյան տապանը, իսկ ստորոտին նշված է պարսպավոր բերդաքաղաք Երևանը՝ Ուրվան կամ Երևան տառադարձությամբ։

Քարտեզի վրա ուշադրության արժանի շատ գծագրություններ կան։ Գծված են մի շարք գետեր, բացի այդ Կասպից ծովը թափվող 80 գետակ։ Կան քաղաքների անուններ։ Երկրների անուններից գրված են՝ Կալմակների երկիր, Բուխարա, Մազանդարա, Գիլան։

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԻՆՈՆԿԱՐՆԵՐԻ ՖԵՍՏԻՎԱԼ.— Այս տարի մեր Հայրենիքի գրեթե բոլոր մայրաքաղաքներում անց են կացվում հայկական կինոնկարների ֆեստիվալներ։ Օգոստոս ամսին Ուկրաինայի մայրաքաղաք Կիևում անցկացվեց հայկական կինոնկարների ֆեստիվալ։ Մշակութային այդ միջոցառումը հանդիսավոր կերպով սկսվեց քաղաքի «Կիև» խոշորագույն կինոթատրոնում։ Կիևի քաղաքացիները մի ամբողջ շաբաթ էկրանների վրա դիտեցին «Անձամբ ճանաչում եմ», «Հայկական կինո-համերգ», «Սիրտը երգում է», «Առաջին սիրո երգը», «Մոր սիրտը», «Գատվի համար», «Հովազաձորի գերիները» և այլ գեղարվեստական և գոկումենտալ կինոնկարներ։

Ֆեստիվալի օրերին Հայֆիլմ կինոստուդիայի աշխատողները ծանոթացան Ուկրաինայի արվեստի և մշակույթի աշխատակիցների հետ։ Երկու ժողովուրդների եղբայրական կապը այս առթիվ մի անգամ ևս ամրապնդվեց։

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՅՈՒՐԱՆՈՑԸ.— Այս նոր հյուրանոցի շինությամբ ամբողջացվեց Երևանի Լենինի անվան հրապարակին հարող հոյակապ շենքերի խումբը։ Վերջերս շարք մտավ «Հայաստան» նոր հյուրանոցի շենքը։ Ճարտարապետական այս նոր կառույցը ներդաշնակ մի միավորն է հրապարակը բոլորող մյուս ճարտարապետական կառույցներին։ «Հայաստան» հյուրանոցի նախագծի հեղինակներն են արվեստի վաստակավոր գործիչ ճարտարապետ Մարկ Գրիգորյանը և ճարտարապետ Լ. Սարաֆյանը։ Տաղանդավոր ճարտարապետները իրենց գործակիցների հետ հարազատ մնալով հայկական ճարտարապետության ավանդություններին, կարողացել են միաժամանակ ճարտարապետական հին ձևերին հաղորդել նոր կենդանություն և բովանդակություն։ Դրանով էլ հյուրանոցի նոր շենքը եղել է թարգմանը մեր օրերի նվաճումների և ձգտումների։

Հյուրանոցը կառուցվել է հաշվի առնելով ժամանակակից ամենալայն պահանջները. կահավորումը կատարվել է Երևանի լավագույն վարպետների նուրբ ու ճաշակավոր ձևավորումով։ Մասնավոր հոգ է տարվել, որ հյուրանոցը իր կահավորմամբ լինի հանգստավետ, խոսի և՛ հոգուն և՛ աչքին։ Հյուրանոցը ունի ընդհանուր գործածության հատկացված մեծ ճաշարան, խանութ, վարսավիրանոց և կուլտուրական սպասարկման այլ բաժիններ։ Հյուրանոցի համարների ընդհանուր թիվն է 96։ Հյուրանոցի շենքը յոթհարկանի է։

Օգոստոսի 27-ին Վեհափառ Հայրապետը ցանկացավ այցելել և մոտ մեկ ժամ եղավ հյուրանոցում, դիտեց հարկաբաժինները և օրհնեց թե՛ կառուցողներին և թե՛ հյուրանոցի նոր անձնակազմին։

Հաջորդ տարի կառուցվելու են «Հայաստան» նոր հյուրանոցի երկու թևերը՝ դեպի Ամիրյան և Աբովյան փողոցների ուղղությամբ։

Ս. Ս.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Է
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը	3
Պատմական հայտարարություն	6
Դերագույն Հոգևոր Խորհրդի պատասխանը Ատրպատականի հայոց բեմական խորհրդի նամակին	7
ԻՍԱՀԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՂԱԶԱՐՅԱՆ—Խաչին կամ վիշտին բարոյական արժեքը	9
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ	13
Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի վերաբացումը	15
ՏԻՐԱՅՐ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՐՏԻՆՅԱՆ—Հովվական այցելություն ռումինահայ և բուլղարահայ բեմերին	19
Խրիմյան Հայրիկի հիշատակին սուրբ պատարագ և հանդիսություններ Հյուսիսային Ամերիկայի հայոց արևելյան բեմում	25
Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության նախագահ պր. Ալեքս Մանուկյանի բացման ուղերձը 44-րդ ընդհանուր ժողովին	28
ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱԼԱՄԴԱՐՅԱՆ—Էջեր Սուրբ Էջմիածնի տպարանի պատմությունից	30
ՍԱՆԴՐՈ ՍԱՐԿԱՎԱԳ ԲԵՀԲՈՒԴՅԱՆ— Դեղանկարիչ Մարգարիտ Ալեքսանյանց	39
ՊՐՈՖ.-ԴՈԿՏ. Լ. ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿ—Հակոբ Շահան-Ջրպետյան և նրա նորահայտ ֆրանսերեն անտիպ երկասիրությունը	42
Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ— Սանահնի վանքը	47
Հ. ՄԽԻԹԱՐՅԱՆ—Առոգանություն	54
Ս. Ս.— Համառոտ լուրեր Մայր Հայրենիքից	62

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ. ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"

Redaction of the magazine „Etchmiadzin", Etchmiadzin, Armenia, USSR

Երևան, 1958 թ.

ԼՈՒՅՍ ՏԵՍԱՎ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՆԴՅԱՆ 50-ԱՄՅԱԿԻ ԵՎ ԴԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ 3-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՏՈՐԸ, ՈՐԸ ԲՈՎԱՆԴԱԿՈՒՄ Է ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿՆԵՐԻ, ՔԱՐՈԶՆԵՐԻ, ՃԱՌԵՐԻ, ՆՇՄԱՐՆԵՐԻ ՀԱՏԸՆՏԻՐԸ ԵՎ ԼՍԵՐ ՆՐԱ ՀԵՂԻՆԱԿԱԾ ԳՐՔԵՐԻՑ:

ՀԱՏՈՐԸ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ Է, 70 ՆԵՐԴԻՐՆԵՐՈՎ, ԲԱՂԿԱՑԱԾ 404 ԷՋԻՑ:

ԼՈՒՅՍ ՏԵՍԱՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ

1959 ԹՎԱԿԱՆԻ ԳՐՊԱՆԻ ՕՐԱՑՈՒՅՑԸ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ, 256 ԷՋ: